




ԶՄԻԱԾԻՆ

1976

Դ

ՀՐԱՄԱՆԱԻ


Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱՋՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



1328 76

8940-44



ՎԵՀԱՓԱՌԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈՁԸ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ
ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
(1976 թ. ապրիլի 18)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ ամէն»:

«Քրիստոս յարեալ ի մենեղոց»:

Սուրբ Զատիկ է աչսօր, սիրելի հաւատացյալներ:

Տոնն է Քրիստոսի հարության հրաշքին: Լուսաբացն է արդարության հաղթանակին:

Ամեն գարուն, մեր արտերում բոլոր, ծաղկում է քաղցր ուրախությունը հարության ավետիսին: Այն մեծ ավետիսին, որ երկու հազար տարիներից ի վեր, իբրեւ գերագույն բարի լուր, անցնում է դարերի միջով, անցնում է սերնդից սերունդ, միշտ նույն հոգեցունց ուժականությամբ: Արդարության ծարավի, մահախուճապ բազմությունները մարդկային, հաւատ ապրելու, տեսիլքը իրենց արտերի մեջ ծրարած, հուսի լապտերները վառ պահած, ցնծությամբ են դիմավորում բարի լուրը աշխարհաստան, որ ամեն տարի բաց է անում երանության դռները բոլոր հաւատավոր արտերից ներս:

Մահվան ու չարին դեմ՝ Քրիստոսի հաղթանակով, ամեն տարի վերըստին լուսավորվում է ճանապարհը մարդկային կյանքի, մեր կյանքի, ձեր բոլորի կյանքի: Ինչպես ամեն գարուն մի հրավեր է՝ որ նոր լույսով, նոր ջերմությամբ կրկին ծլեն ու ծաղկեն դաշտերն ու հովիտները մայր բնության, այնպես էլ սուրբ Հարության ավետիսը մի ոգեղեն հրավեր է ողջլալ մարդկային աշխարհին՝ հոգեպես վերանորոգվելու, պայծառանալու և ուրախանալու՝ կյանքի ու արդարության ուժերի հաղթությամբ ընդդէմ մահվան ու չարիքի ճիւղաներին: Մահվամբ մահը հաղթելու հրաշքը՝ փրկարար պատասխանն է անհուն թվով սերունդների մեծ սպասումին: Միակ միսիթարիչ, միակ ափոսարար, միակ հզորիչ պատասխանը ամենահաղթ:

Քրիստոսի հարության խորհուրդը, մի փորձեք թափանցել մարդկային

Քույր Եկեղեցիներ



Փրկչի ՀՐԱԾԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ
ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ
ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ԾԾՈՒԹՅՈՒՆ
Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ
ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻ ՈՒ ԿՐՈՆԱԿԱՆ ԱՅԼ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԵՎ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՄԻԶԵՎ
ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂԶՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ
ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոռմեական կաթոլիկ եկեղեցու Քահանայապետ, Նորին Սրբություն
ՊՈՂՈՍ Զ ՊԱՊԻՆ (Հոռմ),
Կոստանդնուպոլսի հունաց տիեզերական Պատրիարք, Նորին Սրբություն
ԴԵՄԵՏՐԻՈՍԻՆ (Ստամբուլ),
Մոսկվայի և համայն Ռուսաստանի Պատրիարք, Նորին Սրբություն
ՊԻՄԵՆԻՆ (Մոսկվա),
Ալեքսանդրիայի և համայն Աֆրիկայի հունաց ուղղափառ եկեղեցու
Պատրիարք, Նորին Սրբություն ՆԻԿՈՂԱՅՈՍ Զ-ԻՆ
(Ալեքսանդրիա),
Երուսաղեմի հունաց ուղղափառ եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԲԵՆԵԴԻԿՏՈՍ Ա-ԻՆ (Երուսաղեմ),
Ղպտի ուղղափառ եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԱՄԲԱ ՇԵՆՈՒԴԱ Գ-ԻՆ (Ալեքսանդրիա),
Անտիոքի և համայն Արևելքի հունաց ուղղափառ եկեղեցու Պատրիարք,
Նորին Սրբություն ԷԼԻԱՍ Դ-ԻՆ (Դամասկոս),

Համայն Եթովպիայի Պատրիարք, Նորին Սրբություն

Ա.Բ.ՈՒՆԱ ԹԵՈՖԻԼՈՍԻՆ (Ադիս-Աբեբա),
Հնդկաստանի և Արևելքի մալաբար եկեղեցու կաթողիկոս, Նորին

Սրբություն ԲԱՍԻԼԻՈՍ ՄԱՐ ԹՈՄԱ ՄԱՏԹԵՈՍ Ա - ԻՆ
(Բոթայամ),

Համայն Վրաց Պատրիարք-կաթողիկոս, Նորին Սրբություն

ԴԱՎԻԹ Ե - ԻՆ (Թբիլիսի),
Ռումին օրթոդոքս եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն

ԺՈՒՍՏԻՆԻԱՆԻՆ (Բուխարեստ),
Բուլղար օրթոդոքս եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն

ՄԱՔՍԻՄԻՆ (Սոֆիա),
Անտիոքի և համայն Արևելքի հույն կաթոլիկ եկեղեցու Պատրիարք, Նորին
Սրբություն ՄԱՔՍԻՄՈՍ Ե ՀԱՔՍԻՄԻՆ (Դամասկոս),

Անտիոքի ասորի կաթոլիկ եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԻԳՆԱՏԻՈՍ ԱՆՏՈՒԱՆ ՀԱՅԵԿ Բ - ԻՆ (Բելյուրթ),

Քենթրբերիի արքեպիսկոպոս, համայն Անգլիայի եպիսկոպոսապետ և
միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն

ՅՐԵԴԵՐԻԿ ԴՈՆԱԼԴ ԿՈԳԱՆԻՆ (Լոնդոն),
Աթենքի և համայն Հելլադայի միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն

ՍԵՐԱՖԻՄԻՆ (Աթենք),
Սերբիայի և համայն Հարավսլավիայի Պատրիարք, Նորին Սրբություն

ՀԵՐՄԱՆԻՆ (Բելգրադ),
Վարշավայի և համայն Լեհաստանի միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն

ՎԱՍԻԼԻՆ (Վարշավա),
Պրագայի և համայն Չեխոսլովակիայի միտրոպոլիտ, Նորին

Գերաշնորհություն ԴՈՐՈՖԵԻՆ (Պրագա),
Հայ կաթողիկե եկեղեցու Պատրիարք, Նորին Ամենապատվություն

ԻԳՆԱՏԻՈՍ ՊԵՏՐՈՍ ԺՋ ՊԱԹԱՆՅԱՆԻՆ (Բելյուրթ),
Կիպրոսի արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն

ՄԱԿԱՐԻՈՍԻՆ (Նիկոլիա),
Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար

դոկտ. ՖԻԼԻՊ ՓՈԹԸՐԻՆ (Ժնև),
Վատիկանի պետական քարտուղար, Նորին Ամենապատվություն

Կարդինալ ԺԱՆ ՎԻԼԼՈՅԻՆ (Վատիկան),
Վիեննայի արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն

Կարդինալ ՅՐԱՆՅ ԿՅՈՆԻԳԻՆ (Վիեննա),
Փարիզի արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն

Կարդինալ ՅՐԱՆՍՈՒԱ ՄԱՐՏԻՆ (Փարիզ),
Լիոնի արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն Կարդինալ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՌԸՆԱՐԻՆ (Լիոն),
Քրիստոնեական միության քարտուղարության նախագահ, Նորին

Ամենապատվություն Կարդինալ ԺԱՆ ՎԻԼԼԵՐԱՆԴՍԻՆ (Վատիկան),
Մարսելի արքեպիսկոպոս, Գերաշնորհ

ՌՈԺԵ ԷՉԵԳԱՐԱՅԻՆ (Մարսել),
Լատվիական ՍՄՀ ավետարանական-լուսերական եկեղեցու արքեպիսկոպոս,

Նորին Գերազանցություն Յ. Պ. ՄԱՏՈՒԼԻՍԻՆ (Ռիգա),
Էստոնական ՍՄՀ ավետարանական-լուսերական եկեղեցու արքեպիսկոպոս,

Նորին Գերազանցություն ԱԼՅՐԵԴ ՏՈՐՄԻՆԳԻՆ (Տալլին),

Միջին Արևելքի հալ ավետարանական եկեղեցիների միության նախագահ,
Վերապատվելի ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՀԱՐՈՆ ՅԱՆԻՆ (Բելրոթ),
Ֆրանչիսկյան միաբանության կուստոդ

ՄՈՐԻԼԻՈ ՍԱԿԿԻՆ (Երուսաղեմ),
Խաղաղության համաքրիստոնեական կոնֆերանսի գլխավոր քարտուղար
դոկտ. ԿԱՐՈԼԻ ՏՈԹԻՆ (Պրագա),
Իրաքի պապական նվիրակ, Գերաշնորհ

ԺԱՆ ՌՅՈՒՊԻՆ (Բաղդադ),
Մխիթարյան ուխտի արքեպիսկոպոս, Գերապայծառ Հայր

ՊՈՂՈՍ վարդապետ ԱՆԱՆՅԱՆԻՆ (Վենետիկ),
Մխիթարյան ուխտի արքեպիսկոպոս, Գերապայծառ Հայր

ԳՐԻԳՈՐԻՍ վարդապետ ՄԱՆՅԱՆԻՆ (Վիեննա),
Վերապատվելի ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԵԼՎԱԾՅԱՆԻՆ (Մարսել),
Վերապատվելի ՍԵՆԵՔԵՐԻՄ ՍՅՈՒԼԱՀՅԱՆԻՆ (Նյու-Յորք),

«Քրիստոս լարեալ ի մեռելոց»

Մեծ ավետիսը մեր Տիրոջ և Փրկչի հրաշալի Հարության, մեր սրտերը
վերստին կենցնե լույս զգացումներով և սուրբ սպասումներով:

Այս ուրախ պահին, Մեր մտածումը կուղղվի դեպի Ձերդ Սրբությունը
ամենաջերմ աղոթքով որ սուրբ Հարության շնորհներով Ձեր հովվապետու-
թյան ներքո ավելի ու ավելի լուսավորվի ձեր պատմական եկեղեցվո սուրբ
առաքելությունը մեր օրերու աշխարհին մեջ, ի փառս Որդվույն Աստուծո
Հիսուսի Քրիստոսի:

Մեր մշտանորոգ մաղթանքն է նաև որ հարուցյալ Փրկչի՝ աշխարհին
թողած խաղաղության ոգին, հզորապես ճառագայթե մարդոց ու ազգություն-
ներու հոգիներեն ներս, առաջնորդելու համար զանոնք դեպի նավահան-
գիստը արդար ու համերաշխ գոյակցության, հերձանկություն բոլորին
անխտիր:

Հույժ հաճելի է Մեզի, գատկական ուրախությամբ ողջունել Ձերդ Սրբու-
թյունը եղբայրական սիրով ու մաղթել Ձեզ քաջառողջ ու արևշատ կենաց
տարիներ, Ձեր աստվածապարզ և գործոց փալյուն իրագործումներով:

ՎԱԶԳԵՆ Ա.


ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԿ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Է. Զ. ՄԻԱԾԻՆ

*
*
*

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի՝ Փրկչի հրաշափառ և սուրբ
Հարության շնորհավորական գրություններին ի պատասխան ստացվել են
բոլոր եկեղեցիների հոգևոր պետերի և կրոնական այլ համայնքների ու կազ-
մակերպությունների՝ այդ առթիվ ուղարկված ջերմագին
շնորհավորական հեռագրեր ու գրություններ, որոնցում մի անգամ ևս պալ-
ծառորեն արտահայտվում է քրիստոնեական եղբայրության ու համագոր-
ծակցության սրտագին ոգին բոլոր եկեղեցիների ու կրոնական այլ համայնք-
ների և կազմակերպությունների միջև:

Հանուն Հայոց Հայրապետի ջերմ շնորհակալություն ենք հայտնում
ստացված պատասխան շնորհավորականների համար:



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ
ԾՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ՓՐԿՉԻ ՀՐԱԾԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ
ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ
ԵԿԵՂԵՅՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՔ ԱԹՈՌՆԵՐԻՆ,
ԹԵՄԱԿԱԼ ԲՈԼՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ ԵՎ ԵԿԵՂԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

«Քրիստոս չարեա ի մեռելոց»

Մեծ ավետիսը մեր Տիրոջ և Փրկչի հրաշալի Հարության, մեր սրտերը վերստին կեցնե լուս զգացումներով և սուրբ սպասումներով:

Փրկչի Իջման նվիրական Սեղանի առաջ աղոթող ենք որ փրկարար այս ավետիսի շնորհները առատապես բաշխվին մեր ժողովուրդի բոլոր զավակներուն, որպեսզի անոնք կարող ու արժանի դառնան «որդիք լուսոյ» կոչվելու, միշտ աներեր մեր նախնյաց հավատքի վեմին վրա, միշտ հավատարիմ Հայաստանյայց մեր Մայր եկեղեցվոյն, միշտ պատրաստ՝ բարին գործելու իրենց կյանքի ճանապարհին:

Մեր մշտանորոգ մաղթանքն է նաև որ հարուցյալ Փրկչի՝ աշխարհին թողած խաղաղության ոգին, ավելի ու ավելի ճառագայթե մարդոց ու ազգություններու հոգիներեն ներս, առաջնորդելու համար զանոնք դեպի նավահանգիստը արդար ու համերաշխ գոյակցության, հերջանկություն բոլորին անխտիր:

Սուրբ Հարության ուրախությամբ, եղբայրական սիրով կողջունենք Ձեզի և Մեր ամենաբարի մաղթանքներն ու օրհնությունը կրե՛նք սուրբ

Աթոռող զինվորյալ միաբանության և համայն մեր հավատացյալ ժողովուրդին:

«Գիտեմք եթէ Քրիստոս յարուցեալ է ի մեռելոց, այսուհետև ոչ մեռանի և մահ մնա ոչ ևս տիրէ: Զի ոչ մեռան՝ մեղացն մեռաւ մի անգամ, և որ կենդանին է՝ կենդանի է Աստուծոյ: Նոյնպէս և դուք համարեսցիք զանձինս մեռեալս մեղացն, և կենդանիս Աստուծոյ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր» (Հռոմ. Զ 9—11):

Օրհնյալ է լույս Հարությունն Քրիստոսի, այժմ և հավիտյան. ամեն:

Վ Ա Զ Գ Ե Ն Ա


ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Է. ԶՄԻԱԾԻՆ

*
* *

Փրկչի հրաշափառ և սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին ամենաջերմ և հարգալից զգացմունքներով զեղուն բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ մեր նվիրապետական երեք Աթոռների գահակալներից, արտասահմանի և ներքին բոլոր թեմերի առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, օրիորդաց և երիտասարդաց զանազան կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից:





**ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ԶԱՐՈՋ
ՄԱՅՐ՝ ՏՆՃԱՐՈՒՄ՝ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌԻ ՀԱՐՈՒԹՅԱՆ
ՏՈՆԻ ԱՌԹԻՎ**

Ապրիլի 18-ին, կիրակի.—Ջատիկ. Յարութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Օրվա մեծ տոնի առթիվ վաղ առավոտվանից հավատացյալների և ուխտավորների հոծ բազմությունը լցրել էր Մայր տաճարն ու նրա շրջակայքը:

Ժամը 11-ին, զանգերի ուրախ ու տոնական դողանքի ներքո, Վեհափառ Հայրապետը, քահանայապետական շքեղ զգեստավորմամբ, Մայր Աթոռի միաբանության ուղեկցությամբ առաջնորդվում է Մայր տաճար՝ մատուցելու զատկական ս. պատարագը:

Սուրբ պատարագի երգեցողությունն սպրումով կատարում է Մայր տաճարի երգչախումբը:

Ս. Սեղանին սպասարկում են տ. Հուսիկ եպս. Սանթրոքյանը, տ. Մասիս վրդ. Գալստյանն ու տ. Թորգոմ վրդ. Մուշեղյանը և Մայր Աթոռի սարկավագաց դասը:

Ս. պատարագի եկմանն երգեցողությանն իր մասնակցությունն է բերում նաև

տաղանդավոր երգչուհի Գոհար Գաապարյանը՝ պատարագի մի քանի երգերի հուզիչ կատարումով:

Ս. պատարագին ներկա են լինում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող ֆրանսահայ հավատացյալների խումբը, որոնց թվում՝ Փարիզի «Հառաջ» թերթի խմբագիր տկն. Արիփի Միաքչյանը և ծանոթ մտավորական ու Մայր Աթոռի բարերար պրն. Կարպիս Զրբաշյանը:

Ս. պատարագին ներկա են լինում Գերագույն հոգևոր խորհրդի անդամներ՝ պրոֆ. Սարգիս Մեխքեթյանը, Հովհաննես Թովմուզյանը, Վերստուգիչ հանձնաժողովի նախագահ Եփրեմ Ալեքսանյանը, «Էջմիածին» ամսագրի խմբագիր Արթուր Հատիսյանը, Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի ընդհանուր բարտուղար Պարզև Ծախբազյանը:

Ս. պատարագին ներկա են լինում նաև ՀՍՄՀ Միմիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի

տեղակալ Անդրանիկ Հասարայանը, բանաստեղծուհի Սիրվա Կապուտիկյանը և ուրիշներ:

«Հայր մեր»-ից առաջ, ս. Զատիկի առթիվ, Վեհափառ Հայրապետը խոսում է կրոնաշունչ և հայրենասիրտ մի քարոզ, որը նույն օրը, երեկոյան ժամը 23.30-ին, ձայնասփոխում է Երևանի ռադիոկայանից:

Հայրապետական սույն քարոզը տպագրվել է «Էջմիածին» ամսագրի սույն համարում (էջ 3):

Քարոզի վերջում Վեհափառ Հայրապետը հուզմունքով անդրադառնում է՝ շուրջ մեկ տարուց ի վեր Լիբանանում տեղի ունեցող քաղաքական ցավալի իրադարձությունների թերմունքով ստեղծված տխուր և ողբերգական կացությանը, որին զոհ են գնացել և՛ մահմեդական, և՛ քրիստոնյա, և՛ հայ ազգաբնակչության ներկայացուցիչներ:

Հոգեհանգստյան արարողությունից առաջ Վեհափառ Հայրապետը, ոգեկոչելով զոհվածների հիշատակը, ասում է.

«Միջեի հավատացյալներ,

Այսօր մի բացառիկ պարագա մղում է մեր խիղճը՝ մեր քրիստոնեական և հայկական խիղճը, հոգևոր մի պարտականություն կատարել վերջին մեկ տարվա ընթացքում բազմահազար զոհված մարդկանց հիշատակը հարգելու և աղոթելու նրանց հոգիների խաղաղության և փրկության համար: Խոսքը վերաբերում է Լիբանանի զոհվածներին: Պուք գիտեք, որ այդ փոքրիկ, այդ գեղեցիկ և անցյալում շատ երջանիկ, արեւմտ ու խաղաղ երկրում վերջին մեկ տարվա ընթացքում տիրում է ներքին մի ողբերգական ծանր կացություն, իբրև հետևանք ներքին քաղաքացիական անհասկացողությունների: Ահավասիկ մեկ տարի է, ինչ կոիվներ են տեղի ունենում տարբեր հատվածների միջև, և գրեթե ամեն օր տասնյակ և հարյուրավոր մարդիկ են զոհվում: Արյունը հոսում է առատորեն և իզուր: Այնտեղ են ապրում, ինչպես քաջ գիտեք, մահեր եղբայրներն ու քույրերը, մեր ժողովրդի և մեր եկեղեցու հարազատ զավակները, Լիբանանի հայերը, Բեյրութի հայերը: Այս ողբերգական կացության առաջ, այս սրբազան պահին մենք ուզում ենք աղոթել, ա-

ղոթել՝ Լիբանանում բոլոր զոհվածների, և՛ մահմեդական, և՛ քրիստոնյա, ու հայ զոհների հոգիների խաղաղության և փրկության համար: Կամենում ենք նաև աղոթել, որ Աստված ողորմի և շուտափույթ կերպով վերահաստատվի ներքին խաղաղությունն ու համերաշխ գործակցությունը լիբանանյան բոլոր համայնքների միջև, որպեսզի այդ երկիրը վերստին շարունակի իր երջանիկ կյանքը ինչպես առաջ, և մեր ժողովրդի զավակներն էլ անվտանգ պահպանեն իրենց համայնքային կյանքը և շեն ու պայծառ պահեն իրենց աղոթքի Տենըրը, իրենց կրթական, մշակութային ազգային հաստատությունները:

Այս աղոթքով, այս մաղթանքներով, այս քարի հուշերով, այս քարի սպասումներով, սիրելի ժողովուրդ, մի անգամ ևս գոչենք.

«Փառք հրաշափառ յարութեան քո Տէր»:

Ամեն»:

Այնուհետև Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ տեղի է ունենում հոգեհանգստյան արարողություն: Վեհ ու տպավորիչ հնչում է հոգեհանգստյան հուզիչ շարականը՝ «Գթա Տէր ի հոգիս մեր նրն՝ ջեցելոց»՝ կոմպոզիտոր Ալ. Հարությունյանի դաշնավորումով:

Հայոց Հայրապետը «Հոգւոց» է արտասանում Լիբանանում զոհված անխորի բոլոր քաղաքացիների հոգիների համար:

Ս. պատարագի ավարտին Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով առաջնորդվում է Վեհարան, որտեղ Նորին Սրբությունն ընդունում է միաբանության և հավատացյալների ջերմ շնորհավորանքը՝ Բրիտոսի հրաշափառ Հարության տոնի առթիվ:

Հանում Գերագույն հոգևոր խորհրդի, Մայր Աթոռի միաբանության և բոլոր ներկաների լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթրոսյանը շնորհավորում է Հայոց Հայրապետի ջատիկը: Նորին Արքեպիսկոպոսը, խոսք առնելով, շնորհավորում է բոլոր ներկաների և Հարության տոնը և օրհնում ազգն ու եկեղեցին, ժողովուրդն ու հայրենիքը:

Ժամը 15-ին Վեհարանի սեղանատանը տրվում է զատկական ճաշկերույթ:



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՆԱՄԱԿԸ
ՎԵՆԵՏԻԿԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ ՈՒՆՏԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԱԲԲԱՀԱՅՐ ՊՈԴՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՆԱՆՅԱՆԻՆ

Ս. Ղազար—Վենետիկ

Գերաշնորհ Աբբահայր,

Քաղցր հուզումով կարդացինք Ձեր 5 ապրիլ 1976 թվակիր հեռագիրը, որով կհաստատեք ստացումը հինգ հազար ամերիկյան դոլլարի, զոր առաքել էինք Ձեզի Մայր Աթոռիս համեստ միջոցներեն, Մեր մասնակցությունը բերած ըլլալու մտածումով՝ սուրբ Ղազարի ձեր պատմական վանքին վերանորոգությանց աշխատանքներուն, հրդեհի դժբախտ պատահարեն հետո:

Հրդեհին գույժը ծանր մտահոգություն կատճառեց ոչ միայն Մեզի և Մայր Աթոռիս միաբանության, այլ տագնապեց նաև մեր հայրենաբնակ մտավորականության սրտերը: Հուզումնալի մթնոլորտ մը ստեղծված էր Երևանի մեջ, Մատենադարանեն մինչև գիտությունների ակադեմիա և համալսարան: Բոլորը անխորի, հարց կու տային մանավանդ՝ ի՞նչ եղան արդյոք՝ ձեռագիրները, Մխիթար Աբբահոր գրադարանը, հնատիպ գիրքերը և արխիվային նյութերը:

Մխիթարական էր տեսնել ու զգալ, մեր մտավորականության, Հայաստանի Ձեր եղբայրներուն սրտցալ ու գորգուրալից այս վերաբերումը դեպի մեր ժողովուրդի ազգային մշակութային գանձերը որ կգտնվին ձեր բարեխնամ պահպանության ներքո: Եվ անորոշության հուզումնալի օրերեն հետո, երբ նոր ու ճշգրիտ տեղեկություններ հասան, թե փրկված են այդ նշխարները, ինչքան նույնքան հուզիչ եղալ տեսնել ու զգալ ուրախությունը բոլորին, թեև ամենուն ցալ կպատճառեին անշուշտ մայրավանքիդ կրած այլ արժեքավոր կորուստները և նյութական վնասները: Անվարանորեն, ս. Էջմիածնեն և մայր հայրենիքեն կրնանք Ձեզի բերել վկայությունը, թե հրդեհի դժբախտ պատահարը անգամ մը ևս ցույց տվալ հայ մշակույթի արժեքներու նկատմամբ մեր մտավորականության պաշտամունքի հասնող զգացումը և ձեր Ուխտի նկատմամբ մեր ժողովուրդի գնահատանքը:

Այս բոլորով հանդերձ սակայն, Մենք կզգանք թե հրդեհի գիշերը և հաջորդող օրերուն, ի՞նչ տառապալից ու տաժանակիր պահեր անցուցիք Դուք և Ձեր ուխտապահ եղբայրները, և ինչքան լուրջ կորուստներ ու վնաս-

ներ կրեց սուրբ Ղազարը, գուցե ավելի քան երբեք անցյալի մեջ: Խոր ասարումներով կարդացինք մեր սիրելի հայր Ներսես Տեր-Ներսեսյանի հոդվածաշարքը զոր լավ մտածումը ունեցեր էիք հրատարակելու նաև առանձին գրքույկով:

Այժմ որ ավերիչ հողմը անցած է արդեն ձեր վրայեն, Մենք կմաղթենք Ձեզի և ձեր միաբանության՝ անհատնում բարի եռանդ ու անձնագործ աշխատանք, որպեսզի շուտով, շատ շուտով կարողանաք ամեն ինչ վերանորոգել ու բարեգարդել, որպեսզի ս. Ղազարը «նորոգ զարդարեալ» շարունակե շողալ ու ճառագայթել իբրև հայոց ազգային ոգեկանության հաղթական կամար, Ադրիականի խաղաղ ափերուն, վեներտիկյան հրաշալիքներուն կողքին:

Վստահ ենք թե ձեր Ուխտին հատուկ՝ աննկուն կամքով ու եռանդուն աշխատանքով, այլև բարոյական ու նյութական օժանդակությամբ մեր ժողովուրդի հարազատ գտնականներուն, Դուք սխիտ կարողանաք կենսագործել վերակառուցման ու բարեզարդման առաջադրանքները, մանավանդ իբրև երախտագիտության ու հարգանքի սուրբ ձեր Ուխտի հիմնադիր՝ լուսաբնակ Մխիթար Աբբահոր հիշատակին, որուն երեքհարյուրամյա հոբելյանը կպատրաստվիք տոնել:

Այս խոհերով ու մաղթանքներով Մենք սրտանց կողջունենք զՁեզ և կաղոթենք որ Աստուծո ողորմությամբ միշտ անասասն ու միշտ շեն ու պալծառ մնա ձեր աղոթքի ու աշխատանքի նվիրական Տունը:

«Աստուած յուսոյ լի արասցէ զձեզ ամենայն խնդրութեամբ և խաղաղութեամբ, առաւելով ձեզ յուսով՝ զօրութեամբ Հոգւոյն սրբոյ» (Հոմ. ԺԵ 13):

Ձեզմե բարի լուրեր սպասող և Մեր աղոթքներուն մեջ Ձեզ հիշող, եղբայրական սիրով ի Քրիստոս Փրկիչ մեր՝

ՎԱԶԳԵՆ Ա.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Մայր Աթոռ ս. Էջմիածին,

21-ը ապրիլի 1976 թ.





ԾՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՈՒՍՏՅԱՆ

(Պատրիարք հայոց Կ. Պոլսոյ)

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ ԱՎԱԳ ԾԱԲԱԹՎԱՆ ՎՐԱ

Ավագ շաբաթը Հիսուսի կյանքին կարելիորագույն շրջանն է: Մինչ ավետարանիչները մեր Փրկչին երեք տարիներու գործունեության և քարոզության կհասկացնեն իրենց գրքերուն գրեթե երկու-երրորդը, անդին Հիսուսի կյանքի վերջին յոթնյակին կվերապահեն իրենց գրքերուն գրեթե մեկ-երրորդը: Որովհետև Ավագ շաբաթը իր մեջ կհամադրե Հիսուսի կյանքի վերջին ութ օրերու կարևորագույն խոսքերը, գործերը և տնօրինությունները:

Սրտահույզ այս դրվագներու ընդմեջեն կհայտնվի Աստված իր անհուն սերովը, իսկ մարդը՝ իր անահման չարությամբը: Ոչ մեկ ատեն Աստված ու մարդը այնքան սերտորեն ու այնքան դրական ու ժխտական դիրքավորումներով իրարու դեմ հանդիման եկած են, որքան Հիսուսի կյանքին այս վերջին օրերուն, երբ Աստված կհայտնվի մարդկային սովորական չափանիշներէ վեր ու տարբեր գործելու իր տնօրինություններով. իսկ մարդը՝ ամեն հովին—լավ կամ վատ—իր առագաստը բանալու հեղհեղուկ տրամադրությամբը: Վերջապես այս օրերուն Աստված կհայտնվի մարդերու փրկության համար չարչարվելու իր անըմբռնելի խորհուրդը. իսկ մարդը՝ աստվածա-

չարչար դառնալու իր անսրբագրելի հիմարությամբը: Որքան՝ Աստուծո անհուն սիրուն և խորագույն խորհուրդներու հայտնության շաբաթն է Հիսուսի կյանքին վերջին յոթնյակը:

Չարչարանքի և Չարության շաբաթը:

Հաղթանակի և Հարության շաբաթը:

*
*
*

Եկեղեցական ու տոնացուցական տեսակետէ դիտված՝ հասմեսատար կարճ շրջան մըն է Ավագ շաբաթը տարվան 365 կամ 366 օրերու մեջ. սակայն իր կրոնական տարողությամբ տարվան կարևորագույն յոթնյակն է համայն քրիստոնեության համար:

Արևմտյան քրիստոնյաները գալն կկոչեն «Սուրբ շաբաթ». իսկ արևելյաններ՝ «Ավագ շաբաթ»: Իրականության մեջ ան երկուքն ալ է: ՍՈՒՐԲ է, որովհետև տարբեր է տարվան մյուս շաբաթներէն, և սուրբ տնօրինություններ կկատարվին անոր մեջ: ԱՎԱԳ է, որովհետև մեծ տարողությամբ խոսքեր, դեպքեր և խորհուրդներ տեղի կունենան իր մեջ: Ինչպես շատ մը ուրիշ պարագաներուն՝ այնպես ալ այստեղ, Արևելք և Արևմ-

մուտք գիրար կրթացնեն և ոչ թե իրարու կհակասեն:

Ավագ յոթնյակի տոնակատարությանց օրերուն՝ եկեղեցին ոչ միայն կհիշատակեն Հիսուսի վերջին տնօրհնությունները աստվածաշնչական ընդարձակ ընթերցվածներով և շարականներու սրտաշարժ մեղեդիներով, այլ նաև երբեմն կվերարտարեն գառնեք սրբազան ՏՄԱՄԱյի մը արտաուշ ձևին տակ: Ամբողջ շաբաթ մը, հաճախ ևս ի ևս ընթացող շարժանկարի մը վերիվայրումներով, կտրվի պատեհությունը հավատացյալին սերտորեն հետևելու իր Փրկչի կյանքի վերջին խորհուրդներուն, ապրելու համար անոր հետ հուզումի, վիշտի և ուրախության պահեր:

Ավագ շաբթվան տոնակատարության հասարակաց երևույթը աստվածաշնչական ընթերցվածներուն ճոխությունն է: Հատուկ միտում կա, կարծես, տոնացույցը կազմողներուն կողմն, որչափ կարելի է երկար պահել հավատացյալը եկեղեցիին մեջ, լեցնելու համար անոր միտքը ս. գրական գրեթե անհատմամբ ընթերցվածներով, որոնք կա՛մ այն օր պատահած դեպքերու մասին են, կա՛մ մույն օրը Հիսուսի կողմն խտված բարոզներ, առակներ ու հրաժեշտի մտերիմ գրույցներ են, և կա՛մ օրվան խորհուրդին հետ հետևեն ու մտեն առնչություն ունեցող Հիմ կտակարանն վերցված կտորներ են:

Յոթնյակը կսկսի հաղթանակով և կապարտի հաղթանակով: Միջանկյալ մասը կյանքն է, իր եկեղեցիներով և վերիվայրումներով, իր գուպարներով և գայթակներով, ուրախության պոթոկումներով լուսավոր և տառապանքի հառաչներով վիրավոր: Քիչ անգամ մարդկության հոգիի հակադիր հակումները այնքան շեշտորեն իրարու կհաջորդեն ու իրարու կբախին, որքան՝ այս օրերուն:

Համամարդկային տարողությամբ ծանրաբեռն շաբաթ մըն է Ավագ յոթնյակը:

Ծաղկազարդ

Ավագ շաբաթի վարագույրը կբացվի ժողովրդային ազնիվ տրամաբանություններու սխարայի պոթոկումով մը: Ընկերային կյանքի գրեթե բոլոր երևույթները ներկա են պատեղ. ուրախություն, երգ, հանդես մեն կողմեն, ու լաց, նախանձ և ընկերային տարբեր ըմբռնումներու բախումներ մյուս կողմեն:

Օրվան շքեղ այս անունը հատուկ է մեզի միայն: Հայ ժողովուրդի այն դիպուկ հորինումներեն՝ որ իրը և անունը գիրար կգրեն երջանիկ հարազատությամբ: Մյուս

քրիստոնյաներ գայն կկոչեն «Արմավինյաց կիրակի»: Իսկ անոր տոնացուցական պաշտոնական հորջորջումն է մեր մեջ՝ «Գալուստ Բրիստոսի Աստուծոյ մերոյ յառանգաւ յերուսաղէմ»: «ԾԱՂԿԱԶԱՌԴ» տիտղոսը մեր ժողովուրդին գլուխն է, հոգ չէ թե հին բնապաշտական տոնի մը անունը եղած ըլլա այդ, և կա՛մ հատկապես հորինված՝ այս տոնին համար: Կարևոր այն երջանիկ մեկտեղումն է որ պատահած է անունին և ավետարանական ծանոթ դրվագին միջև: Եկեղեցին ալ տեսնելով այս իմաստայից զուգադիպությունը պաշտոնապես որդեգրած է գայն, ինչպես ըրած է Տյառնընդատաշի, Չատիկի և Վարդավաթի պարագաներուն, որոնք ևս ժողովրդային անվանադրություններ են իրենց ներկայացուցած տոներուն համար:

Մեր ժողովուրդը սերտ ամանություն մը նշարած է Հիսուսի երուսաղեմ հաղթական մուտքին և զարնան բնութենեն ներս հաղթական ծավալումին միջև: Արդարև այս տոնակատարության օրերուն բնության գրեթե հանկարծակի պոթոկալը ծաղիկներու երգող երանգներով, ու ծառերուն փառավորվիլը ծաղկյա պաշտառ պատմունքներով, տված է պատկերը հայ ժողովուրդին կոչելու համար Հիսուսի փառավորության տոնը ԾԱՂԿԱԶԱՌԴ:

Իրավամբ Հիսուսի երուսաղեմ հաղթական մուտքը Անոր մեծության ծաղկումն է: Անոր աստվածային հեղինակության պարտոված կոկոնին բացվիլն է: Անոր ցարդ անտեսանելի մնացած փառքին ճառագայթումն է:

Հիսուս միշտ խուսափած է սովորական փառքի ցույցերեն, պարզ այն պատճառով որ ինք «Փառաց Տերն» էր արդեն կա՛մ «Փառաց Թագավորը», սաղմոսի ծանոթ սրբաասցությամբ, զոր կյանք ամեն ս. պատարագի Վերաբերումին: Իսկապես փառքը Հիսուսի մեջն էր, և ինք Աստուծո փառքին արտացոլումն էր: Մեկը որ հարազատ ադամանդներ ունի իր գանձատուփին մեջ, կեղծ ադամանդներով չի հետաքրքրվիր: Բաց աղանձ Հիսուս այնքան լարված ու տարված էր կյանքի հիմնական և հավիտենական հարցերով, որ ժամանակ ու ախորժակ չուներ կյանքի հասարակ պապղուն երևույթներու առջև կանգ առնելու:

Սովորական փառասիրության մասին կստանան միայն անունը, որ զուրկ են իրական փառքը արտադրող ազդակներն: Մարդիկ, որոնք դատարկ մնացած են խոր իրագործումներե և ոգեղեն ներքին ապրումներե, պետք կզգան այդ դատարկությունը լեցնել արտաքին փայլով և ցուցանքով: Արտաքին փառքով տարվող մարդը ապա-

ցույցը տված կրլա իր ներքին բուսիկության և պարագայության:

Հիսուս հետևողական դատապարտող մըն էր ցուցանքի: Մարդկության պարզաժամ իր Նոր Սահմանադրության—Լեւան Բարոգին—հիմնական հատկանիշներեն մեկը կկազմէ այս: Սպառնալիք Հիսուս այնտեղ. «Զգուշ եղէք բարիք ընելու առնէն. չըլլա որ ցույցի համար ընէք: Ողորմություն տալու առնէն փող մի հնչեցներ քու առջևդ, ինչպէս կեղծավորները կընեն, հավաքավայրերու և հրապարակներու վրա, որպէսզի մարդոցմէ փառավորվի...»:

Եթէ մարդ իրական ու հարազատ փառք ունի, հոգ չէ թէ այդ ըլլա պոսիկ աստղի մը համեատ պալազումը, կամ մեծ աստղի մը պայծառ պապիւմը, կնշմարվի արդեն աչք ունեցողներու կողմէ: Իսկ սև ակնոց գործածողներ չեն կրնար հանդուրժել լուսի պայծառություն. կոյրերն ալ արդեն չեն տեսներ. հետևաբար այլևս անհիմատ կդառնա այս կարգի մարդոց երևնալու մարմաջներ սնուցանելը: Փառք ըսվածը իրական մեծության մը շուքն է. բարության՝ փայլը. առաքինության՝ ճառագայթը: Եես կրնար չնշմարել պատարագի սեղանին վրա այրող մոմը: Հիսուս հարազատ փառքի սահմանվածներուն ուղղելով խոսքը կըսէ. «Դուք աշխարհի լույսն եք... թող ձեր լույսը այնպէս ճառագայթէ մարդոց առջև, որ անոնք տեսնելով ձեր բարի գործերը փառավորեն ձեր երկնավոր Հայրը» և ոչ թէ ձեզ (Մատթ. Է 14—16):

Իսկ իրեն համար ըսած էր Հիսուս առիթով մը. «Ես մարդոցմէ փառք չեմ փնտրեր» (Հովհ. Ե 41):

Հակառակ այս բոլորին, ասկայն, Հիսուս իր կյանքին մէջ առնվազն երկիցս ոչ միայն թույլ տվալ, այլ, ապաւեն առած, մինչև իսկ ինք տնօրինեց որ փառավորվի նաև արտաքնապէս և տեսանելի կերպով: Ինչո՞ւ երևութական այս հակասությունը:

Կանխէնք ըսել, որ այս երկու պարագաներն ալ ուրիշներու օգտին համար արտոնվեցան. ավելի շիտակ իր որոշ և կարևոր մեկ ուսուցումը գործնականորեն ևս հաստատելու համար եղան: Փառավորման այս երկու երևութները կրնանք կոչել «սպրված կամ գործադրված առակներ». որովհետև իրենց նպատակով նույն են առակներու հետապնդած նպատակին հետ. այսինքն ծածկլալ կամ վերացական ճշմարտություն մը արտահայտել հորինված պատմությամբ մը կամ կյանքէ առնված իրական դրվագով մը:

Հիսուսի կյանքին հետ առնչություն ունեցող այս առակավոր դրվագներն կարելի է նկատել, օրինակ, իր մկրտությունը: Հիսուս

պետք չունէր մկրտվելու, քանի որ մեղավոր մը չէր. ասկայն մկրտվեցալ պարզապէս օրինակ հանդիսանալու համար իր հետեւորդներուն, և շեշտելու համար անհրաժեշտությունը մկրտության: Առաջքը ստան եղալ ապագային ոմանց այն հավանական առաքելության, թէ քանի որ Հիսուս չմկրտվեցալ, մենք ալ անհրաժեշտ չենք տեսներ մկրտությունը: Հիսուս աշակերտներուն ոտքերը վազ, ոչ թէ որովհետև անոնք պետք ունեին վազում, այլ անոնց ստրվեցնելու համար ծանոթ դասը: Հիսուս թզենի մը չորցուց, գործնականապէս նախ հաստատելու համար հավատքի գործությունը, և ապա՝ ստրվեցնելու համար այն ճշմարտությունը, թէ բարի պտուղ տալու սահմանված մարդը, եթէ տերեւներով միայն զարդարված մնա, դատապարտված է չորնալու: Նման է նաև նպատակը վերև աննարկված երկու փառավորումներուն, որոնցմէ մեկը տեղի ունեցալ լեռան մը մեծության մէջ, ի ներկայության իր աշակերտներէն միայն երեքին. իսկ երկրորդը բեմադրվեցալ Երուսաղէմի շրջանակին մէջ, ամենքի աչքին առջև: Ի՞նչ էր նպատակը այս վերջին բեմադրության:

Դռնբացել

Ծաղկազարդի երեկոյին կատարված ԴԻՆԱՄԻՅԵԲԸ արտացոլումն է առակալույսն տոնախմբության՝ մեր հոգևոր աշխարհին ներս: Երկուքն ալ մուտքի արարողություններ են: Մեկը կնիշատակէ Հիսուսի հաղթական մուտքը ի քաղաք Երուսաղէմ. իսկ մյուսը կպատկերացնէ մեր խորհրդանշական մուտքը ի վերին Երուսաղէմ: Մեկը ընդելուզված է օվսանաններու գովերգությամբ, իսկ մյուսը՝ «բաց մեզ Տէր գորուն ողորմութեան» աղաչական ողբերգությամբ:

Հին առնէն այս արարողությունը կկատարվեր եկեղեցին դուրս, ավազ դռան առջև: Ասկայն եղանակի խստությունները և այլազգիներու պատճառած տաղտուկները պարտադրած են, որ արարողությունը ապատանի եկեղեցին ներս և իր մնայուն տեղը գրաւէ եկեղեցիի բեմին վրա:

Երուսաղէմի հալոց ու Հակոբա տաճարին մէջ հատկապէս՝ Դռնբացելը կկատարվի բացառիկ հանդիսությամբ: Կվարագորվին ոչ միայն Ավագ և քովմոսի խորանները, այլ նաև բոլոր պատկերները: Ու բազմաթիվ են ու Հակոբա տաճարի պատկերները և սեղանները: Յուրաքանչյուր ուխտավոր, փոխան նվիրատվության մը, պատրաստ կեցած է պատկերի մը կամ սեղանի մը առջև, վարագոյթի չվանը ձեռքին և կպասէ վերջին շարականի սկսելուն, որպէսզի բաճախ վարագոյթը, ստեղծելով արդարև հոգե-



1328-76

վոր ուրախության մթնոլորտ մը տաճարեն ներս:

Սրբազան տրամա մըն է Դոնքացեքը, օծոված հին սրբազան տրամաններու բոլոր տարրերովը: Կան այնտեղ եղգասացություն, պաշտամունք, «Քորո», և վերջապես՝ «տիպալո», այսինքն խոսակցություն երկու հոգիի միջև:

Տրամայի նախերգանքը կբաղկանա սաղմունս և շարականն մը: Սաղմոսին (ճմէ) առաջին և վերջին՝ ինչպես նաև միջին տողերը կուտան բանալիները տրամային: Երեք հիմնական այդ տողերեն առաջինն է:

«Ստատովան եղերոք Տեանն, զի բարի է, զի յախտեան է ողորմութիւն Նորա»:

Աստուծո ՔԱՐՈՒԹՅՈՒՆԸ և ՈՂՈՐՄԱ-ԾՈՒԹՅՈՒՆԸ հիմունքը կկազմեն ամբողջ տրամային:

«Զի բարի է, զի յախտեան է ողորմութիւն Նորա» նախադասությունը կկրկնվի իրեն հանգերգ նաև հաջորդող երեք տողերուն մէջ: Մենք դոճբաց կկատարենք որովհետև կհամարաւոր արդարեւ որ բարի է Աստված և Անոր ողորմությունը անսահման է: Այնպէս անհիմաստ պիտի ըլլար ամբողջ արարողությունը:

Բարությունը Աստուծո հիմնական և եզակի հատկանիշն է: Բարի տիտղոսը Քրիստոս չուզեր որ գործածվի միեւն իսկ իրեն համար, որ իրականության մէջ մարմնացուն էր բարության:

Բարեմիտ և պատկերաստական երիտասարդ իշխանաւոր մը օրին մեկը Հիսուսը «բարի վարդապետ» կոչած էր: Հիսուս պատասխանած էր անոր. «Ոչ որ բարի է Աստուծոն գառ»: Բոլոր մյուս բարությանց, գտնվին անոնք մարդոց կամ բնության մէջ, աղբյուրը Աստված է: Աստված մշտաբարի ակ է բարության, յուս հոսող և շերմություն բաշխող արեգակին պէս:

Աստուծո բոլոր գործերը բարի են, ինչպէս կհաստատուի Աստվածաշունչի առաջին խօսքուն մէջ: Աստված կստեղծէ յուրա, և կտեսնէ որ «բարի է», կստեղծվին երկինք ու երկիրը և անոնց բոլոր զարդերը և ահա «ստի են»: Կստեղծվին բույսեր, թռչուններ, սողուններ, ձուկեր ու չորքոտաններ և վերջապէս մարդը, բոլորն ալ «բարի են»: Հայապ ուրեմ՝ բոսավ չար, որ այնքան՝ ու երբեմն ակելի՝ շոշափելի է մեր կյանքին մէջ, որքան՝ բարին: Հարց մոն է սակիս որ կրնա մեզ շեղեցնել մեր նուրբէն, և շատ հեռուները տանի: Մայստի միայն այս առթիվ րսենք, որ Դոնքացեքը կկատարվի մարդիկը չարիքեն փրկելու համար:

Սաղմոսի միջին բանալին նախադասու-

«Ի նեղութեան իմում ես առ Տէր կարգացի, և Նա լուս ինձ յանդորր»:

Ու այս գաղափարը այլապէս ձևերով կվերկի հաջորդող ուր տողերուն մէջ: Մարդը բարոյական նեղության մատնված է, պաշարված է ֆիզիքական ու բարոյական թշնամիներէ: Ասոնցմէ ազատվի կուզէ: Թեման է սակիս ամբողջ տրամային: Նեղությունը կամ ֆիզիքական ու բարոյական չարիքը ամեն մարդու բաժինն է. չկա մարդ որ գերծ ըլլա անոնցմէ: Հաշիշ գործածելը արմատախիլ չըներ զայն, այլ մարդը կենտե զգայազուրկ վիճակի մէջ, որուն անցնելն հետո ավելի ուժգին կզգա անոր դաժնությունը և տալտուկը: Ստոյիկականությունը, քաշաքար կենալ ու կրելը, տառապանքի և նեղության դիմանալը, դարման չէ անոր: Էսկանը, փնտրվածը, անդորրություն գրտնելն է: Հոգեվիճակ՝ զոր կրնանք ունենալ ոչ թե տառապանքն կամ նեղութենէն ազատվելով, այլ՝ անոր խաթոցեն ու կակիծեն: Սաղմոսեղգուն զայն կգտնէ «առ Տէր կարդալուն» մէջ. այսինքն Աստուծո աղաղակելով և իր նեղությունը Անոր առջև դնելով՝ Անկէ ստացած իր անդորր հոգեվիճակի մէջ: Անկէ հետո հաջորդ տողերուն մէջ կրնա ըսել այլևս հանդարտորեն.

«Երբ Տէրը օգնականս է, այլևս երբեք չեմ վախմար. ի՞նչ կրնա ընել ինձի մարդը: Բոլոր ազգեր (ամեն տեսակ նեղություններ) զիս պաշարեցին. սակայն Տիրոջ անունով վանեցի զանոնք (Բոլոր նեղությունները և տառապանքները):»

Զիս շրջապատեցին մեղուներու պէս, վառեցան, բորբոքեցան, այնպէս՝ ինչպէս: փուշերը կրակին մէջ. ու ես Տիրոջ անունով մերծեցի զանոնք:

Տերը իմ գործություն և օգնությունն է. Ան իմ փրկությանս պատճառը եղալ:

Ցնծության ձայներ պիտի գան արդարներու տուններն, որովհետև փրկված են անոնք:

Թեև Տերը ամեն մը արտոնեց որ նեղություններ վրա խոսեն, և անոնցմով իրատեց զիս, բայց մահվան չմատնեց:

Ու սաղմոսին վերջին տողը կուգա կնքել վերև ըսվածները և բանալ ճանապարհը արարողության հետապնդած կերտնական հպատակին. այսինքն արդարացած հոգվով մտնել հալիտնականության երանական հարկերն են:

«Բացեք ինձի արդարներուն վերապահված դռները, մտնեմ անկէ և խոստովանիմ ու հալոարարեմ Տիրոջ բարությունը և ողորմությունը»:

Սաղմոսին կհաջորդէ «քորո»-ն, այսինքն խմբովին երգված շարական մը. **«Ընորհես**

մեզ Տեր արթնություն բնդ իմաստուն կուսանացն»։ Անողջությամբ հոգինված է տաք կույտերու և այլ համանման ավետարանական առակներու իմաստին վրա, որպեսզի «պայծառանան մեր հոգիներուն լապտերները, և բազմից երկինքի արքայության կոչուներին, հրավիրյալներուն հետ»։

Կհաջորդէ տրամաչի երկու գլխավոր դեպքատարներուն «տիպոլը»՝ երկկողմանի խոսակցությունը։ Անոնցմէ մեկը առաջնորդըն ու խոսնակն է ժողովուրդին, որ կուզէ «արդարության հարկերեն» ներս մտնել։ Իսկ մյուսը Աստուծո խոսնակն է, որ կարծես մուտքի օրհնավոր տոմսակ կպահանջէ։ Առաջինը «աղիողորմ ձայնով» կմենեբգէ. «Բաց մեզ Տեր»-ը։ Թե՛ն այս երգը և եղանակը մեր հոգևոր ու աշխարհիկ երգերուն ամենեն լայահատաչներեն է, բայց անոր մեջեն հանված է հուսահատության խավարը և տեղը դրված է հույսի և վստահության արևը, արցունքի կաթիլին մեջ դրված ծիածանին պէս։ Բաւերը և եղանակը լավ գտած են գիրար. մարդուն մեղսամած և տառապագին հոգեւիճակը, և երգով հետապնդված նպատակը—փրկությունը—իրել ծխախլան ու դրական էլեկտրական երկու բևեռները, զուգահեռ կրնթանան, արտադրելու համար հոգեկան անդորրության պայծառ լույսը։

Ազգովս չերկի կարծես ներսի Աստուծո խոսնակը «Բաց մեզ Տեր»-ի «աղիողորմ ձայն»-են, և անոր գրեթէ հակադիր չորությամբ կըսէ. «Ո՛վ են անոնք, որ բանամ. որովհետև ասիկա Տիրոջ դուռն է, և (միայն) արդարներուն վերահսկման է ասկէ մտնելը»։

Դուրսինը նույն բաղորդությամբ, նույն հավատքով և հարատևությամբ կշարունակեն և մինչև իսկ կարբագրէ Աստուծո խոսնակին մերժողական երանգ ունեցող պատասխանը բւեղով.

«Ո՛չ միայն արդարներ, այլ նաև մեղավորներ ալ կընան մտնել անկէ, խոստովանելէ, ապաշխարելէ և արդարանալէ հետո»։ Աստվածային խոսնակը կիջեն կարծես բչիկ մը իր պատգամավորի բարձրութենէն և կմենէ բացատրողի դերին մեջ. «Եսալ չհամարվիր մեզք բնդ ուղեցիկը»-ի իմաստ տալով իր խոսքին. թե՛ այն դուռը գորկրախէք արդարն «երկինքի դուռն է, որ տրտմության հովիտեն կբացվի աչ վայրին վրա, որ Աստված շնորհած է Ձեզի։ Այս տեղը արդարներուն հանգստյան վայրն է, մեղավորներուն բավարանը, Քրիստոսի արբայարանը, հրեշտակաց բնակարանը, սուրբերու հավաքարանը, ապավենի տեղը և Աստուծո տունը»։

Ժողովուրդի խոսնակը սիրտ առած է իր

շահած առաջին կետեն, և կշարունակէ ավելի ինքնավաստահ. «Ստույգ և ճշմարիտ են բաւժներդ, որոնք կակնարկեն մեր սուրբ եկեղեցիին, բանգի ասիկա մեր անարատ մայրն է. և անկէ ծնած ենք իբրև լույսի և ճշմարտության որդիներ. ասիկա մեզի համար կյանքի հույսն է, անով կգտնենք մեր հոգիներուն փրկությունը, և ան է մեզի համար արդարության ճանապարհը, և անով կբարձրանանք Քրիստոսի և մեր երկնավոր Հոր»։

«Քորո»-ն կմիջամտէ դարձյալ 10 կույտերու և ապաշխարանքի թեմայի վրա հորինված գեղեցիկ ուրիշ շարականով մը, որուն վերջավորության խոմբը կաղաղակէ. «հարսանեկան ուրախության կուզենք մասնակից դառնալ ամանա փեսային հետ, վստահ լապտերներով»։

Կսկսի երկրորդ գործողությունը «Բաց մեզ Տեր»-ին։ Աստուծո խոսնակը ներսեն կհայտարարէ.

«Ահա կտեսնենք մեր Տերը, Քրիստոսը, որ բազմած է Սեղանին վրա և իրեն կկանչէ իր կամբը կատարողները, բւեղով. «Ուր որ են եմ, այնտեղ պիտի ըլլա նաև ինձի հետևողը»։

Ժողովուրդի խոսնակը կըրացնէ գաղափարը, հատաստելով. «Աստուծո Որովույն անապական արյունով գնված ենք ամենքս ալ. ուստի ցնծությամբ կօրհնենք մեր ազատարար Քրիստոսը, և կըսենք բոլորս միատեղ. «Փառք Քու անավոր գալուստիդ, Տեր»։ Ժողովուրդը երգով կընդլայնէ Քրիստոսի գալուստյան ապաստմի գաղափարը ու կեզրակացնէ. «Զըլլա ու դուրս մնանք իրենց լապտերները մարած հինգ կույտերու պէս»։

Կհաջորդէ երրորդ գործողությունը «Բաց մեզ Տեր»-ի։ Երկինքի խոսնակը հանդիսավոր տոնով կձայնէ. «Աստուծո անավոր փողի անագին ձայնով կոչէ բւեղով. անա փեսան կուզա, ելէք դիմավորեցե՛ք գԱյն»։

Ու ժողովուրդի առաջնորդը իր խնդրանքը բնդունված մարդու խաղաղ երանկությամբ կըսէ. «Ահա վասիկ ես ու գալակներս, զորս Աստված տված է ինձի. կեցած ենք ամենքս ալ, և կպատենք Քրիստոսի տեսության արժանանալու և լսելու համար Անոր երանավետ ձայնը»։

Աստուծո խոսնակը նույն հանդիսավորությամբ կհայտարարէ վերջին պատգամը. «Արարիչ Աստուծո ձայնը կըսէ. «Եկե՛ք Հորս օրհնածները, ժառանգեցե՛ք ձեզի համար աշխարհի սկիզբեն ի վեր պատրաստված արքայությունը»։

Ժողովուրդի երկրպագուիչը կըրկնէ նախերգանք սաղմոսին վերջին տունը. «Բացե՛ք ինձի արդարության դուռը և մտնե՛մ


անկե, և խոստովանիմ ու հոչակեմ Աստուծո բարությունը և ողորմությունը»:


Կրացվեին այս կետին ի հնումն եկեղեցվո դռները և դուրսը սպասող ժողովուրդը խոտներամ կմտներ եկեղեցի «հոգևոր ուրախությամբ»: Իսկ ներկայիս կրացվին վալիտենական հարկերու դռներուն ու կապարի ժողովուրդին երգը. «Զողորմության քո գոյուն բաց մեզ, Տէր, և արժանի արա զմեզ լուսեղէն յարկաց քոց ընդ սուրբս քո»: Հաղթանակած է Աստուծո ողորմությունը: Ու Ավետարանի օրվան ընթերցվածը կու-

գա դնել իր կնիքը, աշխարհի կատարածից և դատաստանի օրվան մեծ խորհուրդով լեցուն այս սրբազան արարողության վրա:

«Հիսուս կաղաղակեր ու կրքեր. Ով որ ինձի կհավատա, միայն ինձի չէ որ կհավատա, այլ նաև Անոր, որ զիս դրկեց: Եվ ով որ զիս կտեսնէ, կտեսնէ նաև զԱյն, որ զիս դրկեց: Ես աշխարհ եկա իբրև անոր լույսը, որպեսզի ով որ ինձի հավատա, խավարին մեջ չմնա»:

(«Ավագ շաբաթ», Բեյրութ, 1974, էջ 3—4, 5—7, 21—25)





ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱՏԱՇՐՋԱՆՆ
ԱՄՆ-ՈՒՄ

Սույն թվականի ապրիլի 5—8-ը Նյու-Վինդսորի (ԱՄՆ, Մերիլենդ) եղբայրության եկեղեցու կենտրոնում կապացավ Խաղաղության քրիստոնեական կոնֆերանսի Աշխատանքային կոմիտեի նստաշրջանը՝ Արևելյան Եվրոպայի հետ հարաբերության ամերիկյան քրիստոնեական ընկերակցության հրավերով։ Նստաշրջանի գլխավոր թեման էր՝ «Քրիստոնեականների բարոյական պարտավորությունները զինաթափման գործում»։

Նստաշրջանը բացվեց Խաղաղության քրիստոնեական կոնֆերանսի նախագահ, Լենինգրադի և Նովոբոռոյի միտրոպոլիտ տ. Նիկոլոիս արքեպիսկոպոսի ներածական խոսքով։ Ներկա էին տարբեր մայրցամաքների 18 երկրների՝ Սովետական Միության, Բուլղարիայի, Ռումինիայի, Չեխոսլովակիայի, Հունգարիայի, Լեհաստանի, Դեմոկրատական և Ֆեդերատիվ Գերմանիաների, Հոլանդիայի, Ծվեցարիայի, Ֆինլանդիայի, Ամերիկայի Միացյալ Նահանգների, Կանադայի, Չիլիի, Հնդկաստանի, Թրի Լանկայի, Եթովպիայի, Սիեռա Լեոնեի եկեղեցիների 77 ներկայացուցիչներ, հյուրեր և լրագրողներ։ Մայր Աթոռի կողմից նստաշրջանին մասնակցում էր Գերագույն հոգևոր խորհրդի անդամ Հովհ.

Թովուզյանը՝ որպես վերոհիշյալ կազմակերպության Միջազգային քարտուղարության անդամ։

Օրակարգը բաղկացած էր ավելի քան 120 հարցերից։ Այդ հարցերի թվում էին Սովետական Միության, ԱՄՆ-ի և Հրեկաստանի պետական ներկայացուցիչների զեկուցումները՝ գլխավոր թեմայի շուրջ, ընդհանուր քարտուղարի տեղեկագիրը՝ Խաղաղության քրիստոնեական կոնֆերանսի վեցամսյա գործունեության մասին, հանձնաժողովների, ելոսհանձնաժողովների, շրջանային կոմիտեների հաշվետվությունները, Խաղաղության քրիստոնեական կոնֆերանսի հետագա ձեռնարկումների ծրագիրը, բյուջեն և այլն։

Հարցերը քննարկվեցին հանգամանորեն ու ամենայն լրջությամբ և ընդունվեցին համապատասխան որոշումներ ու հանձնարարականներ։ Վերջում միաձայնությամբ հավանություն տրվեց նստաշրջանի արդյունքներն ամփոփող գլխավոր փաստաթղթին՝ բանաձևին։

Խաղաղության քրիստոնեական կոնֆերանսի ընդհանուր քարտուղար դուկտ. Կարոլի Տոթի տեղեկագրից պարզվեց, որ զգալի հաջողություններ են ձեռք բերվել եկեղեցիների գլխավորած խաղաղության

շարժման ծավալման գործում: Արդեն ստեղծվել է Ասիայի խաղաղության քրիստոնեական կոնֆերանս (ԱՆԷԿ), և ծրագրված է համաման կոնֆերանս ստեղծել նաև Աֆրիկայում: Բացի այդ, աշխատանքներ են կատարվել Արևմտյան Եվրոպայի մի շարք երկրների՝ Ֆրանսիայի, Իտալիայի, Անգլիայի տարբեր եկեղեցիներ ու կրոնական ընկերակցություններ խաղաղության քրիստոնեական կոնֆերանսի կազմում ներգրավելու ուղղությամբ:

Նատաշրջանում մեծ հետաքրքրություն առաջացրին գլխավոր թեմայի շուրջ կատարված զեկուցումները: Ամերիկայի Միացյալ Նահանգներում սովետական դեսպանատան առաջին քարտուղար Ալեքսանդր Կոկորեբ հանգամանորեն շարադրեց սովետական կառավարության խաղաղասիրական քաղաքականությունը և այն դժվարությունները, որ ներկայումս խոչընդոտում են զինաթափման սովետա-ամերիկյան բանակցությունները: Զեկուցողը, փաստեր բերելով միջուկային զենքի նոր տեսակների ահարկու հզորության մասին, եզրակացրեց, որ սպառազինությունների դեմ պայքարի էլքից է կախված համալս մարդկության ապագան:

ԱՄՆ-ի պետական դեսպարտամենտի նախկին քարձարտանման ծառայող դոկտ. Ֆրիսկ Ֆաուլերը ներկայացրեց ամերիկյան կառավարության քաղաքականությունը զինաթափման հարցում: Նա հայտարարեց, որ ամերիկյան կառավարությունը՝ կողմ է լինի և ընդհանուր զինաթափման, սակայն տեխնիկական գիտությունների արագ զարգացումը դժվարացնում, գրեթե անհնարին է դարձնում վերահսկողությունը միջուկային զենքի նոր տեսակների արտադրության վրա՝ խանգարելով զինաթափման սովետա-

ամերիկյան բանակցությունների հաջողությանը:

Հնդկաստանի պետական խորհրդական դոկտ. Կ. Տ. Չանդին զինաթափման հարցին անդրադարձավ տնտեսական տեսանկյունից և հետաքրքրական հաշվումներով ցույց տվեց, որ ներկայումս տարբեր պետությունների կողմից սպառազինման համար ծախսվող միջոցները եթե օգտագործվեն խաղաղասիրական նպատակներով, կարող են վերջ դնել Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի ժողովուրդների հետամնացությանը՝ հսկայական մղում տալով նրանց սոցիալական ու տնտեսական զարգացմանը:

Մոլդեբի աշխույժ փոխանկությունից հետո ընդունվեց ԱՄՆ-ի կառավարությանն ուղղված մի դիմում՝ զինաթափման հարցի վերաբերյալ, և հատուկ պատգամավորության միջոցով հանձնվեց Կոնգրեսի նախագահությանը:

Աշխատանքային կոմիտեի ապրիլի 6-ի երեկոյան հիստում ընդհանուր քարտուղար դոկտ. Կարոլի Տոթը, նատաշրջանի նախագահության անունից, ներկաներին ծանոթացրեց տարբեր եկեղեցիների պետերից ստացված ուղերձներն ու նամակները զինաթափման հարցի վերաբերյալ: Անդրադառնալով Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի ուղերձին, նա դրվառեց հալ եկեղեցու խաղաղասիրական ախանդությունները և նշեց, որ նրա Պետք քարոյապետ միշտ զորավիգ է հանդիսացել և հանդիսանում խաղաղության քրիստոնեական կոնֆերանսին:

Հայոց Հայրապետի ուղերձը ողջունվեց ծափերով և ընդունվեց շնորհակալության բանաձև:

Ստորև ներկայացնում ենք Վեհափառ Հայրապետի ուղերձը.

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՎԱԹՈՂԻԿՈՍԻ ՌԵԼԵԲՁԸ՝ ՌԵԼԳՎԱՍԽԱՆԴՈՒԹՅԱՆ
ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱՍԱԾՐՁԱՆԻՆ

(Նյու-Վինդսոր, Մերիլենդ-ԱՄՆ, 5—8 ապրիլի 1976)

Միքեյալ եղբայրներ Մեր ի Քրիստոս, Խորին գոհունակությամբ ողջունում ենք զումարումը խաղաղության քրիստոնեական համախմբումի կոմիտեի, որի այս նատաշրջանը առաջադրել է բնարկելու՝ «Քրիստոնեաների բարոյական պարտավորությունները զինաթափման հարցում» նյութը:

Հայաստանաց առաքելական եկեղեցին,

որի զավակները անցյալ դարերի ընթացքում ողբերգական ծանր դժբախտություններ են կրել պատերազմների ընթացքում, միշտ աղոթել է և իր ձայնը բարձրացրել ի պաշտպանություն խաղաղության սրբազան դատի և համարակցում բարի կամեցողության, աշխարհի ժողովուրդների միջև:

Ազգությունների միջև խաղաղության

պաշտպանության և ամրապնդման ճանապարհի վրա, զինաթափությունը անշուշտ որ կհանդիսանա մեր ժամանակների ամենաառաջնահերթ հարցը, որը անհրաժեշտ է լուծել շուտափույթ կերպով: Աշխարհի բոլոր ժողովուրդները կենսականորեն շահագրգռված են այդ հարցի դրական լուծումով, որովհետև միջուկային մի պատերազմ համայն մարդկության համար կլիներ ամենամեծ աղետը:

Ահա թե ինչու զինաթափման հարցը, շատ բարդությունների հետ կապված, կարող է ամբողջական լուծում գտնել միմիայն խաղաղատենչ բոլոր պետությունների, բոլոր եկեղեցիների, բարի կամեցողության տեր բոլոր մարդկանց հավաքական ճիգերով, սիրով և ազնիվ հույսերով միավորված: Նպաստել զինաթափման գործին՝ նշանակում է պատվար բարձրացնել հնարավոր ամեն պատերազմի ճանապարհի վրա: Մարդկության երջանկությունը կարելի է իրականացնել միայն մի աշխարհում, որտեղ բացառվում են պատերազմները և որտեղ միջուկային ուժը և պատերազմական զենքերի ծախսերը օգտագործվելու են մեր նմանների առապանքների վերացման համար:

Հարյուր միլիոնավոր մարդիկ, ցածր զարգացման մակարդակի վրա գտնվող երկրներում, Աֆրիկայում, Ասիայում և Լատինական Ամերիկայում, մեր օրերին որոնում են ամենաազդու մեթոդները գտնելու

համար իրենց հառաջդիմության և բարեկեցության ճանապարհը:


Մենք երջանիկ ենք հաստատելու, թե արդի միջազգային իրադրությունը, որը բնորոշվում է խաղաղ գոյակցության սկզբունքներով, նոր և մեծ նպաստ կարող է հանդիսանալ զինաթափման: Իրականություն է այսօր, թե սովետ-ամերիկյան բարեկամության արդի հարաբերությանց մեջ, զինաթափման սահմանափակման հարցերը գրավում են կարևորագույն տեղ:


Եթե համար մեծագույն մխիթարություն է հաստատել, թե ժողովուրդների ուշադրությունը այս օրերին կենտրոնացած է ՄԱԿ-ի զինաթափման համաշխարհային համագումարի աշխատանքների վրա:

Հանուն մեր Տիրոջ Հիսուսի Քրիստոսի Ավետարանի, մենք քրիստոնյաներս, հաստատականորեն ակնկալում ենք իրականացումը ընդհանուր և ամբողջական զինաթափման և պատերազմական ծախսերի օգտագործումը խաղաղ նպատակների համար:

Միրելի եղբայրներ, Մենք վերստին ջերմորեն ողջունում ենք ձեզ և աղոթում, որ սուրբ Հոգին լինի ձեզ օգնական, որպեսզի նաև ձեր աղոթքներով և անդու ճիգերով, արմատախիլ լինի պատերազմը մարդկային ընկերության կյանքի անդատանից:

Թող Աստված օրհնի ձեր աշխատանքները և ձեր սուրբ առաքելությունը:





ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ, ԶԻՆԱԹԱՓՄԱՆ ԵՎ ԱԶԳԵՐԻ ՄԻՋԵՎ
ԱՐԴԱՐ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆԸ
ՆՎԻՐՎԱԾ ԿՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ
ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ԸՆԴՀԱՅՆՎԱԾ ՆԻՍՏԸ ՄՈՍԿՎԱՅԻՄ

Ս/թ. մարտի 29—31 օրերին Մոսկվայում, «Ուկրաինա» հյուրանոցի դահլիճում, տեղի ունեցավ խաղաղության, զինաթափման և ազգերի միջև արդար փոխհարաբերությունների հաստատմանը նվիրված կրոնական գործիչների առաջիկա համաշխարհային կոնֆերանսը նախապատրաստող կոմիտեի հերթական ընդլայնված նիստը:

Ժողովին մասնակցում էին քրիստոնեական, մահմեդական, բուդդայական, հրեական, սինդոյական և այլ կրոնների 116 ներկայացուցիչներ՝ ժամանած աշխարհի տարբեր երկրներից:

Նախապատրաստական սույն նիստին, Ն. Ս. Օ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ, իր մասնակցությունը րեւեց նաև Հայաստանյայց առաքելական եկեղեցին հինգ հոգուց բաղկացած մի պատվիրակությամբ, որի կազմում էին՝

1. Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը:

2. Երուսաղեմի հայոց պատրիարքարանի դիվանապետ և Ժառանգավորաց վարժարանի տեսուչ տ. Ծահե արքեպ. Աճառյանը:

3. Մայր Աթոռի դավանապետ և Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչ տ. Արսեն եպ. Բերբերյանը:

4. Ծիրակի թեմի առաջնորդ տ. Նարեկ եպ. Ծաքարյանը:

5. Դամասկոսի թեմի առաջնորդ տ. Ոսկան ծ. վրդ. Գալբակյանը:

Մարտի 28-ին, երկուշաբթի օրը, աղոթքով սկսվեց կոմիտեի սույն ժողովի առաջին նիստը: Կոմիտեի նախագահ, Տուլայի և Բելալայի միտրոպոլիտ տ. Յուլենայի արքեպիսկոպոսը ողջունեց աշխարհի 29 երկրներից ժամանած ժողովականներին:

Այնուհետև ողջույնի ջերմ խոսքով հանդես եկավ սույն ժողովի նախաձեռնող և կազմակերպիչ, Մոսկվայի և համայն Ռուսիո Նորին Սրբություն Տ. Պիմեն Պատրիարքը:

Ապա ժողովն անցավ իր աշխատանքներին: Հաստատվեց օրակարգը, ընտրվեցին մանդատային, խմբագրական մարմիններ, միջազգային նախապատրաստական ավելի մեծ մի կոմիտեի թեկնածուներ առաջադրող մարմինը, աշխատանքային երկու հանձնախմբեր և քարտուղարություն:

Առաջին նիստին զեկուցումներով հանդես եկան՝ Միշին Ասիայի և Ղազախստանի մուֆտի Զ. Բաքախանովը, որի զեկուցման թեման էր՝ «Ժամանակակից ճգնաժամի օջախները և կրոնական գործիչների պարտականությունը՝ չեզոքացնելու դրանք», և տ. Յուլենայի միտրոպոլիտը, որի զեկուցման թեման էր՝ «Տարբեր կրոնների համագործակցության հիմքն ու փորձը խաղաղության հարցում»:

Այնուհետև ժողովականները հետագա օրերի ընթացքում աշխատանքային երկու առանձին խմբերում հանգամանորեն ընկարկեցին օրակարգում դրված երկու գլխավոր զեկուցումներում առաջ բաշխված հարցերը:

Չեկուցողները գլխավոր ուշադրությունը կենտրոնացրել էին խաղաղության, զինաթափման և ազգերի միջև արդար փոխհարաբերությունների հաստատմանը նվիրված համաշխարհային մի ճոր համաժողովի նախապատրաստման և հրավիրման վրա:

Հայ եկեղեցու պատվիրակությունն իր գործուն մասնակցությունը բերեց այս երկու խմբերի աշխատանքներին: Աշխատանքային առաջին խմբում ելույթներով հանդես եկան տ. Ծահե, տ. Կոմիտաս արքեպիսկոպոսները և տ. Նարեկ եպիսկոպոսը, իսկ երկրորդ խմբում՝ տ. Արսեն եպիսկոպոսը և տ. Ոսկան ծ. վարդապետը:

Մարտի 31-ին տեղի ունեցավ ժողովի չորրորդ և վերջին լիազումար նիստը: Նիստում ժողովի քննարկմանը ներկայացվեցին աշխատանքային երկու խմբերի կողմից կատարված աշխատանքների արդյունքները: Լիազումար նիստը քննության առավ նաև առաջին նիստում կազմված հանձնաժողովների կատարած աշխատանքների արդյունքները, ինչպես նաև զբաղվեց կազմակերպչական այլ հարցերով:

Հանուն Մայր Աթոռ ս. Էջմիածնի և Ամենայն Հայոց կաթողիկոսի սույն լիազումար նիստում ելույթ ունեցավ տ. Նարեկ եպ. Ծաքարյանը՝ հայտնելով, որ հայ եկեղեցին լիովին պաշտպանում է խաղաղության, զինաթափման և ազգերի միջև արդար փոխհարաբերությունների հաստատմանը նվիրված համաշխարհային համաժողովի առաջիկա գումարումը Մոսկվայում: «Փաստ է, — նշեց իր ելույթում տ. Նարեկ եպիսկոպոսը, — որ Մայր Աթոռ ս. Էջմիածինը խաղաղության շարժման ստեղծման առաջին իսկ օր՝ 1949 թվականից, առաջնորդվելով մեր ժողովրդի, մեր եկեղեցու և մեր խայրե-

նիքի գերագույն շահերից, իր գործուն մասնակցությունն է բերել այդ շարժմանը: Նույն ոգով, Մայր Աթոռ ս. Էջմիածնի գլխավորությամբ, Հայաստանյայց առաքելական եկեղեցին կմասնակցի վերոհիշյալ համաժողովին»:

Լիազումար նիստի վերջում միաձայնությամբ ընդունվեց պաշտոնական մի դիմում՝ ուղղված աշխարհի կրոնական բոլոր գործիչներին, իրենց մասնակցությունը բերելու 1977 թվականին Մոսկվայում տեղի ունենալիք միջկրոնական համաժողովի կազմակերպման և արդյունավետ անցկացման աշխատանքներին:


Այնուհետև ժողովն ընդունեց նախապատրաստական կոմիտեի աշխատանքների վերաբերյալ պաշտոնական մի հաղորդագրություն:

Վերջին լիազումար նիստում կազմվեց նաև 53 հոգուց բաղկացած միջազգային կոմիտե, որի վրա դրվեց համաժողովը կազմակերպելու և անցկացնելու պատասխանատու պարտականությունը: Հանուն հայ եկեղեցու այդ կոմիտեի անդամ ընտրվեց տ. Ծահե արքեպիսկոպոս Անեմյանը:

Մարտի 31-ի երեկոյան Մոսկվայի և համայն Ռուսիո Ն. Սբորություն Տ. Պիմեն Պատրիարքը, Մոսկվայի «Սովետսկայա» հյուրանոցում կազմակերպեց պաշտոնաեան ընդունելություն ժողովի մասնակիցների պատվին: Սույն ճաշերույթին ներկա էին նաև պաշտոնական այլ հրավիրյալներ և հյուրեր՝ շուրջ 300 հոգի:

Ապրիլի 1-ին բոլոր պատգամավորներն այցելեցին Զագորսկի մայրավանք և հոգևոր ակադեմիա, այսպե ներկա եղան հոգևոր ակադեմիայի ուսանողության կողմից կազմակերպված հոգևոր համերգին:





ԱՊՐԻԼՅԱՆ ԵՂԵՌՆԻ 61-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ՆՇՈՒՄԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ապրիլի 24. շաբաթ.

Ըստ Մայր Աթոռի եկեղեցական օրացույցի, այսօր «Յիշատակ է քիրպատր նահատակացն մերոց, որք կատարեցան լըկոսաց չամաշխարհային առաջին պատերազմի»:

Ապրիլյան եղեռնի 61-րդ տարելիցն է:

Այս տարի էլ ապրիլի 24-ին, շաբաթ օրը, Մայր Աթոռում, հայրենիքում, ինչպես նաև ողջ պիտոքում համայն հայությունը նշեց հայ տառապանքի և մեր հավաքական նահատակության 61-րդ տարելիցը՝ երկյույլած քարեպաշտությամբ և հպարտորեն իր գլուխը խոնարհեց մեր նահատակների անմոռաց հիշատակի առաջ, նահատակներ, որոնք ընկան «վասն Յիսուսի և վասն հայրենեաց»:

Հայ ժողովուրդը երբեք չի մոռանա Ապրիլյան իր նահատակներին:

Անցան 61 տարիներ... Վիշտը փոխակերպվեց ուժի, կյանքի, ստեղծագործ կամքի, հաղթանակի և ապրելու ու հավերժելու հավատքի:

Ապրիլյան եղեռնի մեր նահատակներն ընկան «ապագայի ճամբուն վրա, որպեսզի ողջերը կարենային շարունակել զայն: Վասրնզի ողջերը չեն ապրիր, երբ մեռելներուն երազը մեռնի»...

Համագային ուխտի, աղոթքի, ոգեկոչման օր է այսօր ողջ հայության համար:

1976. ապրիլի 24. շաբաթ, Էջմիածին. Մայր տանար:

Ժամը 12-ն է:

Նահատակաց ա. սեղանի վրա պատարագ է մատուցում հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Հովհաննես ավագ քնն. Մարտիրոս:

նը և իր բովանդակային քարոզում ոգեկոչում խնկելի հիշատակը մեր նահատակների:

Ս. պատարագին ներկա է Վեհափառ Հայրապետը՝ շրջապատված Մայր Աթոռի միաբաններով, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմով, մայրավանքի ողջ պաշտոններությամբ:

Մայր տանարը և վանքի շրջափակը լիքն են ուխտավոր բազմությամբ:


Հավարտ ա. պատարագի Վեհափառ Հայրապետը, ի գլուխ եկեղեցական թափոռի, առաջնորդվում է մայրավանքի հյուսիսային մասում կառուցված Ուխտի և Աղոթքի նահատակաց հուշարձան և նախագահում հոգեհանգստյան արարողությունը:

Նահատակաց հուշարձանը ծածկվել է թարմ ծաղիկներով:

Հաջոց Հայրապետը «Հոգեց» է արտասանում մեր նահատակաց հիշատակին: Բոլոր ներկյալները մեկ րոպե հպարտ լուությամբ, երախտապարտ հիշողության լույսով հարգում են Ապրիլյան եղեռնի նահատակների հիշատակը:

Ժամը 15-ին Մայր Աթոռի միաբանությունն ու հոգևոր ճեմարանի ուսանողությունը ծաղիկներով, ողջ հանրապետության բազմահազար ժողովրդի հետ, բարձրանում են Ծիծեռնակաբերդ և իրենց գլուխները խոնարհում նահատակների անմոռաց հիշատակի առաջ:

Ժառք և հարգա՛րք քեզ, երեկ նահատակված, բայց այսօր հրաշափառապես հարություն առած հայ ժողովուրդ և Հայր'ց աշխարհ:



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Ապրիլի 3-ին, շաբաթ.—Տօն Սրբուն Գրիգորի Լուսաորչին մերոյ սոսկալի չարչաւանացն և մտին ի Վիրապն.

Այսօր Մայր տաճարում ա. պատարագ է մատուցում տ. Մաւիս վրդ. Գալստյանը:

* *

Ապրիլի 4-ին, կիրակի.—Ձ կիրակի քառանորդական պահոց (Գալստեան).

Այսօր Մայր տաճարում ա. պատարագ է մատուցում տ. Արտակ քնն. Սիմոնյանը:

«Հայր մեր»-ից առաջ հալոյր պատշանի քարոզում է տ. Մաւիս վրդ. Գալստյանը:

* *

Ապրիլի 5-ին, երկուշաբթի.—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում Երուսաղէմի հայոց պատրիարքարանի դիվանապետ և Ժառանգավորաց վարժարանի ու ընծայարանի տեսուչ տ. Շահէ արքեպ. Աճեմյանը, որը մարտի 29—31 օրերին Մոսկվայում մասնակցել էր խաղաղության, զինադափման և ազգերի միջև արդար փոխհարաբերությունների հաստատմանը նվիրված կոնգրական գործիչների համաշխարհային կոնֆերանսի նախապատրաստական կոմիտէի ընդլայնված նիստին:

Ժողովից հետո տ. Շահէ արքեպիսկոպո-

սը, Վրաստանի հայոց առաջնորդ տ. Գևորգ եպս. Սերապիարյանի և Բաքվի հայոց առաջնորդ տ. Հուսիկ եպս. Մանթուրյանի հրավերներով, Մայր Աթոռի միաբան տ. Անանիա վրդ. Արաբաջյանի ընկերակցությամբ այցելում է Թբիլիսիի և Բաքվի հայոց եկեղեցիներ:

Ապրիլի 6-ին տ. Շահէ արքեպանը, հրաժեշտ առնելով Վեհափառ Հայրապետից, մեկնում է Երուսաղէմ:

* *

Ապրիլի 7-ին, յորեքշաբթի.—Աւետումն ա. Աստուածածնի.

Այսօր Մայր տաճարում ա. պատարագ է մատուցում տ. Նշան քնն. Բեյլերյանը:

* *

Ապրիլի 11-ին, կիրակի.—Ժողկազարդ.
Օրվա մեծ տոնի առիթով այսօր Մայր տաճարում ա. պատարագ է մատուցում տ. Արսեն եպս. Բերբերյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Այսօր գլուխդ առնում ես ինքդ քեզ գալստեամբ Աստուածորդուն լեքրուաղէմ. և գոչէին հնչմամբ երգով օրհնեալ եկեալ անուամբ Տառն» շարականի ընթարցումով:

*
*
*

Նույն օրը, երեկոյան, Մայր տաճարում ավանդական հանդիսությամբ կատարվում է Դոճրացերի արարողությունը:

Արարողությանը ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

*
*
*

Մայրիկի 14-ին, չորեքշաբթի.—Այսօր, ժամը 13-ին, Վեհարանի հանդիսությանը դահլիճում տեղի է ունենում միաբանության և մայրավանքի ողջ աշխատավորության ամենամյա հավաքը՝ նվիրված 1976 թվականին Մայր Աթոռում կատարվելիք աշխատանքների է՛լ ավելի կազմակերպվածությանը և արդյունավորությանը:

Այս սովորությունը հաստատվել է Վեհափառ Հայրապետի օրոք, երբ Մայր Աթոռի միաբանությունը, պաշտոնեությունն ու աշխատավորությունը տարին մեկ անգամ հավաքվում են «արտադրական խորհրդակցության»՝ հանրագումարի բերելու մեկ տարվա ընթացքում իրենց կատարած աշխատանքներում ձեռք բերված հաջողությունները և նոր եռանդով շարունակելու իրենց ստաշդոված աշխատանքային նոր ստաշադրանքները:

Հավաքին նախագահում է Վեհափառ Հայրապետը: Մասնակցում են միաբանությունը, պաշտոնեությունը և մայրավանքի ողջ աշխատավորությունը, այդ թե կին, ավելի քան 150 հոգի:

Հավաքը ներածական խոսքով բացում է Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթրույանը:

Այնուհետև սրբազանը հրավիրում է «Էջմիածին» ամսագրի խմբագիր և հոգևոր ճեմարանի ավագ դասախոս պրն. Արթուր Հատիսյանին՝ խոսելու 1976 թվականին Մայր Աթոռում կատարվելիք հոգևոր, եկեղեցական, մշակութային, շինարարական-վերանորոգչական աշխատանքների է՛լ ավելի կազմակերպված, գիտակից և կարգապահ կատարման մասին:

Հարգելի բանախոսը շեշտում է մանավանդ այդ աշխատանքների կարևոր նշանակությունն ա՛յս տարի, երբ սեպտեմբերին միաբանությունը, պաշտոնեությունը և աշխատավորությունը իրենց նվիրյալ, կարգապահ աշխատանքով իրենց արտագին մասնակցությունը պիտի բերեն Վեհափառ Հայրապետի զանակալության 20-ամյակին նվիրված հանդիսություններին և արբալույս մեռուկի օրինության տոնակատարություններին:

Հավաքի ավարտին Վեհափառ Հայրա-

պետն իր օրհնությանն ու գնահատանքին է արժանացնում Մայր Աթոռի միաբանության, պաշտոնեության և ողջ աշխատավորության կատարած արժանավեր աշխատանքները՝ բոլոր բնագավառներում:

Ի գնահատություն այդ աշխատանքների, Վեհափառ Հայրապետը քարեհանում է լուսանկարվել Վեհարանի այգում, խաչքարի առաջ, հավաքի հոգևորական և աշխարհական բոլոր մասնակիցների հետ:

*
*
*

Մայրիկի 15-ին, հինգշաբթի.—Առաջ հինգշաբթի. Յիշատակ ընթրեաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Օրվա մեծ տոնի առիթով Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Նշան բին. Բելլերյանը:

Ժամը 16-ին Մայր տաճարում կատարվում է Ռոնգավայի և ապա, ժամը 19.30-ին՝ Խավարման կարգը:

Վեհափառ Հայրապետը, «Փառք ի բարձուն» երգից հետո, հոգեշունչ քարոզ է խոսում Խավարման գիշերվա խորհրդի և Հիսուսի մատնության ու չարչարանքների հոգևոր նշանակության մասին:

*
*
*

Մայրիկի 16-ին, ուրբաթ.—Առաջ ուրբաթ. Յիշատակ չարչարանաց և խաչելութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Ժամը 11-ին Մայր տաճարում պաշտովում է «Յիշատակ չարչարանաց և խաչելութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» կարգը: Երեկոյան, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, Մայր տաճարում կատարվում է Թաղման կարգը և ապա «Թափոր թաղման»:


*
*
*

Մայրիկի 17-ին, շաբաթ.—Առաջ շաբաթ. Ծրագալուց Զատիկ:

Այսօր, երեկոյան ժամը 17-ին, Մայր տաճարում Ծրագալուցի պատարագ է մատուցում լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթրույանը: Ս. պատարագից առաջ հոգևոր ճեմարանի ուսանողներն ընթերցում են Դանիելի գիրքը:

Ս. պատարագի ավարտին, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, կատարվում է Զատիկի նախատոնակը, որից հետո Նորին Սրբությունն առաջնորդվում է Վեհարան:

Ավելի ուշ մայրավանքի սեղանատանն օրհնվում է Մայր Աթոռի աղն ու հացը, և



ՎԵՆԱՅԱԿԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԸ, ՄԱՅՈՒՆ ԱՇԽԱՏԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՅՐԱՊԵՏԱԿԱՆՔԻ ՈՐԸ ԱՇԽԱՏԱԿԱՆՈՐԵՐԻ ՀԵՏ ՎԵՆԱՊԵՏԻ ԲԱԿՈՒՄ
(1976 թ., ապրիլի 14)

սիաբանությունը նաշակում է Նավակատի-
քի բարիքները:

*
* *

Ապրիլի 19-ին, երկուշաբթի.—Յիշատակ մենեղոց.

Մայր տաճարում ս. պատարագ է մատու-
ցում տ. Մովսիկ վրդ. Սարգսյանը:

Ս. պատարագի ավարտին կատարվում է
հոգեհանգստյան պաշտոն՝ «վառն համօրէն
ննջեցեղոց»:

*
* *

**Ապրիլի 21-ին, չորեքշաբթի.—Ջատկա-
կան տոնակատարությունների կապակցու-
թյամբ (հին տոմարով) պատարագելու և
հանգին կենաց քարոզությամբ հավատաց-
յալներին միախառնելու համար Մայր Աթո-
ռից ներքին թեմեր մեկնեցին տ. Հուսիկ
եպս. Սանդուղյանը, ընկերակցությամբ պրն.
Հայկ Ֆրունջյանի՝ Բաքու, տ. Մասիս վրդ.
Գալստյանը՝ Ռուստով, տ. Թորգոմ վրդ.
Մուշեղյանը, ընկերակցությամբ Հակոբ սրկ.
Խաչատրյանի՝ Թբիլիսի, Միսաք սրկ. Մար-
գարյանը, Ախալքալաք, Ռուբեն սրկ. Սա-
ղոյանը՝ Ախալցխա:**

*
* *

**Նույն օրը, երեկոյան ժամը 19-ին, Վեհա-
րանում, Վեհափառ Հայրապետի նախագա-
հությամբ, գումարվում է Գերագույն հոգևոր
խորհրդի հերթական նիստը:**

*
* *

**Ապրիլի 25-ին, կիրակի.—Կրկնագատիկ
(Նոր կիրակի).**

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է
մատուցում տ. Մովսիկ վրդ. Սարգսյանը:

Ժամը 11.30-ին Վեհափառ Հայրապետը
բարեհաճում է ընդունել ֆրանսահայ մի
խումբ ուխտավորների: Այնուհետև Նորին
Աթոռությունը միաբանության և ուխտավոր-
ների հետ թափոնով առաջնորդվում է Մայր
տաճար:

«Հայր մեր»-ից առաջ քարոզում է Վե-
հափառ Հայրապետը՝ «Օրհնեալ է յարու-
թիւնն Քրիստոսի» բնաբանով, և ողջունում
ներկայությունը ֆրանսահայ ուխտավորնե-
րի:

*
* *

**Ապրիլի 26-ին, երկուշաբթի.—Այսօր, ժա-
մը 13.30-ին, Մայր Աթոռ են այցելում Կու-**

բայից ժամանած մի խումբ մկրտչական
եկեղեցու ներկայացուցիչներ: Հյուրերը,
Մայր տաճարն ու եկեղեցական արվեստից
թանգարանը դիտելուց հետո, ցանկանում
են այցելել Վեհափառ Հայրապետին:

Վեհաբարանում Նորին Աթոռությունն ընդո-
նում է կուբացի հարգաթման հյուրերին: Տե-
ղի է ունենում մտերիմ գրույց: Իր ողջույնի
խոսքում Հայոց Հայրապետն ասում է.

«Մենք չափազանց գոհ ենք, որ քրիս-
տոնյա եղբայրներ հեռավոր Կուբայից այ-
ցելում են Մայր Աթոռ ս. Էջմիածին: Ամեն
անգամ, երբ այսպիսի քրիստոնյա եղբայր-
ներ, մանավանդ ղեկավար հոգևոր անձինք,
այցելում են Մեզ, Մենք ոչ միայն ուրախա-
նում ենք, այլև ավելի ոգևորվում և գորա-
նում ենք հոգեպես՝ իբրև Քրիստոսի Ավե-
տարանին ծառայող մարդիկ: Զգում ենք
կենդանի համաքրիստոնեական եղբայրու-
թյունը մեր բոլորի:

Դուք այստեղ գտնվում եք հայկական
քրիստոնեության պատմական կենտրոնում՝
ս. Էջմիածնում. երևի ձեզ հայտնի է ար-
դեն, որ հայ ժողովուրդը քրիստոնեությունը
ընդունեց Դ դարու սկզբին՝ 301 թվականին:
Ահա մոտ 1700 տարիների ընթացքում ս.
Էջմիածինը մնում է կենտրոնը հայ եկեղե-
ցու, և որտեղ նստում է նաև նրա պետը՝
կաթողիկոսը: Ինչպես մեր հայ ժողովուրդն
ու մայր հայրենիքը՝ Հայաստան, այնպես
էլ Էջմիածինը շատ ծանր պատմական շրջ-
աններ է ապրել անցյալում, նույնիսկ եր-
բեմն կես չափով քանդված է եղել այս տա-
ճարը, և բազում անգամներ մեր բոլոր եկե-
ղեցիները այրված են եղել, քանդված, և
ժողովուրդը՝ կոտորված: Սակայն այդ բո-
լոր դժբախտությունների ընթացքում հայ
ժողովուրդը միշտ հավատարիմ է մնացել
իր քրիստոնեական հավատքին: Կարելի է
ասել իբրև պատմական ճշմարտություն, որ
հայ ժողովուրդը հաճախ, հեռավոր անցյա-
լում, իր մարմնի մահախաղիչության գնով՝
պաշտպանել է Քրիստոսի Ավետարանը:

Աստուծո ողորմությամբ, Մենք ահա, ա-
վելի քան կես դարուց ի վեր, Սովետական
Հայաստանի հանրապետության հիմնա-
դրությամբ խաղաղ ու ապահով կյանք ենք
ապրում, և մեր ճոր կյանքի պայմաններում
մեր եկեղեցին ազատորեն շարունակում է
իր առաքելությունը՝ սերտ հարաբերություն
պահպանելով քույր եկեղեցիների հետ»:

Կուբայի մկրտչական եկեղեցու ներկա-
յացուցիչները, խորապես տպավորված Վե-
հափառ Հայրապետի ողջույնի խոսքերից,
լավագույն տպավորություններով հրաժեշտ
են առնում Նորին Աթոռությունից և Մայր
Աթոռից:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՎ ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴԻ ՆՇԱՆԱԿՈՒՄ

Գերագույն հոգևոր խորհրդի 1976 թվականի հունվար 26 նիստի որոշումով, Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի առաջնորդական փոխանորդ և Մոսկվայի հայոց հոգևոր հովիվ ճշանակվեց Մայր Աթոռի երիտասարդ միաբաններից տ. Տիրան վրդ. Կյուրեղյանը:

Վեհափառ Հայրապետը հաստատեց Գերագույն հոգևոր խորհրդի այդ որոշումը: Հայոց Հայրապետը Մոսկվայի և համայն Ռուսիայի Նորին Արքեպիսկոպոս Ս. Պիմեն Պատրիարքին 7 ապրիլ 1976 թվականի էր պաշտոնական գրությամբ հաղորդում էր այս առթիվ, որ Մոսկվայի և համայն Ռուսաց Պատրիարքության մոտ էր ներկայացուցիչը ճշանակեց տ. Տիրան վրդ. Կյուրեղյանին, որը միաժամանակ վարելու է Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի առաջնորդական փոխանորդի և Մոսկվայի հայոց հոգևոր հովվության պաշտոնները:

Ապրիլի 1-ին տ. Տիրան վրդ. Կյուրեղյանն անցավ իր առաջնորդական փոխանորդի և հոգևոր հովվության պաշտոնների կատարմանը:

Ապրիլի 11-ին, կիրակի օրը, Ծաղկազարդի տոնին, տ. Տիրան վրդ. Կյուրեղյանը պատարագում է Մոսկվայի հայոց ս. Հարություն եկեղեցում և, հաղորդելով Վեհափառ Հայրապետի ողջույններն ու ուրախությունները, հանդիսանում էր ընդհանուր միության միջնորդական հովանավորներից՝ որպես Մոսկվայի հայոց նորինորդ հոգևոր հովիվ:

Ապրիլի 14-ին, չորեքշաբթի օրը, տ. Տիրան վրդ. Կյուրեղյանը, ընկերակցությամբ տ. Անանիա վրդ. Արաքսյանի, Մոսկվայի ռուսաց Պատրիարքարանի եկեղեցական արտաքին հարաբերությունների բաժնի նախագահ Տուլայի և Բելակու միտրոպոլիտ տ. Յուլիանայի սիրավոր հրավերով, ազատվում է նրան, նրա պաշտոնատեղիում: Երկու քույր եկեղեցիների պաշտոնական անձ-

նակորությունների միջև տեղի է ունենում սիրավոր գրույց՝ ջերմ մեղուկորում:

Ապրիլի 15-ին, հինգշաբթի օրը, Մոսկվայի և համայն Ռուսիայի Նորին Արքեպիսկոպոս Ս. Պիմեն Պատրիարքի հրավերով, Անանայն Հայոց Վեհափառ Հայրապետի ներկայացուցիչ տ. Տիրան վրդ. Կյուրեղյանը, ընկերակցությամբ տ. Անանիա վրդ. Արաքսյանի, այցելում է Նրան Մոսկվայի ռուսաց Պատրիարքարանում:

Նորին Արքեպիսկոպոսը ջերմորեն ու հայրաբար ողջունում է Հայոց Հայրապետի երիտասարդ ներկայացուցչին և նրան հաջողություն մաղթում՝ առաջնորդական և հովվական պատասխանատու նրա պաշտոններում:

Այս առթիվ Նորին Արքեպիսկոպոս Պիմեն Պատրիարքը տ. Տիրան վարդապետին պարգևատրում է վարդապետական ակադեմիկոս լանջախաչով:

Տ. Տիրան վարդապետը երախտապարտ սրտով խորագագ շնորհակալություն է հայտնում Նորին Արքեպիսկոպոսին՝ հայրական սիրո և հայրապետական այս բարձր ուշադրության համար:

Մյուս ընդունելությունը ներկա են լինում Տուլայի և Բելակու տ. Յուլիանայի միտրոպոլիտը և Նորին Արքեպիսկոպոս Ս. Պիմեն Պատրիարքի անձնական քարտուղար տ. Մատվեյ Ստադնիկով ավագ բահանան:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ջերմորեն շնորհավորում է տ. Տիրան վրդ. Կյուրեղյանին՝ Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի առաջնորդական փոխանորդին և Մոսկվայի հայոց հոգևոր հովիվին՝ մաղթելով նրան բոլորն զործուներություն և հաջողություն՝ ի միությանը Նորին Արքեպիսկոպոսի սրտի և ի հոգևոր շինություն իր խնամքին հանձնված Ռուսաստանի և Մոսկվայի համայն հայ հավատացյալների:

**ՊՐՈՖ. ԳԵՐՀԱՐԴ ԲԱՍՍԱՐԱԿԻ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ ՆՈՐԻՆ
ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԵՏ**

Հարց.—Ձերդ Սրբություն, Հայոց առաքելական հինավուրց եկեղեցին (ինչպես հայտնի է, հնագույն եկեղեցիներից մեկն է և ամենահին պետական եկեղեցին) իր պատմության ճանապարհին Քրիստոսի պատգամներին հետևելու հսկայական փորձ է կուտակել: Չէի՞ք անդրադառնա ձեր եկեղեցու կյանքի մի քանի կարևորագույն և հատկանշական իրադարձություններին:

Պատասխան.—Հայոց առաքելական եկեղեցին արժանի է աշխարհի ուշադրությանը, իր 17-դարյա պատմությամբ և իր հերոսական նվիրվածությամբ քրիստոնեական գաղափարներին: Այն ստեղծվեց Դ դարի սկզբին: Ավելի ուշ հայ եկեղեցու երկու մեծ գործիչներ ա. Սահակն ու ա. Մեսրոպը Ե դարի սկզբին հայ ժողովրդի համար ստեղծեցին իր այբուբենը և ասորական ու հունական բնագրերից ազգային լեզվի թարգմանեցին սուրբ Գիրքը: Քրիստոնեությունն այնքան խոր արմատներ էր նետել հայ ժողովրդի հոգում, որ նա 451 թվականին իր արյամբ էր պաշտպանում Նոր հավատն ու սուրբ Գիրքը: Դա առաջին պատերազմն էր իր պատմության մեջ, որ հայ ժողովուրդը մագդեզական Պարսկաստանի դեմ վարեց՝ հաճուն խղճի ազատության: Պատերազմը տևեց 33 տարի և սկսվելուց 484-ին՝ քրիստոնյա Հայաստանի հաղթանակով:

Սուրբ Գրքի հայերեն թարգմանությունը դարձավ հիմք՝ Հայաստանում կրթության և գրականության ստեղծման համար: Կրոնական գրականության բարձրակետերն են Եզնիկ Կողբացու (Ե դար), ա. Գրիգոր Նարեկացու (Ժ դար), ա. Ներսես Շնորհալու (ԺԲ դար) և Գրիգոր Տաթևացու (ԺԴ դար) աստվածաբանական և փիլիսոփայական երկերը: Ավետարանի լույսով ստեղծվեցին նաև հայ եկեղեցու ինքնուրույն ճարտարապետությունն ու քանդակագործությունը: Հայաստանում այս արվեստներն իրենց բարձունքին հասել են Է, ապա Թ և Ժ դարերում, վերջապես՝ ԺԳ և ԺԴ դարերի միջև:

Նույն ավետարանական լույսով Հայաստանում ծաղկեցին հոգևոր երաժշտությունն ու մանրանկարչությունը: Այսօր Մատենադարանում պահպանվում են ավելի քան 10 հազար ձեռագրեր՝ յոթերորդ դարից սկսած: Մոտա-

վորապես նույնքան ձեռագրեր կան և սփյուռքում. 4 հազար՝ Երուսաղեմի հայոց պատրիարքարանում, 3 հազար՝ Վեներիկի ա. Ղազար վանքում, մնացածը՝ Բեյրութում, Լոնդոնի Բրիտանական թանգարանում, Վաշինգտոնում, այլ գրադարաններում և մասնավոր հավաքածուներում:

Հայոց եկեղեցու համար վճռական նշանակություն ունի այն հանգամանքը, որ այն ազգային եկեղեցի է: Վերջին հազար տարում, մինչև 1918 թվականը, երբ հայերը պետականություն չունեին, հայ եկեղեցին իր կրոնական առաքելության հետ իր վրա վերցրեց ազգային գիտակցության պահպանման խնդիրը: Հայ ժողովրդի հոգևոր և ազգային միասնությունը պահպանվեց և պաշտպանվեց հայ եկեղեցու կողմից:

Մեր օրերին, երբ հայ ժողովրդի հայրենիքը Խորհրդային Հայաստանն է, հայ եկեղեցին Մայր Աթոռ ս. Էջմիածնի ղեկավարությամբ շարունակում է իր պատմական առաքելությունը: Նա պահպանում է նաև հայրենիքում և սփյուռքում ապրող հայերի միասնությունը: Մեր քառամյա կաթողիկոսական գործունեության ընթացքում Մենք գոհունակությամբ համոզվել ենք, որ խորհրդային կառավարությունը բարի կամեցողություն է ցուցաբերում կրոնական և եկեղեցական կյանքի նկատմամբ: Մենք լի ենք հույսով, որ այսպիսի պայմաններում մեր եկեղեցին հետագայում ևս առավել արժանավայել կտարածի Բրիտանոսի պատգամը մեր ժողովրդի կյանքում և պատմության մեջ:

Հարց.—Հայոց առաքելական եկեղեցին ակտիվորեն մասնակցում է խաղաղության պայքարին, որովհետև նա բաժանել է հայ ժողովրդի տառապանքները շատ պատերազմներում: Դուք չե՞ք ասի, արդյոք, երկու խոսք ձեր եկեղեցու ջանքերի մասին՝ խաղաղության համար մղվող պայքարում:

Պատասխան.—Աշխարհում խաղաղության պահպանման գործը շատ մոտ է մեր սրտին: Խաղաղության շարժման սկզբից նեթ մեր եկեղեցին նրան ակտիվ մասնակցություն է ցուցաբերել՝ ելնելով այն խոր համոզումից, որ ժողովուրդների և պետությունների միջև անհրաժեշտ է ստեղծել կապում խաղաղություն՝ խաղաղ և արդար հարաբերություններ: Սա Ավետարանի պատգամն է, միաժամանակ՝ մարդկության ամենամեծ ապաստանը:

Տարբեր հասարակարգերի պետությունների խաղաղ գոյակցության միտքը երազանքն է նախ և առաջ փոքր ժողովուրդների, որոնց պատմությունն այդքան հաճախ լի է եղել ողբերգություններով: Ինչ վերաբերում է հայ ժողովրդին, ապա բավական է հիշեցնել առաջին համաշխարհային պատերազմը, երբ 1915-ին և 1916-ին Արևմտյան Հայաստանում երկու միլիոն հայեր զոհ դարձան Օսմանյան Կայսրության կողմից կազմակերպված ցեղասպանությանը:

Մեր եկեղեցին և նրա հավատարիմ քրիստոնյա հավատացյալները, ինչպես և հայ ժողովրդի բոլոր զավակները, միշտ կաղոթեն և կպայքարեն՝ աշխարհում հաստատուն խաղաղության և պետությունների միջև խաղաղ գոյակցության համար:

Յուրաքանչյուր պատերազմ հանցագործություն է և դժբախտություն՝ բոլոր մասնակիցների համար: Խաղաղ գոյակցության և համագործակցության ուղին բոլոր մարդկանց դեպի բարեկեցություն և երջանկություն տանող միակ ուղին է:

ՄԱՅՐ ԱՌՈՒ Ս. ԷԶՄԻԱՇՆԻ ՆՈՐ ՓԱՌԱՎՈՐ ՀԱԶՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Մեր հայրենիքի վերընթաց հատաշաղի-
մություններուն կողքին և անոր հետ, հե-
տըզհետեւ պայծառացալ ու կայծառաւանա
Մայր Աթոռ ս. Էջմիածինը, մանավանդ
Ամենայն Հայոց Վեհափառ Վազգեն Ա կա-
թողիկոսի գահակալության շրջանին: Պայ-
ծառացալ ու ավելի ևս աշխույժ է հոգևոր
կյանքը և Մայր Աթոռ ս. Էջմիածնէն հոգե-
վոր կյանքի կենարար ճառագայթներ կար-
ձակվին տարաափյուտ հայության վրա:

Այս բոլորին իբրև հետևանք և այս իսկ
պատճառով, Ամենայն Հայոց Հայրապետի
ցուցմունքներով և հովանավորությամբ,
Մայր Աթոռ ս. Էջմիածնի տպարանէն
1969-ին, տասը հազար տպաքանակով,
լույս տեսած էր 2ՈՐՍ ԱՎԵՏԱՐԱՆՆԵՐ-ն
ու ԳՈՐԾԻ ԱՌԱՔԵԼՈՑ-ը, նոր, գիտական
հիմունքներով կառուրված թարգմանու-
թյամբ և գրական արևելահայերենով: Այս
խմանված հրատարակությունը նվիրված էր
հայերեն Աստվածաշունչի առաջին տպա-
գրության, այսինքն Ոսկանյան հրատարա-
կության երեքհարյուրամյակին:

1969-ի առաջին այս թարգմանությունը,
Հայաստանի մեջ շուտով սպառեցալ: Հսկա
աշխատանք, համբերատար պրայտումներ,
բնագրային քաղաքատյուրյուններ պահանջող
այս գործին մասին, արտասահմանի մեր մա-
մուլը դժբաղդաբար իր ատենին, պետք ե-
ղած անդրադարձը չուեցալ և այս շատ
կշտկոր ու ճշանակալից գործին երևումը
գրեթե անճշմար անցալ:

Անցալ տարի, Մայր Աթոռի տպարանէն
դարձալ լույս տեսալ այս անգամ ՆՈՐ
ԿՏԱՎԱՐԱՆ-ը լրիվ, բոլոր գրքերն ալ արե-
վելահայերենի թարգմանված, շատ քնտիր

թուղթի վրա, միջակ ծավալով, գեղեցիկ
տպագրությամբ. արդարև հիանալի հրա-
տարակություն մը, դարձալ տասը հազար
տպաքանակով:

Աստվածաշունչի տպագրության երեք-
հարյուրամյակին առթիվ, Նոր Կտակարա-
նի արևելահայերեն և արևմտահայերեն
թարգմանությունն ու հրատարակությունը,
կառուրված գիտական հիմունքներով և
մասնագետներու կողմէ, որոշված էր 1956-
ին, Գահիրէի մեջ, եպիսկոպոսական ժողո-
վին առիթով:

Ս. ԳՐԵՔԻՆ ԿԱՐԽՈՐԱԿՈՒՄԸ

Այն օրէն ետք երբ մարդկությունը երել-
ցալ պատմության թատերաբեմին վրա, իր
ճակատագիրը սերտորեն, անբաժանելիո-
րեն առնչված էր Աստուծո հետ: Որովհետև
Աստված սկիզբէն ինքզինք հայտնած է
մարդկության, նախ մասնակի, հետո ի լրու-
մըն ժամանակի, ամբողջական կերպով:
Ինչպէս որ երեխային կարծր սնունդ կարելի
չէ տալ, այնպէս ալ սկզբնապէս, մարդկու-
թյան երեխայության դարերուն, քարեշր-
ջության ճանապարհին վրա, Աստվածային
հայտնությունը մասնակի եղած է: Աստված
հայտնված է մարգարէներու միջոցալ, ո-
րոնք ներշնչված էին:

Այս մասին ահալախիկ վկայություններ.
«Եւ աւէ Տէր ցՄովսէս. գրեալ գալոյ առ ի
լիշատակ ի գիրս» (Ելից ԺԷ 14).

«Զի ոչ եթէ դուք իցէք որ խօսիցիքն, այլ
Հոգին Հօր ձերոյ որ խօսիցի ի ձեզ»
(Մատթ. Ժ 20).

«Իրենց կարողությամբ ու փափաքով չէ

որ մարգարեացան մարդիկ հին ատեն, այլ ազդեմամբ «ս. Հոգևոյն, Աստուծո խոսքերը պատմեցին» (Բ Պետ. Ա 21):

Հետո Հիսուս աշխարհ գալով բերավ Աստուծո ամբողջական հայտնությունը: Քրիստոսն աստուծական դեմք մըն է. Իր մասին Հռոմեական կայսրության ժամանակակից պատմիչները վկայեցին: Ծննդատարապես Աստուծո որդի ըլլալը բարձրադասակ խոստովանողները, Իր աշակերտները, առաքյալները, և բազմաթիվ ուրիշներ, մարտիրոսացան: Մարդիկ միայն ճշմարտության համար վկայելով, կրնան նահատակվիլ: Հիսուս հրաշքներ գործեց, քարոզեց, մեռավ այսպիսի հարություն առալ վեհեղևներէն:

Աշխարհի վրա կրօնական շատ առաջնորդներ եկան, բայց անոնցմէ ոչ ոք մարդկությունը շատ սիրելուն համար իր անձը զոհ տվաւ. ամենքն ալ եկան ապրելու: Քրիստոս միայն խաչը բերավ, ուստի՝ զոհողության, սիրո ճանապարհը ցույց տվաւ: Հիսուսն զատ, ոչ մեկ կրօնական առաջնորդի ծնունդէն առաջ կանխագուշակություններ եղած են իր գալուստի մասին: Միայն Հիսուսի մարդանալուն վերաբերմամբ մարգարեական կանխասացություններ եղան և ասոնք լեզուն են Հիւս Կոտակարանին մէջ: Իրմով մարդկային պատմությունը երկուքի կիսակեցաւ, Քրիստոսն առաջ և Քրիստոսէ ետք թվարկությանը կամ հաշվարկումով:

Նոր Կտակարանը միայն Հիսուսի պատմությունը չէ. այլ կպարտական Աստուծո կամբ: Այս մասին կրնանք գիտնալ, երբ նարդանք լրիվ Նոր Կտակարանը: Ահալասիկ վկայությունը.— «Աստված Իր կամբք, նպատակը ճանչցուց Քրիստոսով ի լրան ժամանակի, ըստ Իր հստության, ամեն ինչ երկնքի և երկրի վրա Քրիստոսով բովանդակելու համար» (Եփես. Ա 10):

Մեր նախնիք գիտեին այս բոլորը և շատ ավելին, համաձայն հայ մատենագրության, վասնզի փութով և ջանասիրությամբ ձեռնարկեցին Աստվածաշունչի թարգմանության չափազանց դժվար և անագին գործին: Ե դարուն սկիզբը արդի իմաստով բառարաններ, թոյլոք, մէլան, էլեկտրականություն չկային, ոչ ալ արդիական ինքնահոս գրիչներ: Բայց ստուգության վերածված հավատքը միեւն գիրենք, դժվարությունները հաղթելու: Թարգմանչական գործը, առաջին «փութականի» թարգմանությունէն մը ետք, բժախնգիր արքայազնություններու ենթարկվելով, հաջողությամբ պատկերացաւ և ինչպէս գիտենք, թարգմանություններու թագուհին է:

Այլ իմաստով, ուրիշ կարևորություն մը ևս ունեն և ունի այդ թարգմանությունը: Նույն լեզուն, նույն դասկանալը, նույնիսկ լեզ-

վին միօրինակությունը, ազգի մը բոլոր գալականները իրար կապող ամենէն ուժեղ միջոցներէն մեկն է:

Իհարկէ վերոհիշյալ հաստատումները ս. Գրքին շատագույնությունը ընել չի նշանակեր երբեք. դարերու ընթացքին, եկեղեցւոյ լուսամտի և մեծահամբաւ հայերէն կատարած են այդ: Ս. Գրքը հատկապէս մեր ժողովուրդի մտքին ու սրտին մէջ իր ուրույն ու բարձր տեղը ունի:

Մի՞ որովհետեւ գրաբար մեր ոսկեղենի լեզուն այժմ օգտագործողները սակավաթիվ են, հետևաբար Մայր Աթոռի միջոցաւ հրատարակված այս նոր, գիտական հիմունքներու վրա և բարեխղճությամբ կատարված թարգմանությունը կստանա յուրահատուկ կարևորություն, իբրև անհրաժեշտություն և ուրեմն շնորհակալորելի գործ:

Գրոց զյուսի պատճառը գլխավորաբար, ս. Գրքի թարգմանությունն էր, ինչպէս ս. Մեսրոպ Մաշտոցի կենսագիր՝ Կորյուն Սքանչելին կվկայէ.— «Մովսէս և մարգարէներ, Պողոս և առաքյալներու խումբը, Քրիստոսի Ավետարանին հետ հայաբարբառ, հայրենախոս եղան»:

Ներկայիս, այլևս անհետաձգելի պահանջ մըն էր արդի գործածական, պետական լեզվով ս. Գրքը ի ձեռին ունենալ: Լեզուն, ժողովուրդի մը քաղաքական, տնտեսական, ընկերային պայմաններուն, այսինքն վերիվարումներուն հետ շրջափոխության կենթարկվի, ըստ այնմ անկման և բարձրացման կորագիծ մը ստեղծելով: Օրինակ, ԺԳ դարէն ետք, հայ լեզուն անկման երկար շրջան մը ունեցաւ. երևան եկան գաղտաբարբառներ, ռասկոբն լեզու, կն: Այս բոլորը շարունակվեցան դժբաղաբար մինչև ԺԹ դար: Նոր ժամանակներու մէջ սակայն, մեր հայրենիքի հսկայական վերելքին հետ, նպատակահարմար էր որ ունենայինք արդի, գրական լեզվով, հասկնալի և դյուրամատչելի ՆՈՐ ԿՏԱՎԱՐՆԵՐ:

Մոտավորապէս հարյուր հիսուն տարիներէ ի վեր հրապարակի վրա է աճելու, Ս. Գրոց Հնչերության միջոցաւ կատարված հրատարակություն մը արևմտահայերենով որը բազմաթիվ տպագրություններ ալ ունեցաւ: Իր ժամանակին համար վերին աստիճանի օգտակար թարգմանություն մըն էր որը սակայն ներկայիս, դժբաղդարապաղան լեզու և հինցած ոճ կցուցարե: Քանի մը օրինակներ բաւարար են կտոր հիմ բացատրելու համար, այդ թարգմանություն մը այլևս անընդունելի ըլլալուն մասին:

«Երկու օրէն ետև ելալ անկէ և Գալիլիա գնաց»:

«Զրուցեցին իր աշակերտները սա ամեն բաներուն վրայով»:

«Այն օրեն ետև, պատրաստվելով երուսաղեմ ելան»: Եվկն:

Նոր Կտակարանի գրքերը

27 գրքեր կարտունակե Նոր Կտակարանը, տասներկու տարբեր հեղինակներե, որոնց գործերը թեև իրարմե բոլորովին կզանազանվին, սակայն ամենքն ալ ի վերջո կհանգին հասարակաց միության մը, ցույց տալու համար Աստուծո հայրությունն ու սերը մարդոց նկատմամբ և փրկությունը Քրիստոսի միջոցաւ:

Չորս Ավետարաններն առաջին երեքը համաբարբառ կամ համատեւ կկոչվին (Synoptique), որովհետև իրար կնմանին և ներքին հարակցություն մը ունին. չորսն ալ կպատմեն Հիսուսի կյանքը, ուսուցումը, հրաշքները, մահն ու հարությունը և հավիտենական թագավորությունը:

«Գործք Առաքելոց»-ը կպատմե Ավետարանին տարածվիլը, Երուսաղեմէ մինչև կայարության մայրաքաղաք՝ Հռոմ. եկեղեցիներու կազմակերպվիլն ու առաջին քրիստոնյաներուն նահատակվիլը:

Պողոս առաքյալի տասներե թուղթերը կամ նամակները կուսուցանեն Քրիստոսի վարդապետությունը, ինչպես նորահաստատ եկեղեցիներուն, այնպես ալ բոլոր քրիստոնյաներուն:

Իսկ ընդհանրական կոչված ութ նամակներն ուման ուղղված են նոր հաստատված եկեղեցիներուն, ուման նորադարձ քրիստոնյաներուն կամ ընդհանրապես հավատացյալներուն, անոնց միշտ ուղղություն տալու և ուսուցանելու համար ճշմարտության խոսքը:

Վերջին գիրքը, «Յալոնություն Յովհաննոս», բոլորովին տարբեր է պարունակությամբ, գրված՝ խորհրդանշական իմաստներով: Կբացատրե թե Հիսուս Փրկիչ է, տերն է աշխարհին ու հավիտենական կյանքին: Նոր Կտակարանի բոլոր գրքերն ալ գրված են 50-են մինչև 90 թվականը:

Այս գրքերու ընթերցումը ուղիղ հասկնալու համար, հոգեկուս Գաբեգին եպս. Տրապիզոնի, արևմտահայերենի թարգմանած Նոր Կտակարանի իր հառաջաբանին մեջ կրես ի միջի ալլոց.— «Երբ կկարդանք Նոր Կտակարանի գործ մը, պարտքն միշտ նկատի ունենալ որ հեղինակը շահագործված է ոչ թե գիտությամբ, պատմությամբ, գրականությամբ կամ տնտեսագիտությամբ, այլ կրոնական ճշմարտությամբ: Ավետարանները օրինակ, նաև պատմական գործեր են. բայց եթե անոնք բնկվին միայն

այս տեսակետեն, դժվար չէ ցույց տալ թե անոնք հաճախ շիտո՞ք և անգոհացուցիչ են: Հեղինակները ունեցած են այն խոր քննրոնությո՞ք, Աստված խոսած է մարդոց՝ Հիսուս Քրիստոսի միջոցաւ, ուստի ջանացած են նկարել Անոր երկրավոր կյանքը, երկվան բերելու համար բան մը Անոր աստվածային զանալությունեն: Բոլոր գրություններն մեջ կրոնական շարժառիթն է որ առաջնահերթ է: Տեղեկություններ, քննության, բարոյական խորհուրդներ կուտան, նույնիսկ գրական հաճույք: Բայց եթե չմոտենանք անոնց կրոնական ոգիով, անոնք երբեք պիտի չհայտնեն մեզ իրենց իրական իմաստը: Ասանց այդ ոգին արդեն, կյանքը խոշոր դատարկություն մը պիտի ունենար՝

Օտար թարգմանություններ

Չափազանց հատկանշական երևույթ է, որ վերջին քառորդ դարուն, ամենուրեք աշխույժ աշխատանք հառաջ տարվեցաւ, օտար թագմաթիվ լեզուներով ևս ս. Գրքի արդիական թարգմանություններու ձեռնարկելու համար: Արդեն իսկ կատարված թարգմանություններու գլխավորներն հիշենք, իրենց կարևորության և ունեցած ճշանակության համար հետևյալները.

The New English Bible Նոր Կտակարանը արդի, գործածական անգլերեն լեզվին վերածված, տասնմեկ տարբեր եկեղեցիներու ներկայացուցիչներէ մասնագետ-բրոֆեսորներու համագործակցությամբ: 1948-ին սկսված, շատ լուրջ և գիտական հիմունքներով աշխատանքը աւարտեցաւ 1961-ին:

The New English Bible Հին Կտակարանի, նույն տասնմեկ եկեղեցիներու մասնագետ-լեզվագետներու համագործակցությամբ թարգմանությունը աւարտեցաւ և հրատարակվեցաւ 1970-ին Լոնդոնի մեջ:

La Bible de Jerusalem թագմաթիվ աստվածաբաններու, մասնագետներու, լեզվագետներու գործակցությամբ թարգմանված, Հին և Նոր Կտակարանը միասին, հրատարակվեցաւ Բարիզի մեջ 1956-ին: Նույնին անգլերեն հրատարակությունը երևցաւ 1966-ին:

Նոր Կտակարանի ամերիկյան, արդի անգլիերենով, ավելի դյուրահասկնալի նոր հրատարակությունը, քիչ մը մեկնողական ոճով, պատրաստվեցաւ Աստվածաշունչ գրքի մասնագետ գիտնականներու խոշոր

¹ Գաբեգին եպս. Տրապիզոնի. Աստվածաշունչ Նոր Կտակարան, ճախարան, Պոնոնու-Արես, 1943, էջ 17:

խումբի մը կողմն և հրատարակեցաւ Ս. Գրոց Միացյալ Ընկերության միջոցաւ 1966-ին:

Նոր Կտակարանի արդի ռուսերեն լեզվին վերածված հատորը սկսված 1958-ին, ավարտեցաւ 1970-ին և հրատարակեցաւ Բրիտանական Ս. Գրոց Ընկերության միջոցաւ Լոնտոնի մէջ:

Ներկայիս Լեմինկրատի աստվածաբանական ճեմարանին մէջ Նոր Կտակարանի արդի ռուսերեն գրական լեզվին վերածվելիք հրատարակության վրա կաշխատին խումբ մը ձեռնհաս մասնագետներ: Այս բնութագրի մէջ եղող գործեն հատվածներ արդէն հրատարակեցան, Մոսկվայի ռուս պրոպագանդայի Պատրիարքարանի պաշտոնական ամսագրին հաշորդական թիվերուն մէջ, անցյալ տարի:

Ի հարկէ կան նաև վերոհիշյալներեն ճշգրտագրողությունն ունեցող գործածվող լեզուներով, արդիական թարգմանություններ կան հրատարակություններ, ինչպես արաբերեն գրական լեզվով հրատարակություններ որմէ առաջ գոյություն ունէր աղմատ լեզվով ու տարօրինակ ոճով արաբերենն ու Գիրք մը:

Ռուսիներեն լեզվով, ռումեն ուղղափառ Պատրիարքարանի հովանավորությամբ Հին և Նոր Կտակարաններու հրատարակություն՝ որը քանի մը տարի առաջ լույս տեսաւ Պուրպուրեթի մէջ, երկու հարյուր հազար տպաքանակով:

Նոր Կտակարանի երկիցս հրատարակության մեր թարգմանիչները

Նոր Կտակարանը լրիվ, արևելահայերեն արդի գրական լեզվին վերածելու ծանր, համբերատար, մասնագիտական աշխատանք և խոր հմտություն պահանջող գործը կատարած են, ըստ 1969-ի և 1975-ի հրատարակության վերջին էջերուն վրա երեցող վերջաբան հայտարարության, ու էջմիածնի հոգևոր ճեմարանի երեք հայտնի դասախոսներ. Արթուր Հատիտյան, Պարզ Ծախաչյան, Սամվել Անթոնյան, աչքի առնելով ունենալով նախ 1892-ին ապա 1895 թվականին Կ. Պոլսո մէջ ի լույս բնծայված գրաբար ընտիր օրինակը: Նոր Կտակարանի այս թարգմանությունը կատարած են հունարեն բնագրին հետ համեմատելով և ավելին, արդի ընթերցողին մատչելի, հասկնալի ընծայելու համար օգտագործած են նաև

- 1) Ecolé Biblique-ի La Sainte Bible-ը 1956-ի տպագրություն.
- 2) The Holy Bible Oxford University Press 1962-ի տպագրություն.

- 3) N. T. Traduction Oecumenique de la Bible 1972 -ի տպագրություն, ինչպես նաև այլ գիտական հրատարակություններ:

Թարգմանության բնագրային ճշգրտներ կատարած են նաև մեր եկեղեցւոյ առաջավոր և հմուտ հոգևորականներն գերշ. տ. Տիրան արքեպս. Ներսիսյան և Նորայր արքեպս. Պողոսյան, հիմ ունենալով Նոր Կտակարանի օտար լեզուներով գիտական վերջին հրատարակությունները:

Բարեխղճությունը ծայր աստիճանին հասցնելով, թարգմանիչներու պատվական այս խումբը, տպագրութենէն առաջ, ձեռագիրը Լոնտոնի մէջ քննել տված է, ու Գրոց մասնագետ լեզվագետներու և գիտնականներու, համեմատելու համար հունարեն լավագույն օրինակներու հետ: Բնականաբար այսպիսի խղճմտությամբ ապահովված է բնագրի հարազատ վերարտադրությունը:

Հարկ կա՝ այլևս վերստին հաստատելու թէ իր օգտակարության, մանավանդ ճշգրտության համար, մաքուր և թծախնդիր կերպով տպագրված այս հրատարակությամբ Մայր Աթոռ ու Էջմիածին անտարակույս, եկեղեցանկեր ու ազգաշեն բազմաթիվ իր գործերուն վրա շատ գնահատելի ու պատվաբեր գործ մը ևս կալվեցեն, Նոր Կտակարանը ավելի ևս ժողովրդականացնելով:

Որքան ալ կատարված տքնաջան աշխատանքին մասին բացատրություններ տրվին, ավելի նպատակահարմար և հասկնալի կըլլա, թարգմանութենէն փոքրիկ հատված մը արտագրել այստեղ որպէս նմուշ, ցույց տալու համար պարզ, սահուն, անմիջական ոճը, որը բնագրին ճշգրիտ վերարտադրության կողքին, առաջնորդող մտահոգություններ եղած է անշուշտ թարգմանիչներուն, որպէսզի, Նոր Կտակարանը աստվել ևս մատչելի դառնա ժողովրդական լայն զանգվածներուն: Կարտագրեն ԳՈՐԾԲ ԱՌԱՋԵՆՈՑ-ի ԺԷ գլուխ 22-րդ համարեն սկըսյալ. Պողոս առաքյալի ճառը:

«Պողոս կանգնեց Արիպագոսի մէջտեղում և առաջ. Աթենացիներ, տեսնում եմ, որ դուք ըստ ամենայնի ջնքմտեղի հավատասեր եք, քանի որ շրջելով ու տեսնելով ձեր պաշտամենքը՝ գտա նաև մի քաղցին, որի վրա գրված էր՝ «Անձամոք» Աստծուն»: ում դուք առանց ճանաչելու եք պաշտում, եւ նույնն եմ քարոզում ձեզ: Աստված որ ստեղծեց այս աշխարհը և այն ամենը, որ հրա մէջ կա, նա է Տերը երկրի և երկրի. նա ձեռակերտ տաճարներում չի բնակվում, ոչ էլ մարդկանց ձեռքերով է պաշտվում, որպէս թէ մի քանի կարտու լիներ: Նա է տալիս ամեն բանի կյանք և շունչ և ամեն

ինչ: Մեկ արյունից ստեղծեց մարդկանց բոլոր ազգերը, որ բնակվեն ամբողջ երկրի երեսին. հաստատեց նախակարգալ ժամանակները և դրեց նրանց բնակության սահմանները, որ փնտռեն Աստծուն, որպեսզի թերևս խաթիստիեն դեսի նա, գտնեն նրան. թեև նա մեզինից յուրաքանչյուրիցս հեռու էլ չէ, քանի որ նրանով սարում ենք և շարժվում ենք և կանք, ինչպես ձեր բանաստեղծներից ոմանք ասացին թե՛ իսկը նրա զարմն ենք: Եվ արդ, որովհետև Աստուծո զարմն ենք, չպետք է կարծենք թե, աստվածայինը մեմ է և ոսկուն կամ արծաթին կամ քարին, որոնք ճարտարությանը և մարդու խելքով են քանդակված: Բայց Աստված, անգիտության ժամանակներն անտես առնելով, այժմ այն է պատվիրում մարդկանց, որ ամեն ոք ապաշխարի. քանի որ հաստատել է մի օր, երբ աշխարհը արդարությանը պիտի դառնի այն մարդու ձեռքով, որի միջոցով որոշեց հավաստիք տալ ամենքին՝ նրան մեռելաներից հարություն տալով:

Երբ լսեցին մեռելների հարության մասին, ոմանք ծաղրի էին ենթարկում. ոմանք էլ ասում էին. «Մի ուրիշ անգամ կսենք քեզնից այդ մասին»: Ապա Պողոսը նրանց միջից ելավ գնաց:

Հայերեն լեզվով Աստվածաշունչի տպագրություններ

Հայերեն լեզվով Աստվածաշունչի առաջին տպագրությունը կատարված է Մայր Աթոռ Էջմիածնի հոգաժողությանը, երջանկահիշատակ Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի օրով, Ոսկան վարդապետ Երևանեցիի ձեռամբ, Սմաղեղտամի մեջ 1666-ին:

Բ տպագրությունը 1705-ին, Կ. Պոլստ մեջ:

Գ տպագրությունը 1733-ին, Վենետիկի մեջ, Մխիթար Սեբաստացի արքանոր միջոցով և իր ժամանակին համար հիմնադի տպագրությունն մը արդարև:

Ը տպագրությունը 1892-ին, դարձյալ Կ. Պոլստ մեջ, Ներսես պատրիարք Վարժապետյանի միջոցով ու ջանքերով: Պատրիարքը փախաբեղով որ Աստվածաշունչը շատ աժան գնով վաճառվի և ամեն հալ տան մեջ օրհնակ մը գտնվի, Ս. Գրոց Ընկերությանն հետ համաձայնությունն մը կողմացնե որպեսզի հոգացվին տպագրության ծախքերը: Բայց հայերեն Աստվածաշունչը հունարեն Յոթանասանցի օրհնակին վրայեն թարգմանված ըլլալով և Ընկերությունը, համաձայն իր կանոնադրության, երբայական օրհնակին վրայեն կատարված թարգմանություններու տպագրությունը միայն հաճան առնելուն համար, հայերեն հատու-

րին էջերուն ներքև, երբայականին հետ ունեցած տարբերությունները նշանակած է: Նույնին 1895-ի երկրորդ հրատարակության ընթացքին, գործին վրա հսկած են Հովհաննես քահանա Հյունքյարպալենտյան, (հունագետ), պատվելի Ավետիս Կոստանյան (երբայագետ), Մատթաթա Գարագաշյան (գրող)²:

Վերոհիշյալներն զատ, այլ տպագրության մը ձեռնարկված է, ս. Էջմիածնի մեջ, երջանկահիշատակ Մկրտիչ Խրիմյան կաթողիկոսի օրով, սակայն սկզբնական էջերը միայն շարվելէ ետք, աշխատանքները չեն շարունակված, մեր ժողովուրդին համար ստեղծված անտեսելի և անկարելի պայմաններուն պատճառով:

Որեմն շուրջ մեկ դարէ ի վեր առաջին անգամն ըլլալով Մայր Աթոռ Էջմիածնի հաջողեցալ, Ամենայն Հայոց Վազգեն Ա Հայրապետի հոգաժողության ու խնամքով, Նոր Կոստանյանի գիտական թարգմանությունը պատրաստել տալ ու երկիցս հրատարակել Մայր Աթոռ տպարանն:

Բնականաբար մնան հրատարակություն, Մայր Աթոռ Էջմիածնի հոգևոր-մշակութային գործունեության և առաքելության ճանապարհին վրա, վերին աստիճանի հատկանշական և մնացուն արժեք ներկայացնող իրագործում մըն է, որը ողջունելի է խոր ուրախությամբ:

Լեզվական առանձնահատկություններ և ոճ

Ինչ կվերաբերի այս թարգմանության բնագրային ճշգրտության, փորձեցի որքան որ հնարավոր էր ձեռնամուխ ըլլալ հատկապես Սաքեղական թուղթերու դժվար հասկնալի մասերեն հատվածներ բաղդատելու բնագրին հետ: Պետք է խոստովանիլ անվարան թե բնագրային բաղդատությունը ցույց կուտա թե հայերեն լեզվական ու ոճային առանձնահատկություններու և դարձվածքներու համար, ոնէ հատվածի իմաստը դուրս չափով իսկ փոփոխության ենթարկված կամ բաճով մը գիշած չէ: Կարելի էր դյուրությանը օրհնակներ տալ, սակայն այդ բոլորը մեզ պիտի առաջնորդեն մասնագիտական մանրամասնություններու և առանձին ուսումնասիրության բնույթ պիտի տալին այս հոդվածին:

Գիտենք թե երբեմն լեզվական սահմանություն և փայլուն ոճ պահելու համար, շատ հեղինակներ, թարգմանության առիթով, բնագրին հետ թարգմանամբ, իմաստի խաթարումներ և զեղծումներ կկատարեն, փոր-

² Բարգեն կաթողիկոս Կյուլեսեյան. «Հասկ», 1935, թիվ 2, էջ 13:

ձուլություն՝ որուն դշուրով կենթարկվին բազմաթիվ թարգմանիչներ:

Այս թարգմանության ակնբախ հատկանիշներն են հատկությունն և պարզությունն, ասեմեն ավելի փնտրված առաքինությունները և. Գրքի թարգմանության պարագայակն:

Չորս Ավետարաններուն բաղդատամբ, Առաքելական թուղթերուն թարգմանությունը շատ ավելի դժվար է. ունէ մեկը որ այդ փորձը կկատարէ, ինքզինքը անմիջապէս քարոյ դժվարություններու առջև կգտնէ: Վեներտիկի Միխիթարյան միաբանության մասկին աբբահայր, ողբացալ Ռ. Սրապիոն վարդապետ Ուլունոյան, որ 1952-ին Վեներտիկի մէջ հրատարակած էր Նոր Կտակարանը շատ գեղեցիկ և մեծածախս տպագրությամբ, զանց առած էր Առաքելական թուղթերուն արդի արևմտահայերենի վերածելու աշխատանքը, շատ հալանարար մկատի ունենալով իր առջև բազմացող խոշոր դժվարությունները: Իր հրատարակածը ուրեմն միայն Չորս Ավետարաններն են:

Վիեննական Միխիթարյան միաբանության կողմէն ձեռնարկված ունէ ւ. Գրքը թարգմանության ծանոթ չեմ դժբաղդաբար:

Իսկ Պունու-Ալբուի, Հայ Կեդրոնի տպարանէն 1943-ին Գարեգին եպս. Տրապիզոնի, Թունյան եղբայրներու ծախքով հրատարակած Նոր Կտակարանի արևմտահայերեն թարգմանությամբ հրատարակությունը, անգումանէի է այլև: Գործն ալ օգտակար ըլլալու միտումով, բնագրային հարգատրություն ունենալէ ավելի, տեղ-տեղ ազատ թարգմանություն է:

Կ. Պոլսոյ աշտու պատրիարք, ամեն. առ. Ենոքիք արքեպս. Գալուստյան, Չորս Ավետարանները թարգմանեց արևմտահայերեն և հրատարակեց 1966-ին. հայերեն Աստվածաշունչի առաջին տպագրության երեք-հարյուրամյակին առիթով, ժողովուրդին օգտակար ըլլալու ազգին մտահոգությամբ: Յուրաքանչյուր Ավետարան առանձին, փոքրիկ, գրպանի գրքույկի ձևով: Այս հրատարակության ծախքը հոգացած է Ս. Գրքը Ընկերությունը:

Մայր Աթոռի մէջ արևելահայերեն թարգմանության գիտական աշխատանք կատարված ըլլալուն տվյալները կերեհի դարձալ որովհետև բոլոր տարբերակները, բարեխղճորեն ու բացառիկ ճշգրտությամբ ճշկած են յուրաքանչյուր էջի ներքև, հատուկ թվագրումով:

Իրոք, հաճոյք մըն է կարդալ սանուն ունով, գեղեցիկ արտահայտչականությամբ երևան բերված այս թարգմանությունը որը կարծես թէ մախրեթաց չունի արևելահայերենով որքան որ ինծի հայտնի է:

Գարեգին եպս. Տրապիզոնի, Նոր Կտակարանի թարգմանության իր հառաջարկին մէջ կգրէ թէ «Այս Գիրքը գրական հատոր մը չէ, ոչ ալ գոյրկ է բանաստեղծական պարզ և անուշ ոգիէ մը որ Ավետարաններուն մէջ կշնէ շերմիկ ու կծալալի, հյուսելով առակներու սրտագրալ պատկերները, ինչպէս Բարի Սամարացին, Անիիսլ Տնտար, Դատալորը, Անտակ որդին և շատ ուրիշներ: Ոգին, գորգորալից թեւծելով դաշտի շուշաններու, անդատանի հասկերու և հունձքերու, փարախներու զտնուկներու, երկնքի թռչուններու և մանուկներու հուլներուն, որոնց ծանոթությունը գիտուններէն և իմաստուններէն ծածկված, հայտնված է ու կհայտնվի տղայոց»:

Ս. Գրքին տեղը մեր կյանքին մէջ

Չափազանցություն ըրած չենք ըլլար հաստատելով թէ Նոր Կտակարանի այս արդի, գեղեցիկ հրատարակությունը, հակառակ տպագրութենէն առաջ երևան եկած մանր դժվարություններուն որոնք հաղթահարվեցան, Մայր Աթոռի շինարար աշխատանքներու և գործերու շարքին նոր շրջան մը կսկսի:

Հայերեն ւ. Գիրքը, մեր ամենահարուստ ժառանգություններէն մին է անկասկած. այժմ առավել քան երբեք, ակնհայտ է այս իրողությունը մեր ժողովուրդի կեանք, աշխարհասփյուռ ու աշխարհաքաղաքացի վիճակի մէջ ըլլալուն պատճառով: Մայրենի լեզվով գրված, հասկնալի ձևով ներկայացված ւ. Գիրքը կարդալով, հարազատ անկում մը կգտնենք. մեր տոհմիկ զգացումներու վերհաշունմով կհաղորդվինք մեր անցյալին հան մեր հայրենիքին հետ, վարճի հալ լեզուն մեր ինքնությունը բնորոշող, ուժգնորեն շեշտող, մեր ազգային լիճնության խոսցումն է: Այսպէս էր անցյալին, ամբողջ տասնհինգ դար շարունակ, բոլոր դժվարություններու մէջ մեր նախնիք իրենց պիտիականքն ու կազույրը անոր մէջ գտան, ներշնչվեցան:

Սկիզբէն ի վեր հայոց հարգանքն ու սերը այնքան խոր է Ավետարանին հանդէպ որ եկեղեցւոյ մէջ միշտ զայն բուճած և վեր բարձրացուցած ենք անպայման վարշտանալով կամ գեղեցկորեն բանված դաստառալով:

Քրիստոնեությունը Հայոց աշխարհին մէջ արմատանալէ ետք, այլևս Ավետարանէն ճառագայթող հոգևոր լույսով պայծառացան մեր նախնիք ու պարսկներու դէմ մղված պատմական ու ժողովրդական պատերազ-

³ Գարեգին եպս. Տրապիզոնի, անդ:

մի առիթով, մեր բնտիր պատմիչներեն Ե-դիշեն, ժողովուրդին հավատքը խոսացուց հիմնադիր բացատրությամբ մը. «Հայր մեր գտորք Աւետարանն գիտեմք եւ մայր՝ գաւաթեղական եկեղեցին կաթողիկէ»: Այդպէս հավատաց ու դեռ այդպէս ալ կհավատա հայ ժողովուրդը:

Երևանի պետական Մատենադարանին մեջ պահվող մագաղաթ-ձեռագիրներու ամենատարած թիվը կկազմեն Ավետարանները անկախաւ, այս գրքերու Գրքին վերաբերմամբ մեր նախնաց հավատքեն բխած սիրովը երբեմն գեղեցկորեն ծաղկված կամ սրբապատկերներով մանրանկարված:

Հայոց պատմության տագնապներով, վերիվայրումներով, հաղթություններով ու պարտություններով լեցուն դարերու ընթացքին, նախարարական, իշխանական, ալատական բոլոր հարստությունները, կենսա-ձեպերը գացին. գահերը նաև գացին. բայց Գիրքը մնաց: Հայոց քաջազն այրումին չկրցավ ապահովել մեր անվտանգ պահպանությունը, գոյությունը: Բայց ս. Գրքի հայերեն թարգմանության համար հնարված սուրի և թուրի համազոր երկաթագրերը մնացին, Գիրքը մեզ պահեց, հոգևորապես գինեղով, բազմաթիվ բարոյական հաղթանակներ շահելու, մինչև նոր օրերու հառաջախիտություններով լեցուն և աննախադեպ վերափոխումներու պայծառ այս շրջանը:

Հին Կոստանդնուպոլսի հետ բաղդատած, անշուշտ ավելի հարգված է Նոր Կոստանդնուքը. քան որ Հիսուս Ինքն իսկ շեշտեց իր վարդապետությամբ այս իրողությունը: Հին Ուխտեն ետք, այսինքն Հիսուսի աշխարհ գալստյամբ, քրիստոնյաները իբրև մանկունք Տիոք, Աստուծո վերաբերմամբ, կատարյալ եղան իմաստությամբ, որովհետև նախապես մարգարեական ուսուցումներու

կայծով բավարարված էին, ինչպես գեղեցկորեն կբացատրե մեր ս. Ներսէս Շնորհաւիւն. բայց Քրիստոսով, փոխանակ կայծին, ամենքը արքին գինին գմայլեցուցիչ, որովհետև Քրիստոս եղավ կամավոր պատուաբազ:

Քրիստոնյա աշխարհին մեջ ամենուրեք, դատարաններու և առջաններու առջև, մարդիկ կերդնուն Ավետարանով կամ ձեռքը երկյուղածությամբ Ավետարանին վրա դնելով:

Մեզ հայտնի է արդեն և ուրախ ենք առայն թէ Սուրբ Գրոց Հնկերությունը պաշտոնապես դիմած ըլլալով Վեհափառ Հայրապետին, Անոր քարտեհած արտոնությունը խնդրած է որպէսզի Նոր Կոստանդնուքի այս հրատարակությունը, քսան հազար տպաքանակով վերատպի Հոգւ Գոնկի մեջ:

Նոր Կոստանդնուքի արդի հայերեն պետական լեզվին թարգմանվելու և երկու անգամ տասնյակ հազարավոր օրինակներով, բնտիր թողնելու ու սիրուն տպագրությամբ հրատարակվելուն առիթով, վերին աստիճանի գնահատելի է թարգմանիչ բրոֆեսորներուն բարեխիղճ ու հաջող գործը: Անոնք շնորհավորելի են ըստ ամենայնի, այս շնորհակալ աշխատանքին համար:

Ավետարանին մեջ ամփոփված Աստուծո խոսքը լույս է, ճշմարտություն է, կյանք է: «Բանք քո ճրագ են ոտից իմոց եւ լույս տան շաղաք իմոց». կգրէ սաղմոսեզուն: Արդ՝ զայն արդի գործածական ու գրական լեզվին վերածելով, Մայր Աթոռ ս. Էջմիածին, Ամենայն Հայոց Վեհափառ Վազգեն Ա. կաթողիկոսի խնամքով և հովանավորությամբ, անգամ մը ևս երաշխիք կուտա Իր հոգևոր զավակները առաջնորդելու, մխիթարելու, հովանավորող Իր թներուն ներքև:

Աղեքսանդրիա





Գրքերի հեղ

ԵՂԻՎԱՐԴ
(ԵՂԻԾԵ ՊԱՏՐԻԱՐԷ ՏԵՐՏԵՐՅԱՆ)

«ՀԵԹԱՆՈՍԱՅ ԱՌԱՔՅԱԼԸ»,

ԵՐՈՒՍԱԴԵՄ,
ՏՊԱՐԱՆ ՍՐԲՈՑ ՀԱՎՈՐՅԱՆՑ,
1975, 192 էջ

«Կրոնական գրականության ընթերցող-ներու»¹ սեղանին է դրված Եղիվարդի՝ Երուսաղեմի հայոց գրագետ և բանաստեղծ Եղիշե պատրիարք Տերտերյանի վերոհիշյալ արժեքավոր ու հոգեշահ ուսումնասիրությունը, որ ներկայացվում է «Կյանքն ու գործը քրիստոնեության մեծ փողահարին, որ Հեթանոսաց Առաքյալ կոորչորջվի»²:

Բովանդակայից սույն ուսումնասիրությունը բաղկանում է երկու բաժիններից.

Մասն առաջին. ինը գլուխ (էջ 7—62):

Մասն երկրորդ. տասնհինգ գլուխ (էջ 64—192):

Ուսումնասիրությունը բացվում է կոտ, հմտալից, տերտերյանական գեղեցիկ «Երկու խոսք» հատաչաբանով, որ սրբազան

հեղինակը ներկայացնում է սույն հատորի գրության շարժառիթներն ու նպատակը:

Այսօր մեր եկեղեցական մատենագրության անդատաւանը չափազանց աղքատ է: Եղիվարդն այն սակավաթիվ եկեղեցական գրողներից է, որի արձակ ստեղծագործությունն իր վրա է կրում մեր կրոնական դասական գրականության դրոշմը:

Այս կալվածի մեջ նա շարունակել ու զարգացրել է անցյալի այդ գրականության ավանդությունները՝ նոր բովանդակություն, ինքնատիպ ու թարմ արտահայտչակազմություն հաղորդելով դրանց:

Եղիվարդն իր հարուստ ներաշխարհով, իր ապրումներով ու հույզերով հավատալիք ու ներշնչված հոգևորական է, որ նոր խոսք, նոր շունչ է հաղորդել իր սրտին մոտ, իր էությունը հարազատ իր մշակված աստվածաշնչական թեմաներին՝ դրանք

¹ Եղիվարդ, Հեթանոսաց Առաքյալը, էջ 1:

² Կոյըն, էջ 1:

դարձնելով միաժամանակ համահնչուն մեր օրերի հավատացյալների հոգեբանությանը, հոգևոր մտորումներին, ապրումներին ու հույզերին:

Սրբազան հեղինակը Պողոս առաքյալին տվել է այսօրվա ճշմարիտ քարոզչի երանգ ու գույն, ժամանակի շնչատություն: Հեթանոսաց Առաքյալը պատկանում է որքան անցյալին, նույնքան նաև ներկային: Նա մեր ժամանակակիցն է իր Ավետարանով և իր մեծ գործով:

Ըստ հեղինակի վկայության, **Հեթանոսաց Առաքյալը** գիրքը ձևի և բովանդակության տեսակետից շարունակությունն է Եղիվարդի **Օտարականը** մեծարժեք ստեղծագործության³:

«Օտարականը»-ի մեջ Եղիվարդը 1969 թվականին ներկայացրել է բացառիկ թափով, գեղեցկությամբ ու հուզականությամբ «երկինքեն երկիր իջած պատմությունը, կյանքը պանդուխտ Աստուծո՝ որ մարդ եղավ»: Իսկ այժմ «Հեթանոսաց Առաքյալը» ստեղծագործության մեջ հեղինակը «կենդանացնել կյանքը մարդու մը որ անաշխարհային ապստոսով բաժնեկից ըլլալ ուզեց աստվածային երանության, անոր ճշմարտությամբ անկացած»:

Դժվար է պատկերացնել ավելի կենդանի, ավելի ամբողջական ու գրավիչ կերպարո մի առաքյալի, քան Հեթանոսաց Առաքյալն է:

«Հեթանոսաց այդ Առաքյալը» Սողոս Տաքսնուցին է, Քրիստոսի 13-րդ առաքյալը՝ Պողոսը: Նա «չէր տեսած զՀիսուս,— գրում է հեղինակը,— սակայն, իրեն հայտնոված տեսիլով զգացած ու ճանչցած էր Անոր ուժն ու գորությունը... Քիչ դեմք անցյալի պատմությանով պնդեցավոր կարելի է համեմատել Հեթանոսաց Առաքյալին հետ, որ գիտե տառապանքի մեջ մեծ և արի ըլլալ, ճակատագրի դեմ՝ լուրջ, «քարի լուր»-ը աշխարհին տանելու, և իրագործելու եկեղեցին... Ավետարաններու գրությունեն առաջ, քրիստոնեության առաջին օրերուն իսկ, հալոնաբերելով իմաստը իրմե վերջ շարունակվող դարերուն... բացատրելու Քրիստոսը քրիստոնյային... Հեթանոսաց Առաքյալը միայն կրնար ըլլալ ոսկի կամուրջը հրեին և հեթանոսին միջև, որուն վրայեն բոլոր ազգերը Հիսուս-Մեսիային պիտի երթային, ընդունելով որդեգրությունը երկնավոր Հորը»⁶:

³ Այս մասին տե՛ս գրախոսություն «Օտարականը»-ի, «Էջմիածին» ամսագիր, 1970, № 1, էջ 38:

⁴ «Հեթանոսաց Առաքյալը», էջ 1—3:

⁵ Նույնը, էջ 3:

⁶ Նույնը, էջ 2:

Եղիվարդը սույն գիրքը չի գրել սովորական ձևով պատմելու համար կյանքը մեծ առաքյալի: Չի ձգտել, որ սույն հատորը «գեթ» այս անգամ ըլլա գրական փորձ մը, վասնզի իր սրտին ավելի մոտ կնկատե ճշմարտությունը քան գեղեցկությունը: Հետեվաբար, սույն հատորը «կենսագրություն» մը չէ, այլ խոստում մը ամեն անոնց՝ որոնք

Ե Զ Մ Խ Ե Ե

ՀԵԹԱՆՈՍԱՑ ԱՌԱՔԵԱԼԸ

Երուսաղեմ

Տաքսան Սրբոց Յակոբեանց

1975

պիտի ուզեին պալաթարի ճշմարիտ և արդար նպատակի մը և դատի մը համար»⁷:

Եղիվարդի սույն հատորը բացվում է Քրիստոսի հարությունից յոթ շաբաթներ հետո Երուսաղեմում, Պենտեկոստեի կամ Հոգեգալստյան դեպքի հիշատակով և տաճարում Պետրոս առաքյալի հրապարակային առաջին մեծ ճառով⁸, «Հիսուս որ խաչվեցավ խոստացված Մեսիան էր, որ հարություն առավ մեռելներեն և հայտնվեցավ իր աշակերտներուն: Երեք տարիներ իրեն հետ եղանք, լսեցինք իր խոս-

⁷ Նույնը, էջ 3:

⁸ Նոր Կտավարան, «Գործք առաքելոց», Մայր Աթոռ ս. Էջմիածին, 1975, Բ 14—36:

քերը և վկաներ եղանք Անոր հրաշալի գործերուն: Ան գերագույն իրողությունն է բոլոր ժամանակներուն... բացավտ լեռն գիշերվան մեջ, գարունը մեր օրերու խոս-տումին, երջանկության ավետաբերը, որ մարդոց հանդիպեցավ աճուն վշտի ճամ-փաներուն վրա՝ իր տառապանքի բարձուն-քեն, խաչեն, բանալով ճամփան մեր փրկու-թյանը»⁹:

Պենտեկոստի օրը Երուսաղեմ ուխտի եկած բազմության մեջ էր նաև Տաքսոնից եկած «արծվեքիթ, շողարձակ նալվածքով, կար-ճահասակ, բայց հաստապինդ երիտասարդ մը, որ կենար իր զայրույթեն»¹⁰, ունկնդրե-լով Պետրոս առաքյալի մինչ այդ չլսված ճշողը «խաչված, թաղված և հարություն ա-ն՝ ծ» մի նոր Մեսիայի ստույգ զայտայան և Աստուծո աքքայության հաստատման մա-սին:

Ո՛վ էր Սողոս Տաքսոնացին:

Սողոսը ծնվել է Կիլիկիայի Տաքսոն քա-ղաքում, Գալիկայից այնտեղ գաղթած հրեա ծնողներից: Նախնական իր կրթությունը ստացել էր հրեական Սինագոգին կից դպ-րոցում, ծանոթանալով իր ժողովրդի պատ-մությանը, Մովսիսական օրենքին ու հրեա-կան ավանդություններին: Այս շրջանին իր մասին կ'ըվայելով, նա գրում է. «Փարիսեցի՝ Փարիսեցու»¹¹ և «Եբրայեցի՝ լեբրայեցու»¹²:

Սողոս տիրապետում էր նաև հելլենի-կան լեզվին ու դպրությանը և քաջամանր էր ժամանակակից հույն փիլիսոփայական վարդապետություններին: Հորից ժառանգել էր նաև հռոմեական քաղաքացիության իրավունքը, որը մեծ առավելություններ և արտոնություններ էր շնորհում նրան: Սո-ղոսը արհեստով վրանագործ էր:

Ժուրջ երեսուն տարեկան հասակում ծնող-ների ցանկությամբ եկել էր Երուսաղեմ՝ ա-շակերտելու մեծահոշակ ու ազատամիտ մեծ Ռաբբի Գամալիելին, դառնալու հա-մար հմուտ օրենագետ Մովսիսական օրեն-քին և ավանդություններին և մոլեռանդ պաշտպան ու ջատագով հրեականության՝ որպես փարիսեցի: Իբրև հրեա, նա իր ժո-ղովրդի մեսիական երազներով ու հույզե-րով էր արարում. «Ան կգգար թե, —գրում է սրբազան հեղինակը,—մոտ էր օրը իր ցե-ղի հոգնալեռն ազատության և Մեսիայի զայտայանը»¹³:

Ու Երուսաղեմում, իր ուսումնառության տարիներին, Սողոսը դարձավ կատարի

թշնամին քրիստոնեության: Նոր կրոնի ու-սմունքն ու քարոզությունը նա համարում էր սրբապղծություն: Հետի իր համոզման ու դատախարակության, առաքյալները «ապա-կանություն կցանեն Իսրայելի ալգիին մեջ, պետք է արմատախիլ ընել այդ չարագոր-ծերը»¹⁴:

Հոգեզալալան հրաշալի դեպքից հետո, աճում և կազմակերպվում էր Երուսաղեմում քրիստոնեական առաջին եկեղեցին:

Խաչված ու հարություն առած Մեսիայի մասին առաքյալների քարոզություններն ու նրանց ձեռքով Երուսաղեմի տաճարում կա-տարված հրաշալի գործերը «ծանր մղձա-վանցի մը նման կհմկեն Սողոսին սիրտը. Իսրայելի հավատքին մարտը ջուրը պղտո-րողները արժանի էին հալածանքի ու մահ-վան: Չարիքը արմատախիլ պետք էր ընել տակալին չպտղաբերած»¹⁵:

Երուսաղեմում սկսվեց հալածանքն ա-ռաքյալների դեմ: Մովսիսական օրենքն ու հրեական ավանդությունը «հզոր աշտա-րակներ են Իսրայելի գոյության համար», մտածում էր Սողոսը, և «բոլոր անոնք որ կործանել կուգեին այս սրբազան ժառան-գությունը, արժանի են մահվան»:

Հանուն քրիստոնեական հավատի և կրո-նական իր նոր համոզմունքների առաջին նահատակը եղավ յոթ տարեկաններից մեկը՝ Ստեփանոսը, «այս լի շնորհք և զօ-րությամբ Աստուծոյ», որ հավատալովոր ու տեսլապաշտ իր կյանքն ավարտեց քարկո-ծությամբ¹⁶: «Բազմությունն անհամբեր կգո-նար ու կզարավեր զայրույթեն, սեղմած իր բռունցքները և մշուշած իր աչքերը արյան փխորձակով», գրում է սրբազան հեղինա-կը, մինչ «լուռ էր Ստեփանոս ու խաղաղ, նման մարդու մը որ կգգա թե մահով միայն կրնա վճարել գինը ճշմարտության»¹⁷:

Եվ երիտասարդ Սողոսը, ապագա Հե-թանոսաց Առաքյալը, «կամակից էր նրա սպանության»¹⁸:

«Սողոս ամենեն վերջ բաժնվեցավ քար-կոծվողեն... Ամբողջ գիշեր ան տպավորու-թյան տակն էր քարկոծվողին, որուն բաց մնացած աչքերը կշարունակեին ճալի իրեն կարծես խաղաղ և անալլալ... Սողոս չէր կրնար բնանալ... Բունեն նահանջը հետըզ-հետե կվերանվեր ետիդ տանջանքի»¹⁹:

Գրքի Ե գլխում, Հատաաբեհիչը վերնա-գրի տակ (Էջ 30—34), սրբազան հեղինակը

⁹ «Հերանոսաց Առաքյալը», Էջ 8:

¹⁰ Նույնը, Էջ 9:

¹¹ «Գործք Առաքյալց», ԻԳ. 6:

¹² Գաղա. Գ. 5:

¹³ «Հերանոսաց Առաքյալը», Էջ 11:

¹⁴ Նույնը, Էջ 10:

¹⁵ Նույնը, Էջ 15:

¹⁶ «Գործք առաքյալց», 2. 8—15, Է. 1—59:

¹⁷ «Հերանոսաց Առաքյալը», Էջ 21:

¹⁸ «Գործք առաքյալց», Է. 59:

¹⁹ «Հերանոսաց Առաքյալը», Էջ 22:

մեզ ներկայացնում է «հավատաբեկին» և «նահվան հրեշտակ» Սողոսի ատելությունը քրիստոնյաների դեմ ու նրա մոլեռանդ ոխատարությունը՝ «ի զին ամեն բանի վերջ տալու գալիկիացիներու աղանդին... Իսրայելի Աստուծույն ծառայելու նախանձնե գինովցած, մոռցած ամեն չարի ու սահման»²⁰:

Բայց ոչ մի պատիժ ու հալածանք չէին կարող ընկնել նորադարձ քրիստոնյաների հոգեկան ուրախությունն ու վճռականությունը: Այս կեցվածքն ու կորույր շփոթեցնում, տագնապեցնում էր Սողոսին: Նա «խոտիլքի մեջ էր. կզգար թե իր ատելության ալիքները կփշրվեին իր սրտի ափին անգոր ու հեղձամոծակ»²¹:

Նա հավատում էր և գգում, որ քրիստոնյաների առջևորեն «թափվող արյունը առանց պատճառի չէր... Ի՞նչ էր այն ուժը», որ նրանց մղում էր «նահատակության», մտածում էր նա՝ Սողոսը՝ «ինքն իր մեջ եղիփեղկված... տարակուսանքներով շքեպալաված, կորսնցուցած էր իր քաջությունն ու վճռականությունը... Իրեն կթվեր թե Հիսուսի հետևորդները հոգեկան նոր կարգի մը կհնազանդեին, որ ապագային կհալեր լեցուն արևով ու հավատքով»²²:

Ու Դամասկոսի ճանապարհի վրա կատարվեց հրաշքը. Սողոսի հոգին բացվեց Քրիստոսի ճշմարտության ու նոր տեսիլքների²³, և եկեղեցու մեծ հավատաբեկինն ու հալածիչը դարձավ «մեծ «Առաքյալը Հեթանոսաց»՝ աշխարհին տանելու փրկության մեծ պատգամը:

Սրբազան հեղինակը գրքի 2 գլխում, **ԳԷԱԿԻ լույս** վերնագրի տակ (էջ 35—41), համգամաբերեն, հոգեբանական միշտ վերլուծումներով, գեղեցիկ ու համոզիչ գծերով է ներկայացնում հոգեկան աշխարհի մեջ կրոնական իր նախկին համոզմունքների փլուզումը և հոգու վերածննդյան կատարյալ ու ամբողջական հեղաշրջումն ապրող հեթանոսաց Առաքյալի կերպարը, հրաշքի գործությամբ, երկնքի միջամտությամբ և մեծ ու խորունկ սիրո լուսարձակումով, հոգու խորքերի ամենաթանկ արթնացումով:

Եղիվարդը **Սողոսի դարձի** ամբողջ պատմությունը նկարագրել է հզոր լուսարձակումով, գրավությամբ, հուզականությամբ և համոզականությամբ՝ «իբրև հայանությունը երկնքին... ճամբու եզրին ինչպե՞ս էր Սողոսը, հզոր ձեռքն մը գգեանված կարծես... «Սողոս, Սողոս, ինչո՞ւ կհալածես զիս»... Անճանոթին բառերը լուսեղեն մորմներու

մեջ կծեծեին իր հոգին, անհունությունեն եկած զանգի մը նման...»²⁴:

Սողոսը, հակասակ իր «մտքի կորույթին, տրամադրության ուժին կզգար թե նվաճված էր հաճախ գործությունն մը, որ զարկած ու խորտակած էր զինքը: Հոգիով կապյալ գեղի մըն էր ան, շղթայված մը...»²⁵:

Դամասկոսի ճանապարհին Սողոսը տեսել էր Նազովիեցու **լուսեղեն կերպարանքը**, լաճ՝ **նրա** ձայնը, որ հրավիրում էր նրան լինելու պատգամատարը իր Ավետարանին ու փառքին, տանելու՝ Մեսիայի գալստյան ավետիսը Իսրայելին և ճշմարտությունը՝ բոլոր ազգերին:

Գրքի երկրորդ մասը (ԳԳ—ԻԻ գլուխներ, էջ 65—192) ամբողջությամբ նվիրված է դարձի եկած «Հեթանոսաց Առաքյալի» առաքելական քարոզությանը, ժամանակակից աշխարհում եկեղեցիներ հաստատելու պատմությանը, Դամասկոսից մինչև Հռոմ:

Հռոմեական կայսրության դաժան լծի տակ, հեթանոսական, ալլաերված բարբրի ու անավոր ապականության պայմաններում, Պաղեստինցի հեռու հրեական սփյուռքում հաստատված մովսիսական ալլաներձ ու մոլեռանդ համայնքների ծոցում չափազանց դժվար ու վտանգավոր էր Պողոսի առաքելական քարոզչությունն ու գործունեությունը: Առաքյալն ամեն օր ապրում էր առաքելական իր պաշտոնի տառապանքը²⁶: Նա «վախ չուներ աշխարհեն, հավերժության նայող իր հոգին քաղցրորեն կրկնաբար նայիլ մահվան աչքերուն... Պողոսի օրերը հրաշքով լեցուն սիրագործություններու երկար շղթա մը եղան... ոչ մեկ ուժ կրնար բռնադատել Պողոսին և մարել կրակը ճշմարտության որ խարույկի մը պես կըցավաւեր անոր սիրտը... Գիտեր, ոչ միայն հաղթանակներ շահիլ, այլ նաև պարտություններու հանդարտություն, մտքի անվերքով հանդարտությամբ»²⁷:

Երուսաղեմի անդրանիկ եկեղեցին, որը սնված էր հրեական ավանդությամբ, Սինագոգից դուրս քրիստոնեական քարոզչությունը հեթանոսների մեջ համարում էր խորթ և վտանգավոր: Պողոսի հարաբերությունները հեթանոսների հետ հաշտ աչքով չէին դիտում Երուսաղեմում: Պողոսը նրանց «կթվեր Իսրայելի ավանդությունեն շեղած մը և հակառակորդը Պետրոսին»²⁸, որը նախապես հեթանոսների թլփատությունն անհրա-

²⁴ Նույնը, էջ 38—39:

²⁵ Նույնը, էջ 43:

²⁶ Բ. Կորնթ. ԺԱ 24—29:

²⁷ «Հեթանոսաց Առաքյալը», էջ 70, 83, 86, 88, 89:

²⁸ Նույնը, էջ 78:

²⁰ Նույնը, էջ 30:

²¹ Նույնը, էջ 31:

²² Նույնը, էջ 33—34:

²³ Նույնը, էջ 35:

մեշտ էր համարում քրիստոնյա դառնալու համար:

Մինչ «Հեթանոսաց Առաքյալը» ավելի հեռուն էր դիտում: Նա առաքելական իր 30-ամյա գործունեության փորձի վրա համոզված էր, որ Երուսաղեմի կենտրոնը պիտի թողնվեր իր բոլոր հախապաշարումներն ու վարանումները, և Ավետարանի լույսն ու Քրիստոսի փրկագործության համաշխարհային պատգամը պիտի տարվի մաս հեթանոսներին՝ առանց ստիպելու, որ նրանք Մովսիսական օրենքի միջոցով զան Քրիստոսի լույսին և ճշմարտությանը: Երուսաղեմի եկեղեցին մեղացնում էր Քրիստոսի փրկագործության տիեզերական նշանակությունը: Փրկություն «ոչ թե թվաառությանը այլ Աբրահամի հավատքով՝ խոստումի միջոցով»: Քրիստոսը, «որպես լույս ի յայտնություն հեթանոսաց», եկել էր «պատկեր ալմկալությունը բոլոր ազգերուն... Հիսուս Քրիստոս օղակն էր միության, և կամուրջը երկնքի ու երկրի միջև»²⁹:

Պողոսի միտքն ամբողջապես գրավված էր հեթանոսներով: Նա իր քարոզության առաջին իսկ օրից մտածում էր Քրիստոսի Ավետարանն ազատել հրեական կապանքներից, հախապաշարումներից և այն դարձնել տիեզերական եղբայրության, ազգերի համագործակցության Ավետարան: «Զիք խոսիք, ոչ հրէի, և ոչ հեթանոսի... Դուք ամենեքեան մի էք ի Քրիստոս Յիսուս»³⁰:

50 թվականին Երուսաղեմի առաքելական ժողովին ներկայացան Պողոսն ու Բարնաբասը, հեթանոսների մեջ իրենց ավետարանչությունից հետո: Ժողովին ներկա էին Հակոբոս Տյառնեղբայրը, Պետրոս և Հովհաննես առաքյալները՝ որպես «կարծեցեալ սինները եկեղեցու»: Ժողովն իրավունք տվեց Պողոսի քարոզության հեթանոսների մեջ:

Սրբազան հեղինակն իր գրքի **Լույս ի յայտնություն հեթանոսաց** (էջ 65—77) և **Աւելի հեռուն** (էջ 78—89) գլուխների մեջ ապառիչ կերպով քննության է առել այս հարցերը՝ ճշգրիտ վերլուծություններով և եզրակացություններով. «Ավետարանի ծավալումը հեթանոս աշխարհի մեջ, որ Պողոսի երազն էր, այլևս իրականություն կը՝ ոճար... Պողոս կհավատար իր դերին. առաքելական գործունեության արդյունքը ակներև էր»³¹: «Յանձն էր Ավետարանի սերմերը հոգիներուն մեջ և զանոնք թրջած՝ իր արյունով»³²: Արևելքից արևմուտք, հյու-

սիսից հարավ, բոլոր ազգերը սեղան կհրստեն երկնքի արքայության մեջ Աբրահամի, Իսահակի և Հակոբի հետ, որպես մուկ Աստուծո նորիցին և միական եղբայրներ. «Պողոսի մեծ երազը իրականացած էր, Հիսուս կհաղթեր Մովսեսին և հիմը կորվեր Նոր Ուխտի հասկացողության և քրիստոնեական ապագա կայսրության... ուր գիտակցի գրկականությունով իրարու պիտի մոտենան հրեան ու հեթանոսը, գերին ու ազատը, քարքարուն ու սկյութացին»³³, որովհետև **Հիսուսը քանդել էր ազգերի միջև գոյություն ունեցող միջնորդը**:

Պողոսի երազն էր Փոքր Ասիայի երկրներից հեռու Ավետարանի լույսն ու պատգամը տանել մաս Աթենք, Կորնթոս, Հռոմ, Եփեսոս:

Երեսնամյա առաքելական քեղմնավոր, փոթորկալից գործունեությունից հետո, 60 թվականի աշնանը, Պողոսը, վերջին անգամ լինելով, ուխտի գնաց Երուսաղեմ՝ հիմնականում ամրապնդելու համար իր հաստատած քրիստոնեական համայնքների և եկեղեցիների հոգևոր սերտ կապը Երուսաղեմի կենտրոնի հետ: Բայց «Պողոսի աչքերը Հռոմին ուղղված էին, հոն պետք էր ըլլար հաջորդ վայրը իր հաղթանակին»³⁴: «Պարտ է ինձ և զՀռոմ տեսանել... տալ վկայություն հրէից և հեթանոսաց»³⁵, որովհետև Պողոսի հավատքը «զգացումն մը չէր, որ կըխեր, այլ իր մեջ ապրող գործության մը գիտակցութենէն» (էջ 133):

Երուսաղեմում ուխտավորության այդ օրերին Պողոսը հրեաների ապրանքով ամբաստանվեց, երբ զանկում էր տաճարում, որպես «ամբողջ աշխարհում գտնվող հրեաների ապականողն ու խոտվեցնողը»³⁶, ձերբակալվեց, բանտարկվեց և ապա հսկողության տակ Հռոմ տարվեց, դատվելու կալսերական առյանում, քանի որ հոռոմեական քաղաքացի էր:

Հռոմում փիլիսոփա Սեներկայի ու Ներոնի կին Պոպեա Սաքինա կայսրուհու միջնորդությամբ Պողոսը, երկու տարի բանտում մնալուց հետո, ազատվեց և դարձյալ սկսեց իր առաքելական գործունեությունը՝ «ամբողջ աշխարհը գրավելու հավատքով... Հռոմեական կայսրությունը... ներքնապես փախչ սկսած էր: Խաչին հրաշքը իբրև գերագույն հեղափոխիչը մարդկային ընկերության, սկսած էր իր գործը... Եվ Պողոսը պատրաստ էր վերստին հավելու իր դեմ

²⁹ Նույնը, էջ 80:

³⁰ Գաղ. Գ. 27:

³¹ «Հեթանոսաց Առաքյալը», էջ 82:

³² Նույնը, էջ 88:

³³ Նույնը, էջ 95, 123, 133:

³⁴ Նույնը, էջ 147:

³⁵ «Գործք առաքելաց», ԺԺ 21, Ի 21, ԻԳ 11:

³⁶ Նույնը, ԻԳ 5:

բացվող ծովերուն վրա»³⁷։ Արդարև, Պողոսի համար չկային խելագար Հոռոմ, կայսրը, չկային մեհյաններն ու բազիլիկները, կար սիպլն Քրիստոսը, որը լցնում էր ցամաքը, ծովը, ողջ տիեզերքը և մարդկանց հոգիները։

Պողոսի քարոզությամբ Հոռոմի դժբախտ ժողովրդի կուրացած և կոշտացած հոգիների մեջ մանանայի մման թափվում էին Ավետարանի լույսի սրբացնող ճառագայթները։ **Նա հավատում էր իր գործի արդարությանը և նրա աստվածային ճշմարտությանը։** Նա փիլիսոփա չէր, այդ բանի նեղ իմաստով, այլ առաքյալ, և գիտեր ճշմարիտ իմաստը այդ առաքելության։ Նրա հրեղեն խոսքի և ջերմեռանդ բարեպաշտության մեջ հեթանոս Հոռոմը տեսնում էր քրիստոնեական կրոնի վեհությունը, սրբությունը, համոզված, որ քրիստոնեությունը վերացական, փիլիսոփայական մի վարդապետություն կամ ուսմունք չէ, այլ մի կյանք, ապրված մի ճշմարտություն, որը ոչ մի արգելքի առաջ կանգ չի առնում և սոսկալի տանջանքների մեջ, ու կախաղանի վրա վկայում է այդ մասին։

Արդարև, հեթանոսաց Առաքյալի խոսքի, շարժումների վրա կար միշտ կենդանի Աստուծո հորդահոս հոգին։ Նրա աչքերը միշտ փայլում էին երկնային անուղիոր լույսով, իսկ ճակատի վրա բազմել էր վեհափառությունը մի մարդու, որ կարող է ամեն փտանգի մեջ մտնել՝ ազնիվ ու ճշմարիտ լինելու համար։ Ու Պողոսը խոսում էր համոզումսի այնպիսի կրակով, որ նրա ամեն մի բառը ցնցում էր ժամանակակից աշխարհի գաղափարական-հասարակական հիմքերը։

Առաքյալն հեղինակն էր գրքի 138—192 էջերում նկարագրում է ահա տիրական ու համոզիչ շեշտով Պողոսի կյանքի վերջին օրերի գործունեությունն ու քարոզությունը և ապա նրա սրտանմիլ նահատակությունը Հոռոմում։

Ծատ գեղեցիկ և իմաստալից է այն ավանդությունը, որ իր գրքի մեջ հիշատակել է Նիկիվարդը **Ներոն** և **Հոռոմի հրդեհը** զբլխում (էջ 182—188)։

Ըստ ավանդության, Հոռոմում մի հրապարակային կաշտերական շքերթի ժամանակ բազմության մեջ էր նաև Պողոսը և ցանկանում էր «գեթ» անգամ մը տեսնել աշխարհի տերը»՝ Ներոն կայսրին։ Եվ ահա դիպվածով «այդ երկու մարդերը» Պողոսն ու Ներոնը—բույսն մը իրարու նայեցան... այդ վայրկյանին երկրային երկու իշխանությունները, որոնցմե մին արյունալի երագի մը պես պիտի ցնդեր, իսկ մյուսը մշտնջե-

նական տիրապետության պիտի հասներ, կոխտեին գիրար»³⁸։

«Այսպես անցավ Ներոնը՝ ինչպես անցնում է հողմը, փոթորիկը, հրդեհը, պատերազմը կամ ժանտախտը... և Պողոս-Պետրոս հազիլիկան մինչև այսօր իշխում է վատիկանյան բարձունքներից բաղաբի և աշխարհի վրա»³⁹։

Անցան դարերը, անցան կայսրերն ու հոռոմեական լեգեոնները, անցան նահատակության ալիքները ու հաղթանակեց Քրիստոսը։ «Իրմե առաջ բոլոր դարերը Իրեն կնային և Իրմե վերջ ամեն ինչ Իր նկարագրին կնիքով է կնքավոր» (էջ 60)։

Այս ճշմարտության վկայությունն է բերում նաև Նիկիվարդն իր «Հեթանոսաց Առաքյալը» սքանչելի գրքով։

Սույն ուսումնասիրության վերջին գլուխը կրում է **Վարագույրը** այլաբանական վերնագիրը (էջ 189—192)։

Ներոնի չարագործությունների, բռնության, ճնշման և Հոռոմի ապականության, ոճրագործության ու նաև «խելագար շուրջ-պարի»⁴⁰ վերջին «վարագույրն» է փակվում 63 թվականին Պողոսի և Հոռոմի քրիստոնյաների մասաշայական, կազմակերպված կոտորածով. «Պարագան ուրիշ կերպ չէր կրնար ըլլակերության մը համար որ հիմնված էր կեղեքումներու, խոշտություններու և պղծություններու վրա... Հոռոմը կիշխեր աշխարհին... ասկայն զինքը մոտեն ճանցողները կզգային թե դիակի մը գարշահոտությունը ուներ... Հոռոմ դեպի անդունդ կզահավիժեր»⁴¹։

Նահատակվածների արյան հեղեղի մեջ աճում էր եկեղեցին, և պտղաբերում էին հոգիների մեջ, հզոր ու անխորտակ, Պողոսի քարոզչությամբ սերմանված Աստուծո խոսքերը։ Հոռոմի եկեղեցին, որ Պողոսի քարոզությամբ «դպար ծառի մը նման սկսած էր աճել, Հոռոմի հրդեհեն առաջ, այժմ ճղակտոր կմնա, «Գազան»-ին ճիրանեն բզկտված»։ Քրիստոնյաները նահատակվում էին այն հավատքով, որ «ճշմարտությունը չէր կրնար բաղվիլ և վերջնական հաղթանակը» իրենցը միայն կարող էր լինել»⁴²։

Այո՛, Հոռոմի հոգևոր, քարոյական, բաղաբական-հասարակական հոգեվարքը կարող էր դեռևս երկարել, բայց մոտ էր չարի վախճանը և Հոռոմի կայսրության կործա-

³⁸ Նույնը, էջ 183։

³⁹ **Հ. Սեմկևիչ**, Յո՛ւ երթա, Երևան, Պետհրատ, 1961, էջ 734։

⁴⁰ «Հեթանոսաց Առաքյալը», էջ 188։

⁴¹ Նույնը։

⁴² Նույնը, էջ 190։

³⁷ «Հեթանոսաց Առաքյալը», էջ 176—181։

նումը: «Քրիստոնյայի թափվող արցունքներն և արյունն պիտի շողալվեին որմերը Քրիստոսի եկեղեցիին և նահատակներու ոսկորներուն վրա պիտի կանգներ կայողիկեն իր փառքին»⁴³:

Քրիստոնեական եկեղեցու առաջին դարերի պատմությունը ցույց է տալիս, թե որքան անհրաժեշտ էին նրա դատի հաղթանակի համար նահատակություններն ու նահաճախնդրության այն կրքոտ ոգին, որ չէր վախենում ոչ մի վտանգից և ներշնչում էր նրա արքերին ու մարտիրոսներին դիմադրելու բոլոր դաժան փորձություններին:

Ներոնի հալածանքների ծանր ու վտանգավոր օրերին Հռոմում էր նաև Պողոս առաքյալը: Նա արցունքը աչքերին և աղոթքը իր շրթներին քաջակերում և արտապրեցում էր հավատացյալներին: Նրա հրամշտի խոսքերը⁴⁴ տոգորված էին քրիստոնեական անկյուրում հավատքի չեքմեղանդությանը և հաստատ լավատեսությանը, իսկ նահատակվողների «հոգին գտած էր համեմատական խաղաղությունը»: Հռոմի քրիստոնյաները մեռնում էին, հեղինակի գեղեցիկ ու պատկերավոր արտահայտությանը սասած, ապագայի երազին ճամբուն վրա, որպեսզի ողջերը կարենային շարունակել գալեն: Վաճառի ողջեր չեն ապրիր, երբ մեռելներուն երազը մեռելի⁴⁵:

Հռոմում նահատակվեց նաև Պողոս առաքյալը, 63 թվականին, «Ագուե Սալվիե» հրապարակում. «Հավատակ խոշտանգումներուն և հոգեկան տառապանքին, առաքյալը կապակեր իր կորովագեղ կեցվածքը... և ոչ մեկ ձեռք կրճար փշրել Տիրոջ այն լուսեղեն անոթը», որ Պողոս առաքյալն էր (Էջ 188):

Չափազանց հուզիչ, տպավորիչ կերպով ու քնարական շնչով է նկարագրված Պողոսի նահատակության վսեմ պահը.

«Պատրաստ էր արդեն կոճոր, որուն քով կարշնդեղ դահիճը տապարին կտրնած կկենար: Սակայն առաքյալը դուրս էր պահեն. անկիսկ սենտաքի կնայեր իր առջև բացվող հարաճուն լույսին, որ երկինքեն վար կիջներ հսկա սմայիկովանիի մը նման... հետո տեսավ ծավաղող լույսին մեջ Նագովրեցի Հիսուսին դնեքը, որ իրեն կծպտեր: Պողոս արցունք տեսավ Անոր աչքերուն խորը, երբ վիզին կրկուններ դահիճին տապարը»⁴⁶:

Սափահի գեղեցիկ, արտագրավ պատկերով է ավարտվում Եղիվարդի «Հեթանոսաց Առաքյալը» գիրքը, որն ընթերցվում է հա-

յանուն հետաքրքրությամբ, պատմական մի վեպի գրավչությամբ ու անմիջականությամբ:

Սույն հատորը Եղիվարդի կրոնական, եկեղեցագիտական մտորումների, ներքին ապրումների, հոգևոր փորձառության, ազնվի ու հավատավոր հոգևորականի խորհրդածությունների, երկարամյա եկեղեցական ծառայության կենդանի ու պայծառ հանդիսարանն է, որտեղ նա ամենայն ջերմությամբ, համարձակությամբ և խոշորությամբ առաջ է քաշել նաև իրեն հուզող, քաղոք ու աշմեական հարցեր՝ որպես հոգեվորական, քարոզիչ ու մտածող:

Գիրքը շարադրվել է տերտերյանական թափով, ընդգրկումով, պատկերավոր, հարուստ, հյութեղ ու չինջ լեզվով, ոճի թարմությամբ, տաք արտով, հավատքի կրակով, քնարական շնչով, հոգեբանական խորք և ճշգրիտ նրբերանգներով, հստակ մտածողությամբ, նյութի խորը իմացությամբ, «Գործք առաքելոց»-ից և Պողոս առաքյալի թղթերից բաղված նրա կյանքի ու քարոզության վերաբերյալ դրվագներն ու ճառերը համադրելու, վերլուծելու, մի ընդհանուր հաշտարարի բերելու բացառիկ կարողությամբ: Գիրքն ընթերցելիս լսում ես նաև այսօր Պողոս առաքյալի՝ այդ մեծ մտածողի ու կազմակերպչի բոցաշունչ խոսքը, նրա քարոզության տաք շնչառությունը, արտի զարկերն ու փոթորկուտ հոգին: Նա մեր ժամանակակիցն է, մեր հավատքի կենդանի դրոշմ՝ իր քարոզությամբ, առաքելական իր թղթերով, իր ներքին կրակներով, քրիստոնեությանը դատի պաշտպանության իր աննահանջ նվիրումով:

Եղիվարդը տաղանդավոր արվեստագետի վարպետությամբ, հոգեբույս հիացումով, երախտիքով, ծովացած սիրով, «ռոմանտիկ խոտվելով» և «անանուն կախարդանքով» է գծել դարերի խորքից եկող մեծ առաքյալի կյանքի, քարոզության և աշխատանքի լուսեղեն պատկերը, նկարագրել նրա արքայական ջանքերը, հոգեկան տագնապներն ու ուրախությունները և մանավանդ նրա դերն ու նշանակությունը քրիստոնեական մտածողության ձևավորման, զարգացման և եկեղեցու ամրապնդման գործում. Պողոսի կյանքը ուխտագնացություն մըն է տառապանքե տառապանք, կասկածե կասկած, մութեն՝ լույս, որոնելու Մեսիան, որ առաջին մեկ օրեն, իր ճակատագրական դարձն հետո, գերագույն իրողությունը եղավ իր կյանքին⁴⁷:

Սույն հատորը «Եթե իր կարգ մը էջերուն մեջ կհայտնակի քարոզչական գնացքի մը,

⁴³ Նույնը, էջ 188:

⁴⁴ Նույնը, էջ 189—190:

⁴⁵ Նույնը, էջ 190:

⁴⁶ Նույնը, էջ 192:

⁴⁷ Նույնը, էջ 2:

թերություն մը պետք չէ նկատել զայն, որովհետև այդ կերպով բնել ուզված է մըշարտություններ, որոնք պետք չէր զանց առնվելին»⁴⁸, հշում է սրբազան հեղինակը:


Գլխախասականի սույն սեղմ էջերում կարելի չէ սպառիչ կերպով խոսել եղիվարդի Հեթանոսաց Առաքյալը գրքի բացառիկ արժանիքների և նշանակության մասին: Մեր ցանկությունն է եղել՝ «Էջմիածին» ամսագրի ընթերցողների ուշադրությանը ներկա-

լացնել մեր օրերի հայ եկեղեցական մատենագրության գեղեցկագույն և արժեքավոր նվաճումներից մեկը հանդիսացող եղիվարդի «Հեթանոսաց Առաքյալը» ուսումնասիրությունը՝ որպես սեղանի գիրքը ամեն մի բարի ու բժախնդիր հավատացյալի, միաժամանակ Քրիստոսի Այլտարանի բարոգության ու նրա ս. եկեղեցու հոգևոր ծառայության կոչված յուրաքանչյուր տիպար ու նախանձախնդիր հոգևորականի համար:

Ա. Հ.

⁴⁸ Նույնը, էջ 3:





ՀԻՆ ԷԶԵՐ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏ ՄԸ

Հինգշաբթի, մենարանիս մեջ առանձին, բառարանի փորձ կնայեի, և դեպի խոցս՝ վարի պարտիզի ճամբեն՝ թեթևոտն քալափոխից ձայն մը նշմարեց ականջս: Ծանցաւ Հրաշային գաղտնապահ քայլվածքն: Աճառյան յոր վաղեմի դասատուն եկալ տեսնել միշտ նույն երկչոտ կամ երկյուղած քայլվածքով, զի մի՞ գուցե խողվէ նորա մենատուն ու մենահոգվույն խորհրդագգած լուռութունն: Եկալ մերթ՝ զիս տեսնել, մերթ՝ փոխ տված գրքերս ինձ վերադարձնել, և մերթ՝ հարցաւորել հայերեն մայր բառարանն (Ստուգաբանական բառարանի մը համար՝ որուն ձեռնարկած էր), որուն պետք ունենալով միշտ ֆրանսահայ բառագրքիս համար՝ զոր կհորիմէի՝ չէի կրնար հեռու տեղ փոխ տալ զայն:

Հինգշաբթի մեծ ծրարով մը բեռնավորյալ եկալ Հրաշայն:— Երբ՝ Գատրգյուղն առհասկեա թողլու վերջնական որոշումս հայտնելուս վրա՝ «Մերմակ աղջիկն» իր քով ունեցած գրքերուս ծրարն ինձ հղեց, անհուն անբացատրելի եղալ տրտմություն տարբեր էր անշուշտ, սակ մըն էր, բարեկամ մըն էր, որ պիտի հեռանար մայրաքաղաքէս, անընդմիջական խանդաղատանքէս: Արովհետեւ համեատ ու ծանրաբարո պատանի մ'էր Հրաշյա՝ նվիրյալ ուսման, որովհետեւ իմ աշակերտացս մեջէն՝ Սար-

գիս Մինասյանին հետ՝ ամենէն ավելի զիս փնտրեց իմ հոգեկան լքման օրերուս մեջ. պարզորեն խոսելով՝ շա՛տ տրտմեցաւ, երբ ծրարը ձեռքը ներս մտալ մենարանէս:

Հրաշյա Աճառյան Ազգային Կեդրոնական վարժարանին անցյալ (1893) ամի շրջանավարտներէն է. և Սանասարյան դպրոցին զրաբար և աշխարհաբար լեզվաց ուսուցիչ կարգված է, որպէս ծանուցվեցալ կրթատու վարժարանին վկայականէն զատ, հագիվ շրջանավարտ՝ բարձրագույն կրթական հաստատության մը մեջ այնքան կարևոր ճյուղի մը դասախոսության համար ստացած հրավերն՝ Հրաշյա Աճառյանի կարողության վրա բավականէն ավելի կխոսի:

Բայց իր մտաց մշակության վրա ամենէն ճշգրիտ գաղափարը չպիտի տար միմիայն ցանկը ա՛յն գրչանց, զորս հինգշաբթի վերադարձոց ինձ Աճառյան, նվիրական մատյաններ՝ իր թախած աչքի լուսով—կրնա ըսվիլ—կրկին նվիրականացցալ: Ավասիկ իմ նախկին սանիս կարողացած գրքերը.— «Հնդկաստանի գրական դարաշրջանը» Յ. Նևի, «Հիշատակարանք արևելագիտաց համազգային վեհաժողովուն», Էմիլ Պյուտոմֆի «Սանկրիտ քերականություն», Սալմոն Ռոլնարի «Դասական բանասիրությունն» ըստ նորագույն լեզվաբանական աշխատությանց: Սուրբ գիրքերս—որպէս Հոմերոսս, մարդո՛ւ չէի տված ցարդ. խելքի տկարություն կամ սրտի զորություն

համարվի՝ այդ կրկնակի թանկագին գրքերուս պատճառով ա՛լ արտագիշերել չեմ ուզեր՝ որպես դուռն ուրեք ըրած եմ ի սկզբանե անոնի։ Սիրահոժար՝ սակայն՝ գանձնք գրքատունն հանելու զոհողությունն հանձն առի—որպես և Ռիկ-Վետան ալ տրված էի հառաջագույն —որովհետև՝ իբրև գլուխ և իբրև սիրտ՝ մեծ ապագա կգուշակեի Կեդրոնականին այդ կոչեցյալ աշակերտին համար։


Աչքս արտաավաթոր հետևեցա՛վ իրեն հինգշաբթի, դեռ կհետևի ու պիտի հետևի մինչև որ «տեղիկն հասնի», որպես պիտի ըսեր իր բարի մայրիկն՝ ընտանեկան խանդավառական մանրաբարբառ ա՛յն լեզվով՝ որով կխոսին, կարտախոսեն մայրերն։ Անողջությունն է միայն Հրաշյայի մաղթածս. ուրիշ ա՛մեն բան ունի հառաջանալու, մեծա-


նալու համար։ Բարձր հողի վրա ու բարձր հովանիի ներքև եղող այդ Սանասարյան հարկին մեջ՝ իր ուսուցչական և առանձին բանասիրական աշխատություններն դուրս՝ նորեն թոչ առնու թերևս Հրաշյային երևակայությունն, և մեզ ինքնատիպ քերթվածներ հղե կարդալու,—բանգի բանաստեղծ ալ է Աճառյան։ Իրմեն 8—10 տանավորներ միայն սրբագրած եմ Կեդրոնական վարժարանին մեջ, այնուհետև անասույրու բանաստեղծություններ արտադրեց, որպես վիպակ և ուսումնասիրություններ։

Եվ՝ հակառակ առածին՝ խոսքին տեղ գի՛րն է, որ պիտի թոչի ու գա մեզի։

ԵՂԻԱ (ՏԵՄԻՐՇԻՊԱՇԱՆ)

(«Ծաղիկ», 20 օգոստոս, 1894, շաբաթ)





ՄԱՄՎԵԼ ԱՆԹՈՍՅԱՆ
(Դասախոս հոգևոր ճեմարանի)

ՀԱՅ ԽՈՇՈՐԱԳՈՒՅՆ ԼԵԶՎԱԲԱՆԸ (Հրաշյա Աճառյանի ծննդյան 100-ամյակի առթիվ)

«Աշխարհում կա մի քան, որ ավելի արժե,
քան Առաքելական զվարճությունները, ավելի
քան զանձը, ավելի քան նույնիսկ առողջու-
թյունը—այդ նվիրումն է գիտությանը»:
Ֆրանսիացի պատմաբան Օգյուստեն Թիերի

Այս օրերին լրանում է հայ լեզվաբանու-
թյան մեծագույն երախտավոր Հրաշյա Հակո-
բի Աճառյանի ծննդյան 100-ամյակը: Նա ծըն-
վել է Կոստանդնուպոլսի հայաշատ և հայկա-
կան ավանդություններով հարուստ Սամա-
թիա թաղամասում: Սկզբնական կրթու-
թյունն ստացել է իր ծննդավայրում՝ սուլո-
րեղով տեղի Արամյան և Սահակյան ազ-
գային դպրոցներում: Իսկ 1889 թ. ընդուն-
վել է Պոլսի հռչակավոր Կեդրոնական վար-
ժարանը, որն ավարտել է 1893 թ.: Ընդա-
մենը 17 տարեկան պատանի, մեծ նվիրու-
մով, Աճառյանը զինվորագրվում է հայ ժո-
ղովրդի լուսավորության գործին՝ որպես ու-
սուցիչ պաշտոնավարելով Կարինում, ուր
ուսուցչական-դաստիարակչական աշխա-
տանքներին զուգընթաց զբաղվում է բանա-
սիրությամբ՝ կազմելով Սամաասրյան վար-
ժարանի ձեռագրացուցակը: Ի դեպ, իր ու-
սուցչական թափառ կյանքի ընթացքում տե-
ղի հայերեն ձեռագրերի ցուցակները կազ-
մելը Հ. Աճառյանը գեղեցիկ ավանդույթ
դարձրեց. և նրա շնորհիվ մենք այժմ ունենք
մի շարք կարևոր հայկական գաղթօջախնե-
րի՝ Կարինի, Թավրիզի, Նոր Բայազետի,

Թեհրանի հայերեն ձեռագրերի վստահելի
ցուցակները:

Հ. Աճառյանը ներքուստ զգում էր, ան-
շուշտ, որ Պոլսում իր ստացած հայագիտա-
կան պատրաստականությունն անբավարար
է այն առաքելության համար, որին կոչ-
ված է ինքը: Եվ ահա գիտության ծարավը
նրան բերում է ժամանակի լեզվաբանական
խոշորագույն կենտրոններից մեկը՝ Փարիզ,
որ նյութական մեծ զրկանքներով Աճառ-
յանը եվրոպական իմաստով լեզվաբանա-
կան պատրաստականություն է ստանում
Սորբոնի համալսարանում՝ աշակերտելով
աշխարհահռչակ լեզվաբան և մեծ հայագետ
Անտուան Մելեին: Այո՛, արևելքից ընդա-
մենը 21 տարեկան երիտասարդը 1897 թ.
դառնում է Փարիզի լեզվաբանական ընկե-
րության անդամ՝ լազերենի վերաբերյալ
ֆրանսերեն լեզվով գրած իր արժեքավոր
աշխատության համար: Միայն մի քանի
ամիս հետո Փարիզում տեղի ունեցած արե-
վելագետների 11-րդ կոնգրեսում իր կար-
դացած երկու արժեքավոր զեկուցումներով
Հ. Աճառյանն արժանանում է գերմանացի
մեծ լեզվաբան և մեծ հայագետ Հ. Հյուբշ-

մանի հիացումին և վերջինիս կողմից հրավիրվում Ստրասբուրգ՝ իր դասախոսություններն ունկնդրելու: Հ. Աճառյանը պաշտամունքի հասնող նվիրում ուներ Հյուրըմանի հանդեպ, այն մարդու, որ 1875 թ., ընդդիմանալով եվրոպացի հեղինակավոր հայագետներին, գիտականորեն և վերջնականապես ապացուցեց, որ հայերենը պարսկերենի բարբառ չէ, այլ անկախ մի ճյուղ հնդեվրոպական լեզվախմբի մեջ: Որպես արտահայտություն իր հիացումի, Հ. Աճառյանը տարիներ հետո պիտի գրեր. «Ով Հյուրըմանի դպրոցին աշակերտ չէ, նա գիտության զավակ չէ»¹: Աճառյանը սիրով ընդունեց Հյուրըմանի առաջարկը և մեկ կիսամյակ լսեց մեծ հնդեվրոպաբանի դասախոսությունները: Եվրոպան էր գրավում Աճառյանին. նա շտապեց վերադառնալ հայրենիք՝ օգտակար լինելու համար իր ժողովրդի լուսավորության գործին: Ծառ դրժվար օրեր և տարիներ անցկացրեց Հ. Աճառյանը Փարիզում, սակայն և իր ուժեղ կամքով ու բացառիկ ջանասիրությամբ հիացմունք պատճառեց եվրոպացի գիտնականներին: Հետագայում, 1909 թ., իր ուսուցիչ, աշխարհահռչակ գիտնական Ա. Մեյեն իր սանի մասին գրել է. «Ես որ գիտեմ, թե ինչպիսի՜ կամք, պետք է ասեմ՝ ինչպիսի՜ հերոսություն ունեցավ նա իր գիտական կրթությունը ձեռք բերելու համար, և թե ինչպիսի՜ նյութական ու բարոյական պայմանների մեջ առաջ տարավ երկար տարիներ երբեք չհոգնող հարատևությամբ իր քննությունները, որոնք քիչ քաջակերպեցին, պարտք են համարում ասել այստեղ, թե ինչպիսի՜ հիացմունք ունիմ ես, ոչ միայն իր գիտության, իր աշխատանքի հազվագյուտ կարողության, այլ և իր նկարագրի վրա»²:

Ա. Էջմիածինը և Գևորգյան ճեմարանը դարձան Հ. Աճառյանի առաջին հանգրվանը: Նա մեծ նվիրումով պաշտոնավարում էր Գևորգյան ճեմարանում և արժեքավոր ուսումնասիրություններ հրապարակում Մայր Աթոռի պաշտոնաթերթի «Արարատ» ամսագրում: Այս գեղեցիկ ավանդույթն Աճառյանը շարունակեց նաև «Էջմիածին» ամսագրի էջերում՝ հրապարակելով հայագիտական-լեզվաբանական արժեքավոր ուսումնասիրություններ:

1898 թ. սկսած մինչև իր եղերական մահվան օրը Հ. Աճառյանն ուսուցիչ էր և դասախոս. պաշտոնավարել է հայկական բազ-

մա թիվ դպրոցներում՝ դասավանդելով հայերենագիտական ամենատարբեր ստարկաներ: 1923 թ. հայրենիք վերադառնալով, Աճառյանը մինչև իր մահվան օրը երևանի պետական համալսարանում հարգված ու



սիրված դասախոս էր, իսկ 1943 թ.՝ հայկական գիտությունների կաճառի հիմնական անդամներից մեկը: Հ. Աճառյանի ամբողջ գիտակցական կյանքը մի անմնացորդ նվիրում է գիտությանը, հայ լեզվաբանությանը, հայ մշակույթին ու հայ ազգին: Բազմազան ու բազմակողմանի է Հ. Աճառյանի գիտական-մանկավարժական գործունեությունը: Նա, ըստ երևույթին, ամենից շատ գիտական ժառանգություն թողած գիտնականն է մեր իրականության մեջ: Նրա տպագիր և ձեռագիր աշխատությունները 200-ից անցնում են. ի դեպ, այդ թվի մեջ մեկ-մեկ միավորով են հաշվվում այնպիսի աշխատանքներ, ինչպիսիք են «Հայերեն գալստական բարոսարան», «Հայ անձնանունների բառարանը», «Հայերեն արմատական բառարանը», «Հայոց լեզվի պատմությունը», «Հայոց լեզվի լիակատար քերականությունը», որոնցից ամեն մեկը մի քանի տասնյակ և հույս-իսկ մի քանի հարյուր մամուլ ծավալ ունի: Արդ, համառոտակի ծանոթանանք Հ. Աճառյանի լեզվաբանական ժառանգության հիմնական ճյուղերին:

¹ Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան. Ա հ., Երևան, 1971, էջ 17:

² Հ. Աճառյան, Հայ բարբառագիտություն, Մոսկվա—Նոր Նախիչևան, 1911, էջ XII:

ա) Ընդհանուր լեզվաբանություն և հարակից հարցեր

Հայտնի է, որ Հ. Աճառյանը Եվրոպայում դարասկզբին մեծ տարածում ստացած «սոցիոլոգիական» կոչվող լեզվաբանական ուղղության և դրա մեծագույն ներկայացուցիչ Աճառյան Մելեի հետևորդն էր։ Իր որդեգրած ուղղության տեսանկյունից էլ Աճառյանը մոտեցել է ընդհանուր լեզվաբանական հարցերին։ Աճառյանի³ ընդհանուր լեզվաբանությանը նվիրված աշխատանքների թագն ու պսակն է կազմում «Լիակատար քերականություն հայոց լեզվի» համեմատությանը 562 լեզուների՝ բազմահատոր աշխատությունն ամբողջությամբ և մանրամասն այդ աշխատության «Ներածություն» հատորը (Երևան, 1955)։ Աշխարհի բոլոր լեզվաբանները երազել են մի հերոս հանձնար, որ կատարեր աշխարհի բոլոր լեզուների համեմատական քննությունը։ Հպարտությանը պիտի նշենք, որ աշխարհի լեզուների վերաբերյալ ուսումնասիրությունների համակն օգտագործմամբ առաջին խիզախողը եղավ մեր հայրենակիցը՝ հայ խոշորագույն լեզվաբան Աճառյանը։ Լույս են տեսել արդեն 7 սովորածավալ հատորներ, որոնք նվիրված են լեզուների հնչյունաբանության և ձևաբանության համեմատական քննությանը։ Սույն աշխատության «Ներածություն» հատորի (որն, ի դեպ, ոչ միայն լեզվաբանների, այլև ընդհանրապես հասարակական գիտությունների բոլոր ներկայացուցիչների համար սեղանի գիրք է) առաջին մասում ի մի են բերված լեզվաբանության վերաբերյալ պատմա-համեմատական մեթոդի բոլոր նվաճումները, հանգամանորեն քննված է լեզուն իր հատկանիշների ամբողջության մեջ։ Իսկ երկրորդ մասում, ըստ հնդեվրոպաբանության ընդունած լեզուների ցեղակցության սկզբունքի, տրված են լեզվաբանականները, նրանց նկարագրությունը և նախալեզուների ու մեկ ընդհանուր նախալեզվի գիտական վերականգնման փորձերը։ Այս բաժինը միաժամանակ պատմա-համեմատական մեթոդի մասին հալերեն լեզվով գրված ամենահամապարփակ աշխատությունն է։ Եվ ընդհանրապես պետք է նկատել, որ սովետական լեզվաբանության մեջ ոչ մեկն էլ չկարձա համակողմանի չի ներկայացրել պատմա-համեմատական մեթոդը, ինչպես որ այն արել է Հ. Աճառյանը։ Մյուս հատորներում հնա-

րավոր ամենալայն կերպով քննության է ենթարկված հայերենի հնչյունաբանությունն ու ձևաբանությունը՝ ըստ պատենի համեմատվելով աշխարհի 562 լեզուների հետ։ Մեր համոզմամբ համաշխարհային լեզվաբանական գիտությունը մեծապես կշահի, եթե Աճառյանի այս աշխատությունը, թարգմանվելով, մատչելի լինի տարբեր երկրների լեզվաբաններին։ Աշխատության արժեքը մեծ է նաև զուտ հայկաբանական իմաստով, քանի որ Աճառյանն ամենալայն քննություն է ենթարկել հայերենի բոլոր արտահայտությունները՝ գրաբար, միջին հայերեն, աշխարհաբար՝ արևելահայ և արևմտահայ գրական դրսևորումներով, այլև հայերենի 50-ից ավելի բարբառներ։ Եթե աշխարհի լեզուների իրողություններին վերաբերող հատվածները հանենք էլ, թեկուզ միայն հայերենի իրողությունների պատմական քննության տեսակետից այս աշխատությունը դարակազմիկ է, ամենամթողջականն ու ամենակատարյալը հայ լեզվաբանության մեջ և միաժամանակ, ինչպես պիտի է։ Աղայանն է ճշտորեն գնահատում, «խոշոր մեթոդում է հանդիսանում ամբողջ սովետական լեզվաբանության մեջ»⁴։

բ) Հայոց լեզվի պատմության և պատմա-համեմատական քերականության հարցեր

Մեր իրականության մեջ Աճառյանն առաջինն էր, որ գրեց հայոց լեզվի պատմություն։ Նույնպես Աճառյանն էր, որ տարիներ շարունակ այդ առարկան որպես գիտակարգ ձևավորեց և դասավանդեց ուսանողությանը։ Աճառյանի «Հայոց լեզվի պատմություն» վերստությունը աշխատությունը բաղկացած է 2 հատորից։ 1-ին հատորում, իր համար որոշակիորեն նախաձեռնված լինելով հայերենի բնիկ՝ հնդեվրոպական տարրը, Աճառյանը համատարակ նկարագրում է հնդեվրոպական շրջանը և ապա Հյուրքման-Մելեի հետևողությանը ճշտում հայերենի դիրքը բոլոր լեզուների մեջ։ Դեռևս 1940 թ., մատկանության անել օրինի, Հ. Աճառյանը ճշտորեն գրում էր. «Լեզվաբանությունը հաստատել է, որ հայերենը պատկանում է լեզուների այն մեծ քննականին, որ հայտնի է գիտության մեջ Հնդեվրոպական լեզվաբան անունով»⁴։

³ Հ. Աճառյան, Լիակատար քերականության հայոց լեզվի, Ներածություն, Երևան, 1955, էջ XXXV:

⁴ Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, Ա, մաս, Երևան, 1940, էջ 7:

Այնուհետև ըստ վաղեմության կարգի բըն-
նում է հնագույն լեզուների ազդեցությունը
հայերենի վրա՝ հասցնելով մինչև հունական
ազդեցության ժամանակները: Իսկ երկրորդ
հատորում քննում է գրական հայերենի
փոխառությունների հարցը հունարենից,
եբրայեցերենից, արաբերենից, վրացերե-
նից, ռուսերենից, ինչպես նաև թուր-
քերենից փոխառյալ բառերի հարցը մեր ժո-
ղովրդական խոսվածքներում: Ըստ Անտո-
յանի, լեզվի պատմությունը լեզվի ձևափո-
խությունների պատմությունն է, որին նպաս-
տում են երեք գործոններ. ա) Ներքին, իբ-
րեւ թարեւրջության և բնական զարգացման
հետևանք առաջացած ձևափոխություններ,
որոնք ամենակարևորն են. բ) Արտաքին
ճանապարհով՝ փոխառությամբ առաջացած
ձևափոխություններ, իբրև արդյունք օտար
ազդեցությունների. գ) Անհատական ճա-
նապարհով, այսինքն՝ գրական նորամտու-
թյուններով առաջացած ձևափոխություններ:
Հեղինակը որոշակիորեն սահմանազատում
է անհրաժեշտաբար փոխառյալ բառերը ի
հետևանք ձուլման քաղաքականության ներ-
թափանցած բառերից: Այսպես, օրինակ՝
պահլավական 960 փոխառյալ բառերից
արդի գրական և ժողովրդական լեզվի մեջ
գործածական են 581 բառ, միևնույն թուր-
քերենը, որ ավերել է հայերենի խոսվածք-
ները, գրական լեզվում գրեթե հենք չի թո-
ղել:

Հայ բանասիրության մեջ ոմանք, չափա-
զանցելով, Անտոյանի «Հայոց լեզվի պատ-
մությունը» ջանում են ներկայացնել որպես
«Արմատական բառարանի» տեսություն,
մինչդեռ հայտնի է, որ 2-րդ հատորում հե-
ղինակը քննել է մեր լեզվի պատմության
ամենաբազմազան հարցեր՝ փյախաանական
հայերենը, գրաբարը, հայերենի բարբառնե-
րի ծագման ժամանակի հարցը, աշխարհա-
բարի կազմությունն ու գրապաշարը: Հա-
յոց լեզվի անցած պատմական ուղու ամ-
բողջ տարածքի վրա հեղինակը բացահայ-
տում է մեր լեզվի թարեւրջական փոփո-
խությունները: Վերևի բոլոր խնդիրները
քննելիս ի մի է բերում արտահայտված
տեսակները և գիտական անստարկելի եզ-
րակացություններ ու հետևություններ ա-
նում: Այս բոլորից բացի, սույն աշխատու-
թյան մեջ Անտոյանը տվել է հայոց լեզվի
պատմության ուսումնասիրությունն ամբող-
ջացնելու ծրագիրը՝ մատնանշելով այն բո-
լոր հանգուցային հարցերը, որոնցով պետք
է զբաղվեն հայերենագրությանը գիմկորս-
գրված մտնագետները:

գ) Բառագիտություն և բառարանագրություն

Անտոյանը դեռևս դպրոցական հասակում
բացառիկ սեր է ունեցել բառարանագրու-
թյան նկատմամբ: Նա մեզ թողել է «Հայե-
րեն գավառական բառարանը»՝ շուրջ 30.000
բառով, «Հայոց անձնանունների բառարա-
նը» (5 հատոր) և վերջապես՝ հայ բառա-
րանագրության մի գլուխ-գործոց «Հայերեն
արմատական բառարանը» (7 հատոր):

«Գավառական բառարանում» մեկտեղ-
ված են հայերենի բարբառների 30.000 բա-
ռեր, որոնք որպես բառ կամ իմաստ չկան
գրաբարում և մեր նոր գրական լեզուներ-
ում: Իսկ «Անձնանունների բառարանում»
Անտոյանը մեկտեղել և ուսումնասիրել է
համայն հայ մատենագրության մեջ օգտա-
գործված բոլոր անձնանունները՝ մինչև
1500 թ., իսկ այնուհետև՝ ընտրովիության
սկզբունքով առավել նշանավոր անձան-
անունները: Անտոյանի այս բառարանը չա-
փազանց արժեքավոր է ոչ միայն լեզվա-
բանական իմաստով, այլ նաև հայ բանասի-
րության և հայոց պատմության համար: Պա-
տահական չէ, որ Անտոյանի «Հայոց անձ-
նանունների բառարանը» գիտական շրջա-
նակներում գնահատվում է հայոց պատմու-
թյան համար նույնքան կարևոր մի աշխա-
տանք, որքան որ Հայկազյան բառարանը՝
հայոց լեզվի համար:

Սակայն Անտոյանի բառագիտական և
բառարանագրական աշխատանքների գը-
լուխ-գործոցը «Հայերեն արմատական բա-
ռարանն» է: Անտոյանի այս աշխատանքը
շատ բարձր է գնահատված հայ և օտար
լեզվաբանների կողմից. «Ոչ մի լեզվի հա-
մար չկա այսքան ճոխ, այսքան կատարյալ
ստուգաբանական բառարան»⁵, գրել է
Անտոյան Մեյեն: «Հսկայական գործի մը
առջև կը գտնվիմ... Հեղինակը ձեռնամուխ
եղած է հանճհարին: Անհատական ուժը
չէր կարող հասնիլ այս ընդարձակածավալ
կառուցվածքին կատարման: Բայց Անտո-
յան հասած է բարդալ: Նա տված է աշ-
խատություն մը, որ կը մնա անկախընթաց
օրինակ նույնիսկ համաշխարհային գրակա-
նության մեջ»⁶, ասում է հայտնի բանա-
սեր Ռ. Ալիկյանը: Անտոյանն Արմատակա-
նի վրա աշխատել է շուրջ 40 տարի՝ աշա-
կերտական տարիներից մինչև 1926—32
թթ., երբ իր ձեռքով արտագրելով ապա-
կետիպ հրատարակեց: Անտոյանի Արմա-
տականը, իր բառերով ասած, «Ամբողջա-

⁵ Հ. Անտոյան, Հայերեն արմատական բառարան, 7-րդ հատոր, Հավկված, Երևան, 1935, էջ 205:

կան ցանկն է հայերեն լեզվի արմատների, իրենց բացատրությամբ և ստուգաբանությամբ միասին»⁶։ Մոտավոր պատկերացում կազմելու համար ասենք, որ, կարդալով ամբողջ հայ հին մատենագրությունը, ինչպես նաև հայերեն բոլոր և օտարագիի առավել կարևոր տասնյակ բառարաններ (այդ գրականության ցանկը միայն 25 մեծադիր էջից է բաղկացած), Աճառյանի տվել է հայերեն շուրջ 11.000 արմատական բառեր՝ զանազանելով բնիկն ու օտար փոխառյալը, բնաձայնականն ու հայկերտը, այլև շինծու բառերը։ Հայց Աճառյանի աշխատանքը միայն հավաքչական չէ։ Հավաքելով հայերենի շուրջ 11.000 արմատները, Աճառյանն իր հերթին հսկայական թվով բառեր է օգտագործել։ Լավ է, խոսքն իրեն տանք, որպեսզի նաև իսկական գիտնականին վաշել համետությունը հաղորդակից լինենք։ «Գիտունների առաջարկած ստուգաբանություններից դուրս, ինքս էլ ունիմ բազմաթիվ ստուգաբանություններ, մի մասը արդեն հրատարակված զանազան տեղեր, մի մասը անտիպ։ Այն ստուգաբանությունները, որոնք այժմ անհիշտ են համարում, դրված են պատմականի շարքում, իսկ այն ստուգաբանությունները, որոնք ենթարկել են Հյուբշմանի և Մելեի հավանության և կամ քննության խիստ բովից անցկացրել, կարծում են, թե համապատասխան են գիտության պահանջներին, համարվելով են դեռ ուղիղ ստուգաբանությանց շարքը, բայց նշանակելով միշտ Աճ. ստորագրությամբ, առ ի զգուշություն ընթերցողների։ Այս ստուգաբանությունների թիվն է 1604 (մեծ թիվ, բայց դրանցից միայն 136-ը բնիկ հայ, իսկ մնացյալը փոխառյալ կամ բնաձայն լինելով, բանակը մեծապես փոքրանում է)»⁷։ Այո՛, Հ. Աճառյանը ոչ միայն ի մի հավաքեց հայերենի բոլոր արմատական բառերը, այլև ստուգաբանեց դրանցից 1604 բառ։ Աճառյանի սույն աշխատանքը զուտ բառարանագրական ուսումնասիրություն չէ, այլ առաջին հերթին՝ բառագիտական մի կատարյալ հետազոտություն։ «Արմատականում» յուրաքանչյուր բառի մասին խոսվում է հինգ բաժնով՝ ա) **Բառագիտություն**։ Երկրորդ է արմատը, նրա ինդոլական կամ խոնարհման ձևերը, նշանակությունը, վկայություններ գործածության մասին, նրանցից կազմված բառերը և տարբեր գրությունները։ բ) **Ստուգաբանություն**։ սա բառարանը դիմագծող և ամենակարևոր

մասն է, որ տրվում է արմատի ստուգաբանությունը՝ իր խոստովանությամբ Հյուբշմանի և Մելեի հավանության արժանացած։ գ) **Ստուգաբանությունների պատմություն**։ այս բաժնում բերված են տվյալ բառի մասին հայ և օտար հայագիտության մեջ կատարված բառազնություններն ու դիտողությունները։ Սա հայերենի արմատների ստուգաբանության կատարյալ պատմությունն է։ դ) **Գավառական ձևեր**։ այստեղ դասավորված են յուրաքանչյուր արմատի ստացած ձևերը մեր բարբառներում։ ե) **Հայերենից փոխառյալ բառեր**։ Աճառյանի զանազան մասը՝ սա Արմատականի «ամենից յուրահատուկ մասն է և նպատակ ունի պարզելու հայերենի ազդեցությունը շրջակա օտար լեզուների վրա»։ Եթե մեկն ուզում է ուսումնասիրել հայերենի ազդեցությունն օտար լեզուների վրա, այստեղ կարող է գտնել ամբողջական նյութը։ Այս չափազանց համառոտ նկարագրությունն իսկ ցույց է տալիս բառագիտական այն հսկայածավալ աշխատանքը, որ Աճառյանը կատարել է Արմատականում։ Աճառյանի «Արմատական բառարանը» հեղինակի անմահության առհավատյանն է։

դ) Հայ բարբառագիտություն

Հայերենը չափազանց հարուստ է բարբառներով։ Այսօր գիտությանը ծանոթ են հայերենի 50-ից ավելի բարբառներ, որոնք հնչյունական, բառական և քերականական իմաստով հսկայական լեզվական նյութ են պարունակում։ Իր լեզվաբանական աշխատանքներին զուգընթաց Աճառյանն ուսումնասիրեց 10-ից ավելի հայերեն բարբառներ։ Նրա գրչին են պատկանում Ագուլիսի, Առտիալի, Այալներեզի, Համշենի, Հարաբադի, Մարադալի, Նոր Նախիջևանի, Նոր Ջողալի, պոլսահայ, Սուչավալի և Վանի բարբառների վերաբերյալ արժեքավոր մեծագրությունները։ Աճառյանի համար բարբառների ուսումնասիրությունը կարևոր էր նաև այն իմաստով, որ դրանցով առավել ամբողջական տեսքով էր ներկայացնում իր լեզվի պատմությունը, կիսկատար քերականությունն ու Արմատականը։ Իր ուսումնասիրած բարբառներում Աճառյանը նաև ընդհանուր լեզվաբանության համար հետաքրքրություն ներկայացնող լեզվական մի շարք երևույթներ հայտնաբերեց։ Հիշենք թեկուզ Վանի բարբառի հնչյունական հսկայի երևույթը, որ «Աճառյանի օրենք» անունով է հայտնի գիտությանը։ Աճառյանը գործնական բարբառագիտական աշխատանքների հետ մեկտեղ զբաղվել է նաև

⁶ Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Ա. հ., Երևան, 1971, էջ 1։

⁷ Նույնը, էջ 15։

քարքառագիտական տեսական հարցերով: «Հայոց լեզվի պատմություն» աշխատության 2-րդ մասի «Հայ քարքառների ծագման ժամանակ» գլխում լայնորեն քննարկում է արդի հայ քարքառների ծագման ժամանակաշրջանի հարցը, ճշտորեն եզրակացնում, որ դրանք բոլորն էլ գրաբարի ճյուղավորումներն են, մեծ մասամբ ձևավորված 12-րդ դարից հետո, երբ գրաբարը դադարել էր խոսակցական լեզու լինելուց. ուստի և՛ նոր լեզվամտածողության հիման վրա, գումարելով նաև հայերի արտագաղթը, հաղորդակցության կապի կտրվելը հայության միջև, պետական-քաղաքական կենտրոնի պակասը, փոքրաթիվ հայ ժողովրդի մեջ առաջ եկան մեծաթիվ քարքառներ:

Առանձնապես արժեքավոր է Հ. Աճառյանի ֆրանսերեն լեզվով լույս տեսած «Classification des dialectes arméniens» (Փարիզ, 1909 թ.) աշխատությունը, որ Աճառյանը հայերենի քարքառների գիտական դասակարգման գիշտ սկզբունքը տվեց, այլև, ճիշտ է, թեև չափազանց համառոտ, նկարագրեց հայերենի 31 քարքառներ և մի քանի տասնյակ ենթաքարքառներ ու խոսվածքներ: Աճառյանի սույն աշխատանքն արժեքավոր է նաև նրանով, որ Մեծ եղեռնի հետևանքով մի շարք քարքառների և խոսվածքների ներկայացուցիչներ իսպառ կոտորվեցին, և այսօր այդ մասին միայն որպես աղբյուր Աճառյանն ունենք: Աճառյանի սույն աշխատանքը ժամանակին բարձր գնահատեցին երևելի հայագետ Յ. Կարսոն ու Ա. Մելեն: «Պր. Աճառյանը միակ անձն է աշխարհում, որ կարող էր գրել մի այսպիսի գիրք,—գրում է Ա. Մելեն:—Նա անշուշտ միակն է, որ ծանոթ է նույնի եզականապես ցրված մատենագիտության հետ. ապահովապես նա միակն է, որ ունի անձնական դիտողությանց այն պաշարը, բրի հետքը ամեն ինչի երևում է այս դասավորության մեջ»: Ինչպես ժամանակին ճիշտ կերպով նկատել է Մելեն, Աճառյանի այս աշխատությունը, որ 1911 թ. առավել ամբողջական լույս տեսավ հայերեն «Հայ քարքառագիտություն» խորագրով, «կատարելի քննությանց ծրագիր» դարձավ: Նրա հետևողությամբ մեզանում հայագետներն ուսումնասիրեցին մի քանի տասնյակ նոր քարքառներ, հատկապես արևմտահայ քարքառներ, որոնք լեզվական նորանոր փառներ տվին հայոց լեզվի պատմության ամբողջական ուսումնասիրության և տեսական քարքառագիտության համար:

Լեզվաբանական աշխատանքներին զուգընթաց Հ. Աճառյանը զբաղվում էր մանկա-

վարժությամբ և հայագիտությամբ բառիս ամենալայն իմաստով: Նա գրել է դասագրքեր գրաբարի և պարսկերենի վերաբերյալ, հայ նոր գրականության վերաբերյալ, այլև դիմաստվերներ արևմտահայ գրողներ և մտավորականներ Պ. Դուրյանի, Մ. Պեշիկ-թաշլյանի, Ն. Թուսիճյանի, Ծերենցի, Գ. Օտյանի, Սրբոհի Տյուսաքի և այլոց վերաբերյալ: Խմբագրել է գրքեր, որպես ազնիվ քաղաքացի արձագանքել է մեր ժողովրդի առավել կարևոր խնդիրներին: Անցյալ դարի 90-ական թթ. սկսած մինչև դարիս 50-ական թթ. չկա հայ բանասիրության մեջ մի հարց, որին արձագանքած չլինի Աճառյանը: Այս իմաստով նա մեր կետադրյալ բանասիրության կենդանի հանրագիտարանն է:

Հ. Աճառյանը միաժամանակ հայ եկեղեցու և Մայր Աթոռի մեծ բարեկամն էր: Արդեն խոսվեց այն մասին, որ նա պաշտոնավարել է Գևորգյան ճեմարանում: Աճառյանի հոդվածները ժամանակին զարդարում էին Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Արարատ» ամսագիրը, որտեղ տպագրվել են Աճառյանի մի շարք լեզվաբանական կարելիոր աշխատություններն ու գրախոսությունները: Ի դեպ, ի պատիվ Հ. Աճառյանի, ասենք, որ դեռևս 1914 թ. «Արարատում» տպագրած հոդվածում Մառի հայերական «տեսության» մասին ասում էր. «Հայտնի է, որ Մառի հնարած վարդապետությունը ոչ մեկ հետևող ունի եվրոպական գիտական աշխարհի մեջ» (Էջ 281—282): Այս գեղեցիկ ավանդույթը Աճառյանը շարունակեց նաև Մայր Աթոռի ներկայիս պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագրում: Խորհրդանշական է, անշուշտ, որ «Էջմիածին» ամսագրի հեղձ 1-ին համարում տպագրվել է Հ. Աճառյանի «Հայ տառերի գլուխի ստույգ թվականը» արժեքավոր հոդվածը: Այնուհետև Աճառյանն «Էջմիածին» ամսագրի էջերում հանդես եկավ մեր եկեղեցական մեծ դեմքերի՝ Մ. Խրիսյանի, Գ. Հովսեփյանի և Գ. Սրվանդությանի կյանքին ու գործունեությանը նվիրված հոդվածներով, ինչպես նաև Կոմիտասի և ազգային երելիի դեմքեր Ռեթեսու Պերպերյանի, Մ. Տյուրափի, Մատթեոս Մամուրյանի և Գրիգոր Արծրունու վերաբերյալ հոդվածներով: «Էջմիածին» ամսագրում պարբերաբար հրատարակվեց Աճառյանի «Մետրոպ Մաշտոց» հրաշալի աշխատությունը, ինչպես նաև նրա այլ հոդվածները: «Էջմիածին» ամսագրի էջերում լայնորեն լուսաբանված են Աճառյանի առավել կարևոր աշխատությունները համապատասխան գրախոսություններով, իսկ 1953 թ. մայիսի համարում տրված է

Աճառյանի տպագիր և անտիպ աշխատությունների ամբողջական մատենագիտությունը: Երջանկահիշատակ կաթողիկոս Գևորգ Վեցերորդը Հ. Աճառյանի մահվան առթիվ գրած ցավակցականում ասում էր. «Հայ գիտության և Հայ Ազգի մեծ մշակ և Մեր անձնական սիրելի բարեկամ Հրաչյան կատարել է իր պարտքը հանդեպ հայագիտության և Հայ Ազգի, որով և անմահացել է. նա ոչ միայն ապրում և ապրելու է իր գիտությունը և թողած երկերով, այլ հավետ փոփոխի ապրի Ազգի կենդանի հոգու մեջ և լսե նրա «ողորմիս»-ը»⁸:


Որպես տիպար հայ և տիպար գիտնական ապրեց Հ. Աճառյանը և մանավանդ՝ գիտական բացառիկ և անհավատալի արտադրողականությամբ: Նրա լեզվաբանական ծառանգության ճիմնական գործերում ամփոփված են հայոց լեզվի ուսումնասիրության այն բոլոր արդյունքները, որ ձեռք են բերված գիտական հայագիտության սկզբնավորումից ի վեր: Աշակերտելով եվրոպացի աշխարհահռչակ գիտնականներին, Աճառյանը լավագույնս յուրացրեց եվրոպական հայագիտության նվաճումները և հայ լեզվաբանությունը պանդխտությունից վերջնականապես և անվերադարձ բերեց ընկերոջը իր հայրենի կտորի տակ: Սա Աճառյանի խոշորագույն ծառայությունն է մեր ազգին:

⁸ «Էջմիածին» ամսագիր, 1953 թ., մայիս, էջ 7:

Ծառ է խոսվել Հ. Աճառյանի գիտական ծառայության մասին: Մենք կուզենալիք սույն հոդվածը վերջացնել Աճառյանի աշակերտ արոֆ. Է. Աղայանի գնահատականի հետևյալ խոսքերով. «Արմատական բառարանը, հարբառագիտությունը, Հայոց լեզվի պատմությունը և Անձնանունների բառարանը՝ մի մի գլուխ գործոցներ են իրենց տեսակի մեջ: Դրանք հայոց լեզվի ուսումնասիրության այն անգուգական կոթողներն են հանդիսանում, որ հայագետ դառնալ առանց նրանք խորապես ուսումնասիրելու, անկարելի է ...այդ գործերը՝ իրենց պարունակած համապարփակ փաստական նյութերով և այդ նյութերի գիտական մշակումով հայոց լեզվի ուսումնասիրության մեջ դարագլուխ են կազմում. ...Աճառյանն այդ աշխատություններով չափազանց մեծ ավանդ է մտցրել հայագիտության մեջ, ավանդ, որ երբեք չի կորցնի յուր արժեքը: Դադեր կանցնեն, շատ գործեր կկորցնեն իրենց արժեքը և մոռացման կտրվեն, բայց Աճառյանի այդ գործերը միշտ էլ կունենան իրենց պատվավոր տեղը հայագիտության մեջ, միշտ էլ կպահպանեն իրենց արժեքը»⁹ (ընդգծումը մերն է—Ա. Ա.):

⁹ Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, Ներածություն, Երևան, 1955, էջ XVI—XVII:





ԲԱԳՐԱՏ ՈՒՆՈՒԲԱԲՅԱՆ

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՂՎԱՆՆԻՑ ԹԵՎԻ ՍԱԶԲՆԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՅԸ

Հայոց եկեղեցու պատմության վաղագույն շրջանից մեզ են հասել աղբյուրագիտական սակավ նյութեր ու շատ ավանդություններ: Եվ եթե այսօր այդ շրջանի մասին կան գիտական հստակ պատկերացումներ, ապա շնորհիվ մեր հետազոտողների քրոնաշան պրպտումների, որոնք աղբյուրագիտական սուղ նյութերից ու ավանդություններից հյուսել են ժամանակի արժանահավատ պատկերը: Սակայն, այսօրհանդերձ, դեռևս կան հարցեր, որոնք դուրս են մնացել քրոնության ոլորտից, և նույնիսկ գիտական շրջանակներում նրանց մասին այսօր էլ տիրապետող է ո՛չ գիտական, մշտուշտ պատկերացումը: Այդօրինակ հարցերից է հայոց եկեղեցու Աղվանից թևի կազմավորումը:

Աղվանից կաթողիկոսության նվիրապետական ազդեցությունը տարածված է եղել բուն Աղվանքի և Ուտիք ու Արցախ նահանգների վրա: Բուն Աղվանքն ընդգրկում էր Կուրից մինչև Կովկասյան լեռնաշղթան և Ալազան գետից մինչև Կասպից ծովն ընկած երկրամասը: Իսկ Ուտիքն ու Արցախը հին Հայաստանի երկու նահանգներն էին, որոնք բռնում էին Կուրից մինչև Երասխը և այդ գետերի միախառնվելու վայրից մինչև Նարակերտ ավանը (այժմյան Խրամի գետաբերանում): 428 թ. պարսկական բռնապետությունը վերացրեց Արշակունյաց թագավորական հարստությունը Հայաստա-

նում և դարձյալ Արշակունյաց տոհմին պատկանող Մազքթաց թագավորությունը բուն Աղվանքում: Դրանից հետո էր ադեն, որ Ուտիք ու Արցախ նահանգներից և բուն Աղվանքից կազմվեց պարսկահպատակ մեկ մարզպանություն¹: Այս մարզպանության տարածքը հետագայում վարչա-քաղաքական բազմաթիվ վերաձևումների ու փոփոխությունների է ենթարկվել: Սակայն բոլոր պարագաներում հիշյալ տարածքի քրիստոնյա ամբողջ բնակչությունը մնացել է մեկ հոգևոր նվիրապետության՝ Աղվանից կաթողիկոսության իշխանության ներքո, իսկ այս կաթողիկոսությունն էլ միշտ ենթակա է եղել Ամենայն Հայոց Հայրապետությանը:

Եթե մարզպանական և ետմարզպանական շրջանների քաղաքական ու եկեղեցական կյանքի դարձդարձումները հնարավոր է առնել պատմագիտական մի հյուսվածքի մեջ, քանի որ այդ շրջանների մասին խոսում են հայրենի արժանահավատ աղբյուրները, ապա նույնը չի կարելի ասել նախորդ շրջանի մասին՝ անմիջական աղբյուրների բացակայության պատճառով: Բավական է

¹ Այս առթիվ հանգամանորեն տե՛ս Բ. Ոլոբաթյան, Հյուսիս-արևելյան Հայաստանի նախամարզպանական շրջանի վարչա-տնտեսական վիճակի հարցի շուրջը. «Հանրեր Երևանի համալսարանի», 1975, № 2, էջ 149—164:

ասել, որ Աղվանից կաթողիկոսության շրջանակներում ընդգրկված տարածքի բնակչության քրիստոնեության դարձի հանգամանքների համար հետազոտողները միակ ու արժանահավատ աղբյուր են ընդունում «Աղվանից աշխարհի պատմություն»-ը, որը վերջնական խմբագրման է ենթարկվել Ժ դարում: Այս «Պատմության» տվյալներն են, որ շարադրվել են, ընդունվել կամ չեն ընդունվել մասնագիտական հետազոտություններում, հայոց եկեղեցու բազմադարյան պատմությանը նվիրված հին ու նոր երկերում:

Իսկ այդ տվյալները հետևյալներն են.

Հստ ավանդության² Թադեոս առաքյալի Հայաստան քարոզության գալուց և այնտեղ նահատակվելուց հետո, նրա աշակերտներից մեկը՝ Նիշե անունով, վերադառնում է Երուսաղեմ, այնտեղ, իբր «ի ձեռաց սրբյուն Յակոբայ, եղբոր Տեան», ձեռնադրվում եպիսկոպոս՝ «վիճակ առեալ իր գԱրեւս», ապա «նանապարհ արարեալ լԵրուսաղեմէ ընդ Դարսա, մտանէ ի Մազբութս, խոյս տուեալ ի Հայաստանեայց, և սկիզբն առնէ քարոզութեան ի Չողայ... Անտի եկեալ յՈսրի գաւառ...» քարոզում է, հետո «եկեալ ի Գիս, կանգնեաց գեկեղեցի և մատուց գահարին պատարագ: Եւ անտի անցեալ ընդ դաշտակն Ջերզունի ի տեղի գոհարանի դիցամոլ կոապաշտիցն՝ անդ էառ զնահատակութեան պսակն»:

Հարողիչ-նահատակի մարմինը թաղվել է Հոմեմը կոչվող վայրում³:

Այս բոլորը կատարվել է մեր թվականության առաջին դարում:

Այլուստ հայտնի չեն Գիս, Ջերզուն, Հոմեմը տեղանունները: Սակայն հենց նույն աղբյուրի վկայությամբ՝ գտնվում էին Ոսրիք նահանգում⁴: Նկատի առնելով նաև նույն սկզբնաղբյուրի լրացուցիչ տեղեկությունն այն մասին, որ Նիշեի նշխարները հետագայում գտնվել է անմիջապես էլ տեղավորվել են մոտակա Հորեկ և Ներսիսի (հետագայի՝ Ջրվշտիկ) վանքերում, իսկ արանք գտնվում են ժամանակակից Մարտակերտի շրջանի հյուսիս-արևելյան մասում (Հորե-

կը կամ Հոռեկա վանքը՝ Թալիշ գյուղի թիկունքում⁵, իսկ Ջրվշտիկը, որ հենց այդ նշխարների պատճառով կոչվում է նաև Նիշեի առաքյալի վանք՝ Թարթառի ձորում⁶), կարելի է համոզված ասել, որ հիշյալ տեղանունները վերաբերել են Թարթառի ձախափնյակին, մոտավորապես այժմյան հարդալի շրջանի արևմտյան մասին և Միր-հաշիրի շրջանին:

Ուրեմն, Հայաստան աշխարհի առաջին քարոզիչ Թադեոս առաքյալի աշակերտ Նիշեն քրիստոնեություն է քարոզել բուն Աղվանքում և Ոսրիքում ու նահատակվել Թարթառի ձախ ափին:

Այս տվյալները հաղորդում է միայն «Աղվանից աշխարհի պատմությունը», և նրան էլ կրկնում են մեր միջնադարյան հեղինակները: Այլ խոսքով՝ նշված տվյալներն ստուգել անհնար է, քանի որ դրանք ժառող կամ առավել արժանահավատ տեղեկություններ հաղորդող աղբյուրներ չկան:

Անշուշտ չի կարելի սուկ մի քարոզության ու նահատակության հիման վրա պնդել, թե առ արդեն երկրամասի քրիստոնեացման սկիզբն է եղել: Մանավանդ, երբ հայտնի է, որ բնակչությունը միանգամայն անհաղորդ է մնացել այս ամենին, և նույնիսկ Նիշեի երեք աշակերտներից երկուսը վերստին հետևել են հեթանոսությանը⁷:

Հետաքրքիր է, որ Նիշեն քարոզչի մասին գրույցը երկրամասի եկեղեցական ամբողջ կյանքում միշտ էլ փորձաքարի նշանակություն է ունեցել: Աղվանից մարզպանության եկեղեցու հայրերը, իրենց առաջին քարոզչին ներկայացնելով իբրև Հայաստանի առաջին քարոզիչ Թադեոս առաքյալի աշակերտի և նրա գործը շարունակողի, ամեն կերպ ջանում էին իրենց կաթողիկոսությունը պահել Ամենայն Հայոց նվիրապետության ոլորտում: Բավական էր, սակայն, հերձվածողական մի փոքր խլրտում կամ կենտրոնախույս տրամադրությունների բոր-

⁴ Գիտվածք է կոչվում, քանի որ, ըստ ավանդության, այնտեղ է պահվել Նիշեն առաքյալի մատուց-գլուխը (Կաղանկատուացի, էջ 18):

⁵ Վանքը գտնվում է Թարթառի մի ոլորանում բարձրացած ծաղի վրա: Մակար Բարխուտարյանը հավանական էր համարում, որ վանքն իր Ջրվշտիկ անունն ստացած լինի գետի զմայելի ջրվեժի ձախից (Մակար վարդապետ Բարխուտարյանը, Արցախ, Բագու, 1895, էջ 234, ծան. 1):

⁶ Կաղանկատուացի, էջ 17: Ոսրիքում Նիշեին ու նրա երեք աշակերտներին հետապնդում են «անօրենք ոմանք»: «...Մի յաշակերտացն ընկալաւ ի նոցանէ զնահատակութեան վիճանն, և երկուցն, թողալ զերանելին Նիշայ, զանցին զկնի խոլխողիշ արանցն»:

² Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Թիֆլիս, 1912, էջ 16—17:

³ Հետազոտողները բազմիցս Գիս ավանը շփոթել են բուն Աղվանքի Քիշ անունով գյուղի հետ, որը գտնվում է Ծաքի-Նուխիից հյուսիս: Ծփոթել են նույնիսկ Լեոնայիս Կարաբաղի Մարտունու շրջանի Գիշիի հետ, որը համեմատաբար նորաստեղծ գյուղ է: Այս թյուրմիացությունների մասին հանգամանորեն տե՛ս Բ. Ոլորաբջան, Պատմա-աշխարհագրական ճշգրտումներ. «ԲՆՀ», 1971, № 1, էջ 176—177:

բոքում, որպեսզի նույն այդ Եղիշե քարոզիչը դառնար դրոշակ՝ Աղվանից կաթողիկոսությունը նախագահ հայտարարելու և Աղվանքի եկեղեցին առավել հին ու ինքնուրույն հորքորջելու համար:

Այս առումով ուշագրավ է նաև մի այլ հանգամանք: Աղվանքի հոգևոր ու աշխարհիկ ղեկավարները միշտ որոնել-գտել են մայր հայրենիքին ու նրա հավատին առավել սերտորեն կապվելու նոր հանգույցներ ու միջոցներ: Վաչագան Բարեպաշտի օրերում այդպիսի դեր ունեին Եղիշեի, Գրիգոր Լուսավորչի թոռ ու Գրիգորիսի մասունքների գյուղը և նրանց շուրջ ստեղծված համաժողովրդական ոգևորությունն ու ոգեշունչ ծիսակատարությունները: Հետագայում այդպիսի ճշմանկություն էին ունեցել Մեսրոպ Մաշտոցի թաղած խաչի մասունքները և Եղիշե քարոզչի ճշխարները, որոնք վաղ էին պահում հայ ողջապիստ հավատքի կրակը և անխախտ միասնությունը մայր հայրենիքի հոգևոր նվիրակետության հետ:

Այս ամենը վերաբերում է Աղվանից եկեղեցու նախապատմությանը:

Գալով քրիստոնեության տարածման և պետական կրոն ընդունելու ժամանակներին վերաբերող տվյալներին, պետք է ասենք, որ այստեղ ևս, ինչպես մեր միջնադարյան հեղինակների, այնպես էլ հետագայի հետազոտողների համար հիմնական ու անստարկելի աղբյուր է ծառայել «Աղվանից աշխարհի պատմությունը»: Ընդ որում, ոչ որի մտքով իսկ չի անցել, որ վերջնականապես ժ դարում շարահարուժած այդ «Պատմության» տեղեկությունները առավել վաղ ժամանակների իրողությունների մասին ընդունելի կարող են դառնալ միայն վաղ ժամանակներում ստեղծված աղբյուրներով ստուգվելուց հետո, կամ գոնե համեմատվելով այն աղբյուրների հետ, որոնք վկայակոչվում են ժ դարի մեր շարահարողի կողմից:

Այսպիսի քննություն ցայսօր չի կատարել ոչ ոք, նույնիսկ հայոց եկեղեցու կոթողային պատմության հեղինակ Մարգարիտ արքեպիսկոպոս Օրմանյանը:

Համոզվելու համար, թե այս անքննադատ վերաբերմունքի պատճառով Աղվանից կաթողիկոսությանը ենթակա նահանգների քրիստոնեացման հանգամանքներն ինչպիսի աղավաղ պատկեր են ստացել, կանգ առնենք միայն մեկ փաստի վրա:

Մովսես Դասխուրյանցու հավաստումով, հետագայի Աղվանից կաթողիկոսության ոլորտում, այսինքն բուն Աղվանքում և հայկական Ուտիք ու Արցախ մարզերում, քրիստոնեությունը հիմնավորապես տարածել է Ունապար արքան Աղվանից: Իբր թե երբ

Մեծ Հայքը լուսավորվեց Տրդատ թագավորի ձեռքով, «ամ ի հաւատս և զելս արեգականն»⁷. որք սակայ ինչ ծանուցեալ էին զծագումն փրկութեանն ճշմարիտ արեգականն և կրկնակի ընդ ձեռն Ունապարի գերագոյն լուսաւորեցան: Եւ այսք ի միում ժամանակի եղեն իրաւք աստուածուստ... (Ունապար) առնու և զվերստին ծնունդն ի սրբոյն Գրիգորէ Հայոց Լուսաւորչէ, զայ լուսագգեստեալ ի սուրբ Հոգոյն՝ առաւել լուսաւորէ զԱղուանս, եւ կայ, մնայ որդի մշտնջենական լուսոյն և վախճանէ զմարդկային կեանս: Իսկ զկնի սորին մահուանն խնդրեցա յԱղուանսցա մանուկն Գրիգորիս ի կաթողիկոսութիւն իրեանց, զի Ունապար արքայն մեր խնդրեաց ի սրբոյն Գրիգորէ նորին ձեռնադրութեամբն լինի եպիսկոպոս աշխարհին իրոյն...»⁸:

Այսպես, ուրեմն. Ունապար արքան Աղվանից, Մեծ Հայքի թագավոր Տրդատի հետ միաժամանակ, մկրտվելով Գրիգոր Լուսավորչից, եկավ, վերստին քրիստոնեացրեց Աղվանից աշխարհը կամ Արևելքը: Իսկ նրա մահվանից հետո էլ Արևելքի համար խընդրեցին, որպեսզի կաթողիկոս ձեռնադրվի Լուսավորչի թոռ Գրիգորիսը, քանի որ դեռևս Ունապարն էր խնդրել Լուսավորչին՝ անձամբ ձեռնադրելու Արևելից երկրի եպիսկոպոսին:

Կարելի էր մտածել, թե խոսքը վերաբերում է միայն բուն Աղվանքին, քանի որ Ունապարն իսկապես թագավորել է այնտեղ: Սակայն հիշատակված է նաև Գրիգորիսը, որ եպիսկոպոսություն է արել Արցախում (Ամարասն էր նրա աթոռանիստը): Հետևապես հեղինակը նկատի ունի հետագայի կաթողիկոսության ոլորտի մեջ առնված ամբողջ տարածքը⁹:

Բայց օրինական հարց է առաջանում. ժ դարի մեր շարահարողը որտեղից պիտի քաղած լինի այս տեղեկությունները: Աճ-

⁷ «Զելս արեգականն», այսինքն՝ արևելք: Պատմության մեջ «Արևելք» «Արևելից կողմանք», «Արևելից կողմանք Աղուանից» կոչվում են Մեծ Հայքի հյուսիս-արևելյան նահանգներ Ուտիքն ու Արցախը միասին, երբեմն՝ ներառյալ նաև բուն Աղվանքը, հատկապես երբ նկատի է առնվում մարզպանության շրջանը:

⁸ Կաղանկատուացի, էջ 21—22:

⁹ Այս տեղեկություններից մինչև վերջ հավատում էր Մարգարիտ արքեպ. Օրմանյանը (տե՛ս «Ազգապատում», § 71): Նույն վերաբերմունքն ունեն նաև հետագայի ուսումնասիրողները՝ Ս. Տ. Երևմյանը (տե՛ս «Очерки истории СССР, III—IX вв.», М., 1958, էջ 323), Կ. Վ. Տրևերը («Очерки по истории и культуре Кавказской Албании», М.—Л., 1959, էջ 217 և հոդ.) ևր:

կասկած՝ հին աղբյուրներից: Հատկապես վերոհիշյալ տեղեկություններն ընդգրկող հատվածից առաջ նա հիշում է իրեն նպաստավորած քերթողահայր Մովսեսին, այսինքն Մովսես Խորենացուն¹⁰: Իսկ Մովսես Խորենացու ճանաչած Ռոմայր թագավորն Աղվանից հետագա ժամանակների գործիչ է, որը ոչ մի առկայություն չի ունեցել քրիստոնեության տարածման հետևի և նույնիսկ Հայոց թագավորի բարեկամն էլ չէր: Պարսից արքունիքի հրահրմամբ նա կոլի էր եկել Պապ թագավորի դեմ և Չիրալի հայտնի ճակատամարտում (371 կամ 372 թ. գարնանը) պարսկական զորքերի հետ միասին խայտառակ ջարդ կրեց: «Ընդ որս և գնունայր Աղուանից արքայ, խոցոտեալ ի Մուշեղոյ որդոյ Վասակայ Մամիկոնէի, հաւնին ի պատերազմն»¹¹:

371/2 թ. պատերազմի դաշտ դուրս գալու համար թագավոր Ռոմայրը պետք է բաժանվում ջանքեր ու առույգ լիներ: Սակայն եթե նա դարի արշալույսին հավատանապատեանդուն գործունեություն էր ծավալել, ապա ավելի քան 70 տարի անց, հավանաբար, գաղափար ծերունի է եղել¹²:

Այս անհամաձայնությունը վերացնելու նպատակով Հր. Աճառյանն ընդունում էր, թե Դ դարում Աղվանքի վրա իշխել են Ռոմայր անվամբ երկու թագավորներ. «Ռոմայր Ա... Պարսից Շապուր թագավորի քեռայրն էր. եկալ Հայաստան, քրիստոնյա դարձալ, մկրտվեց. Լուսավորչից և քրիստոնեությունը տարածեց Աղվանքում», և «Ռոմայր Բ... Պարսից հետ միացած ճակատեց Հայոց Պապ (368—374 թթ.) թագավորի դեմ. գերի բռնվեց Մուշեղ Մամիկոնյա-

նից, որ վեհաճճարար ազատ արձակեց ըրան»¹³:

Սակայն Մովսես Դասխուրանցին Աղվանից երկու Ռոմայր թագավոր չգիտի: «Պատմություն» բոլոր ձեռագրերում ու տպագիրներում նրա ներկայացրած Աղվանից թագավորների ցանկն ունի միայն մեկ Ռոմայր («Եւ որ ըստ կարգի կացին թագաորք տանս Աղուանից՝ անուանք են այսոցիկ. Վաչագան քաջ, Վաչէ, Ռոմայր, Վաչագան, Միրհաւան, Սատոյ, Ասայ, Եսուաղէն, Վաչէ, ապա Բարեպաշտն Վաչագան»)¹⁴: Այս Ռոմայրին էլ սկզբնաղբյուրները (Փավստոսի ու Խորենացու երկերը) գիտեն միայն վերոհիշյալ ճակատամարտի առնչությամբ:

Դասխուրանցին, հենց սույլ այս հիշատակություններից քաղելով Ռոմայր անունը (նա որիչ աղբյուր չունի, հակառակ դեպքում անպայման կվկայակոչեր), նրան է վերագրել Աղվանից աշխարհը լուսավորելու ծառայությունը:

Որ այսքանը առ ի չզոյե հորինված պատմություն է, ապացուցվում է վերը շարադրված տեղեկությունների մի այլ բնույթի անստորմաքանակությունը: Այդ տեղեկությունների համաձայն, պետք է որ Ռոմայրի ձեռքով Աղվանքը լուսավորված լիներ, որպեսզի դրանց հետո Գրիգորիսն այնտեղ եպիսկոպոս ձեռնադրվեր: Սակայն, ինչպես հետո կտեսնենք, Գրիգորիսը եպիսկոպոս էր նշանակված Արցախում և այնտեղ իր գործն ավարտելուց հետո քարոզչության գնաց բուն Աղվանք ու այնտեղ էլ ճահատակվեց: Ուրեմն այդ բուն Աղվանքի թագավորի հրամանով¹⁵: Իսկ այդ թագավորի անունը ոչ թե Ռոմայր էր, այլ Սանեսան:

Սակայն այս մասին՝ քիչ հետո:

Մ. Դասխուրանցին, Ռոմայրի շուրջ հորինելով այս պատմությունը, չի նկատել նրա մանրամասների մեջ եղած նաև մի այլ հակասությունը. Գրիգորիսը եպիսկոպոս է նշանակվել Դ դարի սկզբին, իբր թե Ռոմայրի մահվանից հետո. «Ռոմայր արքայ Աղուանից... վախճանէ գմարդկային կեանս: Իսկ զկենի տարին մահուանն խնդրեցաւ լկուանից մահունկն Գրիգորիս ի կաթողիկոսութիւն իրեանց...»¹⁶:

Գրիգորիսի Ամարասում նշանակվելը,

¹⁰ Կաղանկատուացի, էջ 19:

¹¹ Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Տրփոյն, 1913, էջ 304: Նույնը նաև՝ Փառաոս Բիզանդ, Դրվագ Ե, գլ. Դ:

Մանանդյանի կարծիքով ճակատամարտը տեղի է ունեցել ոչ թե Չիրալի դաշտում, «այլ Բագրևանդ գավառի Բագվան ավանի մոտերքում»՝ Նպատ լեռան հյուսիսակողմում, ինչպես այդ որոշակի վկայում է Ամմիանոսը և Փավստոսը (Հ. Մանանդյան, Հենցական տեսությունն հայ ժողովրդի պատմության, հ. Բ, մասն Ա, Ե, 1957, էջ 205):

¹² Մ. արքեպ. Օրմանյանը («Ազգապատմութիւն», § 71), չնկատելով այս շփոթը, գրել է, թե «Աղվանից Ռոմայրը, կրեւի չի գերի ինկալ, որ Հայոց մայրաքաղաքի մեջ կը գտնվի» (Պապի դեմ կովկոց հետո՝—Բ Ու.), և իր երկիրը դառնալով «ստաւել լուսաորէ գԱղուան» (կովից 70 տարի առաջ.—Բ Ու.):

¹³ Հր. Աճառյան, Հայոց անճանաչողների բաժնը, հ. Դ, Ե., 1948, էջ 204:

¹⁴ «Պատմութիւն Աղուանից աշխարհի», գիրք Ա, գլ. ԺԵ:

¹⁵ Մ. Խորենացի, էջ 259: Փ. Բյուզանդ, դպր. Գ, գլ. 2:

¹⁶ Կաղանկատուացի, էջ 21—22:

բառ Մաղաբիա արքեպս. Օրմանյանի հաշվումների, եղել է ամենաուշը 320-ական թվականների¹⁷: Սակայն, վերոհիշյալ աղբյուրների համաձայն, Ուռնայր կենդանի էր դեռևս 370-ականներին և ճակատամարտ էր տալիս Հայոց զորքերի դեմ:

Այստեղ մենք անտես ենք առնում այն հանգամանքը, որ եթե Ուռնայրը նույնիսկ առնչություն ունեցած էլ լիներ բուն Աղվանքում քրիստոնեություն տարածելու գործին, ապա նա այդպիսի դեր չէր կարող խաղալ Ուտիքում ու Արցախում, այսինքն մարգապանական Աղվանքի աջափնյակում, քանի որ Դ դարում այդ երկրամասը Մեծ Հայքի նազմի մեջ էր գտնվում և նրա հետ էլ կապող էր ու պետք է ընդուներ նոր հավատը:

Բարեբախտաբար Հայաստանում քրիստոնեության տարածման հանգամանքները ներկայացնող մեր ամենաարժանահավատ աղբյուրը՝ Ագաթանգեղոսի Պատմությունը¹⁸, հավաստում է հարցի այս կողմը պարզող մի շատ կարևոր մանրամասն:

Արշակունյաց միասնական թագավորության ժամանակներն էին, երկրի բոլոր տն սննդինգ նահանգները՝ մեկ միապետի հովանու ներքո, միական ու համերաշխ: Գրիգոր Լուսավորիչը Կեսարիայում պետք է Հայոց քահանայապետ ձեռնադրվեր, և այդ սրբազան արարողությունն կատարելության համար Տրդատ թագավորի հրամա-

նով հավաքում են «զգլխաորս նախարարացն և զկուսակալս աշխարհացն», որոնց շարքում են՝ «ստաշին՝ իշխանն Անգեղ տան, երկրորդ՝ իշխանն Աղձնեաց, որ է քղեաշխն մեծ... ութերորդ՝ իշխանն Գուգարացոց աշխարհին... մետառաներորդ՝ իշխանն Սիմեաց աշխարհին, երկուտասաներորդ՝ իշխանն Ծաղեից աշխարհին, երեքտասաներորդ՝ իշխանն Ուտիացոց աշխարհին...»¹⁹:

Մենք այստեղ նշեցինք պատմիչի ցանկի այն անունները, որոնք կարևոր են քննվող հարցի համար. Գուգարացոց, Սյունյաց, Ծաղեից (որ է՝ Արցախի)²⁰ և Ուտիացոց աշխարհների կուսակալ-նախարարները: Եվ ահա նրանք Մեծ Հայքի մնացած նահանգների տիրակալների հետ են, Արշակունի թագավորի հրամանով հրավիրվել են մեկտեղ:

Ապա պատմիչը շարունակում է. «Այս իշխանք են ընտիրք կուսակալք, կողմակալք, հազարաորք, բիրաորք ի մեջ Հայաստան աշխարհի տանն Թորգոմայ, զորս գումարեաց թագաւորն Տրդատ և առաքեաց զնոսա ի կողմնսն Կապուտկացոց (կարդա՛ Կապադովկիացոց.—Բ. Ու.) ի քաղաքն Կեսարացոց, զոր ըստ հայերեն լեզուին Մաժար կոչեն. զի տարեալ գրիգորն՝ քահանայապետ կացուցեն իրեանց աշխարհին...»²¹:

Կատարվում է թագավորի հրամանը: Գրիգորը ձեռնադրվում է Հայոց քահանայապետ և «մեծաւ պատուով և թղթով և ժողովով գտորքն Գրիգորիոս անդուստ յուղարկեցին իշխանօքն հանդերձ»²²: Հայաստան մտնելով, նոր հավատի առաջնորդը, «նախադարակոյտ զօրուն հանդերձ», իր երկար ճանապարհին ավերել է տալիս հեթանոսական կրոնի մեհյաններն ու բազիլիկները, նրանց տեղերում հիմնում նոր հավատի սրբարաններ «եւ կացուցաներ քահանայս ի տեղիս-տեղիս»²³:

(Շարունակելի)

¹⁷ Օրմանյան, § 98:

¹⁸ Հետազոտողների մանրակրկիտ քննությամբ վաղուց պարզված է, որ Ագաթանգեղոսի անունով մեզ հասած Պատմությունը, չնայած Ե դ. կեսին աւարտուն, վերջնական տեսքի բերված լինելուն, իր հիմքում ունեցել է Գրիգոր Լուսավորչի ու Տրդատի գործերին նվիրված մի ստեղծագործություն, որ եկել էր Դ դարից, դեպքերի անմիջական օրերից, ու գրված է եղել նույն այդ դեպքերի ժամանակակցի ձեռքով: Այս ստեղծագործության հավաստի տեղեկությունները, ի՛նչ խոսք, անխաթար պահպանվել են Ե դարի խմբագրության մեջ, որով և վերջինս ունի անաւարկելի սկզբնաղբյուրի նշանակություն (Այս առթիվ հանգամանորեն տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք առաջին, Ե., 1944, էջ 157—162: **Հենրիկոս Գեղզեր**, Փափառոս Բյուզանդ կամ հայկական եկեղեցվո սկզբնաղբյուրություն, Վենետիկ, 1896, էջ 16): «...իրավամբ Ագաթանգեղոսի այս մասն («Հայաստանի դարձին և այնուհետև պատահած դեպքերու մանրամասն տեղեկությունը») կրնա իբր բացարձակ արժանահավատ աղբյուր համարվի»:

¹⁹ Ագաթանգեղոս, էջ 403—404:

²⁰ Արցախի նախարարությունը, Ծաղե-Ծոռք-Սոռք իշխանանիստ ավանի անունից, կոչվում էր նաև Ծաղեից իշխանություն կամ նախարարություն (տե՛ս Н. Азюца, Армения в эпоху Юстиниана, СП, 1908, стр. 293—294.

²¹ Ագաթանգեղոս, էջ 404:

²² Անդ, էջ 409:

²³ Անդ, էջ 413:



Յ Ո Ւ Ց Ա Կ

ՄԱՅՐ ԱԹՈՒՆ Ս. ԷԶՄԻԱՍՏԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

№ 372

ՄԱՍԵՀ ԲԱԲԱՋԱՆԻ ԿՏԱԿԻ ՊԱՏԵՆՆԸ
(Անգլերեն)

Թերթերը՝ 10:— Պրակները՝ 1:— Մեծությունը՝ 26,8×20,2×0,1 սմ.:— 'Կոթը'՝ հասարակ բարակ թուղթ:— 'Կագմ' չունի:— Պահպանակներ՝ չունի:— Վիճակը՝ բավարար:— Գրությունը՝ միասյուն:— Դատարկ թղթերը՝ 1p, 2p, 3p, 4p, 5p, 6p, 7p, 8p— 10p:— Տողերը՝ 25:— Գծումները՝ թուղթ ինքնին գծավոր է:— Գիրը՝ անգլերեն շեղագիր:— Զարդագրություն՝ չունի:— Գրիչը՝ անմալս:— Պատվիրատուն՝ անմալս:— Ժամանակը՝ 19-րդ դար:— Վայրը՝ Կալկաթա:— Ծանոթություն՝ կտակի անգլերեն պատճենը համված է Մայր Աթոռի դիվանատան արխիվից:

ՀԻՇՍԱՍԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 1ա.— This is my will.

To the Right Rev. Archbishop of New-Nakhichevan and Administrators of the holy church of that city and to all those who hear...

Թ. 7ա.— May God forgive all my enemies and give them a new heart and lead them through the agency of our beloved Saviour the hope of the world to the path of righteousness. To whom all glory for ever and ever, Amen,

Written and sealed in the year of our Lord Jesus Christ seven hundred ninety five (պսիքն 1795 թ.—Ն. Մ.) and the 15th of March at Cal-

* Ծարունակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի № Ն ը—Թ-ից, ԺԲ-ից, 1965 թվականի № Ն ը—Ժ-ից, 1968 թվականի № Է-ից, 1970 թվականի № Ն Դ—Ե-ից, Ժ-ից, ԺԲ-ից, 1971 թվականի № Ն Ե—Ը-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1972 թվականի № Ն Ա—Բ-ից, Դ-ից, 1973 թվականի № Ն Ա—Գ-ից, Ը-ից, 1974 թվականի № Ն Գ-ից, Է—Ը-ից, 1975 թվականի № Ն Ա-ից, Գ-ից, ԺԱ—ԺԲ-ից և 1976 թվականի № Ն Բ—Գ-ից:

cutta of East India.

L. S.

Masseh Papachan Mardiross.

Թ. 8ա.— We, the undersigners, testify that the same Masseh Mardiross by his free will bequeathed his property to the Archbishop of New-Nakhichevan and declared the same Der Stepannoss the priest and the delegate of St. Echmiadzin de-visee and executor, and to whom he delivered the papers mentioned in body of will.

I testify

Der Hagob Der Bedrossian

Markar Ohannessian Tatoumianz

David Asvadzaadorian.

№ 373

ՄԱՍԵՀ ԲԱԲԱՋԱՆԻ ԿՏԱԿԻ ՊԱՏԵՆՆԸ
(Անգլերեն)

Թերթերը՝ 5:— Պրակները՝ գոյություն չունի, առանձին թղթեր են, որոնք ամրացված են մետաղյա բռնիչով:— Մեծությունը՝ 27,1×21,7×0,05 սմ.:— 'Կոթը'՝ հասարակ բարակ դեղնած թուղթ:— 'Կագմ' չունի:— Պահպանակներ՝ չունի:— Վիճակը՝ բավարար:— Գրությունը՝ միասյուն:— Դատարկ թղթերը՝ 1p, 2p, 3p, 4p, և 5p:— Տողերը՝ 31:— Գծումները՝ թուղթ ինքնին գծավոր է:— Գիրը՝ անգլերեն շեղագիր:— Զարդագրություն՝ չունի:— Գրիչը՝ անմալս:— Պատվիրատուն՝ անմալս:— Ժամանակը՝ 19-րդ դար:— Վայրը՝ Կալկաթա:— Ծանոթություն՝ կտակի անգլերեն պատճենը համված է Մայր Աթոռի դիվանատան արխիվից:

ՀԻՇՍԱՍԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 1ա.— This is my will.

Թ. 5ա.— Written and sealed in the year of our Lord Jesus Christ seven hundred ninety five and the 15th of March, at Calcutta of East India.

L. S.

Masseh Papachan Mardiross

(Ապա ճիշտ նույն ինչպես նախորդ ձեռագրում՝ № 372-ում)։

№ 374

ՄԱՍԵՀ ԲԱՐԱՋԱՆԻ ԿՏԱԿԻ ՊԱՏՃԷՆԸ
(Անգլերեն)

Թերթերը՝ 14:— **Պրակները՝** գոյություն չունի, առանձին թղթեր են, որոնք ամրացված են մետաղյա բռնիչով։ **Մեծությունը՝** 29,5×23,5×0,1 սմ։— **Նյութը՝** դեղնած կեղտոտած շատ բարակ թուղթ։— **Կազմ՝** չունի։— **Պահպանակներ՝** չունի։— **Վիճակը՝** բավարար։— **Գրությունը՝** միապուն։— **Դատարկ թղթերը՝** բոլոր թղթերի երկրորդ էջը դատարկ է։— **Տողերը՝ 25:**— **Գծումներ՝** չունի։— **Գիրը՝** անգլերեն շեղագիր։— **Զարդագրություն՝** չունի։— **Գրիչը՝** անհայտ։— **Պատվիրատուն՝** անհայտ։— **Ժամանակը՝** 19-րդ դար։— **Վայրը՝** Կալկաթա։— **Ծանոթություն՝** կտակի անգլերեն պատճենը հանված է Մայր Աթոռի դիվանատան արխիվից։

ՀԻՇՍԱՅԱՐԱՆՆԵՐ

Թ. 1ա.— To Monsignor the Archbishop, the Administrators of beneficent foundations of Nor-Nahichevan, and to all who will learn this affair, I hu(m)bly announce them as follows.

When, I, the undersigned Masseh Mardiros, the same as above named, have remitted to Der Stephanus the above written act... (He alludes to the testament dated the 23th November 1793).

Signed and sealed at Calcutta, (թ. 14ա) this fifteenth day of March in the year one thousand seven hundred and ninety five.

(signed) Masseh Papajan or Mardiros
and sealed.

On the approbation and demand of Masseh Mardiros, we testify he has declared and said before us that this is his last will, special and particular testament in favour of the Bishop and the Administrators of Nor-Nahichevan, which he has signed, sealed and given in our presence to Der Stephanus Der Haroutian.

(Signed): Der Hagop Der Bedrossian

(Signed): Marcar Hovhannessian Papoumians.
I am also witness,

(Signed): David Asvazadourian.

№ 375

ՆԱՄԱԿԻ ՊԱՏՃԷՆ
(Ֆրանսերեն)

Թերթերը՝ 4:— **Պրակները՝ 1:**— **Մեծությունը՝** 37,1×24,2×0,05 սմ։— **Նյութը՝** դեղնած կեղտոտած հասարակ թուղթ։— **Կազմ՝** չունի։— **Պահպանակներ՝** չունի։— **Վիճակը՝** բավարար։— **Գրությունը՝** միապուն։— **Դատարկ թղթեր՝** չունի։— **Տողերը՝ 36:**— **Գծումները՝** թուղթն ինքնին զմպիր է։

— **Գիրը՝** ֆրանսերեն շեղագիր։— **Զարդագրություն՝** չունի։— **Գրիչը՝** անհայտ (շատ հավանաբար Կ. Պոլսի հայ փաստաբաններից մեկը)։— **Պատվիրատուն՝** Տեր Ստեփաննոս քահանա Տեր Հարությունյանի ժառանգորդները։— **Ժամանակը՝** 7 մայիսի 1894 թ.։— **Վայրը՝** Կոստանդնուպոլիս։— **Ծանոթություն՝** ֆրանսերեն նամակի պատճենը հանված է Մայր Աթոռի դիվանատան արխիվից։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կոստանդնուպոլսեցի հայ փաստաբանն ուսումնասիրելով Կալկաթայի նախկին բնակիչ Մասեհ Բաբաջանի մի քանի կտակները, այս նամակում որոշ բացատրություններ ու տեղեկություններ է տալիս այս կտակների կտակակատար և Մասեհ Բաբաջանի որդեգիր զավակ Տեր Ստեփաննոս քահանա Տեր Հարությունյանի ժառանգորդներին։ Ինչպես նամակում պարզվում է, Տեր Ստեփաննոս քահանան Հնդկաստանից դեպի Նոր Նախիջևան գնալու ճանապարհին 1803 թվականին վախճանվել է Կոստանդնուպոլսում, իսկ քարերաքն արդեն մահացած է եղել Կալկաթայում 1799 կամ 1800 թվականներին։

Հետաքրքրության և գործի կարևորության տեսակետից ստորև տրվում են նամակի որոշ մասերը միայն։

Թ. 1ա.— En réponse à Votre lettre du 29 Décembre dernier (այսինքն 1893 թ.—Ն. Մ.), nous avons l'honneur de Vous donner les explications suivantes, et afin de pouvoir les établir clairement, nous croyons nécessaire de commencer par mettre de nouveau ici succinctement les objets des testaments:

1. Testament du 23 novembre 1793, par lequel Masseh institue Der Stephanus son fils adoptif, et donne à lui et à ses héritiers la maison „Palahana“ en incluant à ce testament une quittance, dans laquelle il déclare qu'il a intégralement reçu de Der Stephanus la contrevaletur de la dite maison qu'il évalue à 9 roubles.

2. Testament du 30 mai 1794, par lequel il divise en 16 parts ses biens, meubles et immeubles, y compris la maison „Palahana“, et les lègues dans des proportions diverses à des oeuvres de bienfaisance, et fait certaines recommandations.

3. Testament du 15 mars 1795, dans lequel se référant à son testament de 1793, il institue de nouveau Der Stephanus son fils adoptif en ajoutant certaines conditions.

4. Enfin, codicille du 1er avril 1795, par lequel il lègue les loyers de la maison „Palahana“ à deux écoles de New-Nakhichevan exclusivement, afin qu'ils soient affectés à leur entretien et à condition que les dites écoles restent et demeurent pour toujours en mémoire de lui etc...

Թ. 3թ.— ... Der Stephanus ne pourrait sans doute se rendre possesseur de la maison „Palah-

ana" qu'après la mort de Masseh, or. depuis la mort de masseh qui est arrivée en 1799 ou en 1800, jusqu'à 1803, date à laquelle Der Stephanus est décédé à Constantinople dans le cours de son voyage, la dette provenant de la construction de la maison „Phalahana" n'avait pas encore été payée.

Թ. 4ա.— „Quant à votre père, c'est-à-dire au petit-fils de Der Stephanus, il est aisé de comprendre qu'il ne pouvait pas faire des démarches lors du vivant de son père, prêtre, et il est mort en Egypte avant même son père, il y a (քաղ է թողնված թիվը) ans.

Թ. 4բ.— „Il ne serait pas peut-être superflu d'ajouter aussi que la maison „Palahana" est une récompense amplement méritée de tant de peines et de sacrifices que Der Stephanus s'est imposés pour le bien de sa nation: il a voyagé pendant de longues années dans les pays les plus lointains, il a ramassé pour New-Nakhichévan et pour diverses institutions de bienfaisance des sommes considérables qu'il a fait parvenir à leurs destinations, sans recevoir aucune compensation. Des lettres de remerciements et d'autres papiers que nous avons, confirment ce que nous annonçons...

ՀԻՇՏԱԿԱՐԱՐՆ

Թ. 1ա.— Constantinople, le 7 Mai 1894.

Affaire: Testaments de Masseh Papajan.
(Ապա տրվում է նամակի տեքստը):

№ 378

ՖԵՐՄԱՆ

(Տաճկերեն)

Թերթերը՝ 1:— Պրակները՝ 1:— Մեծությունը՝ 51,5×31,9×0,01 սմ.:— Կարգը՝ սպիտակ դիմաց-կուն հաստ թուղթ:— Կազմ՝ չունի, գետնոված է սպիտակ շորից կարված մի տուպրակի մեջ:— Պահպանակներ՝ չունի:— Վիճակը՝ լավ:— Գրությունը՝ միապուն:— Դատարկ թղթերը՝ 1բ:— Տողերը՝ 4:— Գծումներ՝ չունի:— Գիրը՝ արաբերեն նախի տա-ներ: Զարդագրություն՝ չունի:— Գրիչը՝ անհայտ:— Պատվիրատուն՝ անհայտ:— Ժամանակը՝ 19-րդ դար:— Վայրը՝ Կոստանդնուպոլիս:— Մանրությունը՝ սույն ֆերմանը նկեր է ստացվել Ստամբուլից:

№ 377

ՖԵՐՄԱՆ

(Տաճկերեն)

Թերթերը՝ 1:— Պրակները՝ 1:— Մեծությունը՝ 81,5×57,1×0,01 սմ.:— Կարգը՝ սպիտակ դիմաց-

կուն հաստ թուղթ:— Կազմ՝ չունի, գետնոված է սպիտակ շորից կարված մի տուպրակի մեջ, որի վրա տաճկերեն գրված է «Միքայիլ էֆենդի»:— Պահպանակներ՝ չունի:— Վիճակը՝ լավ:— Գրությունը՝ միապուն:— Դատարկ թղթերը՝ 1բ:— Տողերը՝ 5:— Գծումներ՝ չունի:— Գիրը՝ արաբերեն նախի տա-ներ: Զարդագրություն՝ չունի, սակայն թղթի վե-րելում և կենտրոնում նկարված է իսլամական տուրան, քաղերն ու տատերը մեջմեջ բնդելով-ված: Տուրքայի չափերն են 18×23 սմ.:— Գրիչը՝ անհայտ:— Պատվիրատուն՝ անհայտ:— Ժաղկողը՝ անհայտ:— Ժամանակը՝ 19-րդ դար:— Վայրը՝ Կոս-տանդնուպոլիս:— Մանրությունը՝ սույն ֆերմանը նկեր է ստացվել Ստամբուլից:

№ 378

ՖԵՐՄԱՆ

(Տաճկերեն)

Թերթերը՝ 1:— Պրակները՝ 1:— Մեծությունը՝ 52×32,1×0,01 սմ.:— Կարգը՝ սպիտակ դիմաց-կուն հաստ թուղթ:— Կազմ՝ չունի, գետնոված է սպիտակ շորից կարված մի տուպրակի մեջ:— Պահպանակներ՝ չունի:— Վիճակը՝ լավ:— Գրությունը՝ միապուն:— Դատարկ թղթերը՝ 1բ:— Տողերը՝ 4:— Գծումներ՝ չունի:— Գիրը՝ արաբերեն նախի տա-ներ: Զարդագրություն՝ չունի:— Գրիչը՝ անհայտ:— Պատվիրատուն՝ անհայտ:— Ժամանակը՝ 19-րդ դար:— Վայրը՝ Կոստանդնուպոլիս:— Մանրությունը՝ սույն ֆերմանը նկեր է ստացվել Ստամբուլից:

№ 379

ՖԵՐՄԱՆ

(Տաճկերեն)

Թերթերը՝ 1:— Պրակները՝ 1:— Մեծությունը՝ 57,3×41×0,01 սմ.:— Կարգը՝ սպիտակ դիմաց-կուն հաստ թուղթ:— Կազմ՝ չունի, գետնոված է սպիտակ շորից կարված մի տուպրակի մեջ:— Պահպանակներ՝ չունի:— Վիճակը՝ լավ:— Գրությունը՝ միապուն:— Դատարկ թղթերը՝ 1բ:— Տողերը՝ 4:— Գծումներ՝ չունի:— Գիրը՝ արաբերեն նախի տա-ներ: Զարդագրություն՝ չունի:— Գրիչը՝ անհայտ:— Պատվիրատուն՝ անհայտ:— Ժամանակը՝ 19-րդ դար:— Վայրը՝ Կոստանդնուպոլիս:— Մանրությունը՝ սույն ֆերմանը նկեր է ստացվել Ստամբուլից:

ՀԻՇՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թ. 1բ.—Այստեղ կա 2 սմ. տրամագծով սի կնիք, սև թանաքով կնքված:

(Ծարունակելի)



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Վեհափառ Հայրապետի քարոզը Փրկչի հրաշափառ սուրբ Հարության տոնի առթիվ Մայր տաճարում	3
Փրկչի հրաշափառ և սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրա- պետի և բոլոր եկեղեցիների հոգևոր պետերի ու կրոնական այլ համայնքների և կազմակերպությունների ղեկավարների միջև փոխանակված ողջույնի հեռա- գրերն ու գրությունները	6
Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհավորական գիրը Փրկչի հրա- շափառ և սուրբ Հարության տոնի առթիվ՝ ուղղված Հայաստանյայց եկեղեցու նվիրապետական երեք Աթոռներին, թեմակալ բոլոր առաջնորդներին և եկե- ղեցական համայնքներին	9
Հայրապետական և պատարագ և քարոզ Մայր տաճարում՝ Փրկչի հրաշափառ Հա- րության տոնի առթիվ	11
Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի նամակը Վենետիկի Մխիթարյան ուխտի ընդհանուր արքանայր Պողոս վարդապետ Ամենայնին	13
ԸՆՈՐՀԶ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱՂՈՒՍՏՅԱՆ—Ընդհանուր ակնարկ Ավագ շաբաթ- վան վրա	15
Խաղաղության քրիստոնեական կոնֆերանսի աշխատանքային կոմիտեի նստաշրջանն ԱՄՆ-ում	21
Նորին Սրբություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի ուղերձը՝ ուղղված Խաղաղության քրիստոնեական կոնֆերանսի աշխատանքային կոմիտեի նըս- տաշրջանին	22
Խաղաղության, զինադադանի և ազգերի միջև արդար փոխհարաբերությունների հաստատմանը նվիրված կրոնական գործիչների համաշխարհային կոնֆերան- սի նախապատրաստական կոմիտեի ընդլայնված նիստը Մոսկվայում	24
Ապրիլյան եղևոնի 61-րդ տարելիցի նշումը Մայր Աթոռում	26
ՄԱՅՐ ԱԹՈՒՈՒՄ—Եկեղեցական բեմ. լուրեր	27
Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի առաջնորդական փոխանորդի նշա- նակում	30
Պրոֆ. Գերհարդ Բասարակի հարցազրույցը Նորին Սրբություն Ամենայն Հայոց Վազգեն Ա կաթողիկոսի հետ	31
ԶԱՎԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԶԻՆԶԻՆՅԱՆ—Մայր Աթոռ և Էջմիածնի նոր փառավոր հաջողությունը	33
Ա. Հ.—Եղիվարդ (Եղիշե պատրիարք Տերտերյան), «Հեթանոսաց Առաքյալը»	40
ԵՂԻԱ (ՏԵՄԻՐՇԻՊԱՇՅԱՆ)—Կեղրոնականի շրջանավարտ մը	48
ՍԱՄՎԵԼ ԱՆԹՈՍՅԱՆ—Հայ խոշորագույն լեզվաբանը	50
ԲԱԳՐԱՏ ՌԻՈՒԲԱՅԱՆ—Հայոց եկեղեցու Աղվանից թևի սկզբնավորման հարցը	57
Ցուցակ Մայր Աթոռ և Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի	62

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՄԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie, URSS

Հանձնված է արտատրության 26.4.1976 թ.: Ստորագրված է տպագրության 17.5.1976 թ.:
Տպագրական 4 մամուլ + 1 ներդիր, թուղթ 60×84/8, պատուիք 337

Մայր Աթոռ և Էջմիածնի տպարան, 1976 թ.